



« Դասը » եւ « լոյս » երկու համանուն բառեր են նախնական սրբազան լիգուին մէջ : Եւ առանց պատճառի չէ այդ : Լոյսը կերպով մը բնութեան խօսքն է : Եւ խօսքն ալ մտքին լոյսն է : Տիեզերքը մտիկ կ'ընէ եւ կը պատասխանէ : Յախտնական խօսակցութիւն մը կ'անցնի բնութեան եւ հոգիին միջեւ : Եսէ հոգին չձարգմանէր, չուստորէր ինչ որ միւսը կ'ըսէ, այդ չհասկցուած յմին բնութեանը չեղածի պէս պիտի ըլլար :

ժ. ՄԻՇԼԷ

Անահիտը՝ երկու երեք տարիէ ի վեր՝ աւելի գրական հաւաքածուներու տարիկան շարք մըն է քան իսկական ամսաթերթ մը : Այդպէս ընել պարտաւորուեցայ՝ մէկ քանի պատճառներով , որոց գլխաւորն այն է որ բաժանորդներէն երեք քառորդը երբէք չեն վճարեր իրենց բաժնեգինը Եթէ Անահիտի հրատարակութիւնը իբր գործ մը նկատէի , վաղուց պէտք էր դադարեցուցած ըլլայի . բայց ես զայն կը նկատեմ իբր մեր ժողովրդեան մտաւոր զարգացման նպաստելու միջոց մը , եւ ասոր համար՝ մտադիր եմ հրատարակել զայն որքան ատեն որ ուժերս թոյլ տան . արդ , այդ հրատարակումը շարունակել կարենալու համար , այս գիտաւորածեւ երեւման սիստեմը՝ գէթ առ այժմ՝ անհրաժեշտ է : Ուրախ եմ կարենալ յայտնելու որ Անահիտի բաժանորդագիրը կանոնաւորապէս տարուան սկիզբը վճարող սակաւաթիւ բաժանորդներէն ոչ մէկը այս մասին գանգատ յայտնած է դեռ . տրանջացողները միայն անոնք են որ կամ բնաւ չեն վճարեր կամ մէկ երկու տարի յետոյ կը վճարեն

Այս տարի , քիչ մը խանգարուած առողջութեանս պատճառաւ ստիպուած ըլլալով աշխատութիւններս նուազեցնել , Անահիտը պիտի հրատարակուի միայն երկու անգամ . առաջին միացեալ թիւը լոյս կը տեսնէ այժմ , միւսը պիտի երեւայ զեկտեմբերին :

Ա. Զ.

Բ Ա Յ Ո Ւ Ս Ծ Է



Ա Ն Ա Ն Ի Տ Ի

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԵԾՐԶԱՆԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՆԸ ՊԵՏԻ Է ԿԱՆԻՍԻԿ ՎՃԱՐՆԷԼ

Տ Ա Ր Ա Յ Ե Ա Ն

Հ Ա Յ Դ Ե Ր Զ Ս Կ Փ Ա Ր Ի Զ

45, Rue de Rochechouart, 45.

Կը յայտարարեք թէ Փարիզի կարեւոր դերձակներու մօտ իբր ձեւող ծառայելէ յետոյ , այս անգամ հաստատած է արանց եւ կանանց յատուկ դերձակութեան ճիւղ մը ուր կը գտնուին նաեւ մուսակներու ընտիր սեսակներ :

Կը խոստանայ թէ ապրանց ընտիր սեսակներով եւ թէ ճաշակաւոր ձեւաւորմանով , իր յաճախորդներուն ամենեկն դժուարահաճեցնեն իսկ լիովին գոհացնել :

ԱՆԱՏԻՏ

Հ Ա Ն Դ Է Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Ազգային, Գրական, Գեղարուեստական

Ժ. ՏԱՐԻ 1908

ՅՈՒՆՎ. - ՓԵՏՐ. - ՄԱՐՏ-ԱՊՐԻԼ

Թիւ 1-2-3-4

Գրական նորութիւններ

Առանել Սիւնեցիի Աղակցիբը, հրատարակութիւն
Հ. Պոտուրեանի. — Հ. Արսէն Ազգիկեանի
բարգմանութիւններ :



Աղակցիբը առաջին անգամ չէ որ կը սպառարուի 1721ին սպառարուած եւ 1799ին երկրորդ տպագրութիւն մը ունեցած է այդ գործը. բայց այդ կրկին տպագրութիւնները եկած անցած են առանց հետք ձգելու. Սիւնեցիի անունը անձանօթ էր մնացած. Հ. Զարգանէլեան իր « Հայ մատենագրութեան պատմութեան » մէջ հարկու կը յիշատակէ զայն. Այդ մտացումը անհրաժեշտ էր զարմանել : Առաքել Սիւնեցի մեր միջնադարեան գրականութեան առաջնակարգ գէմքերէն մին է : Եթէ Կ. Երզնկացի քնքուչ ու քաղցրաշունչ միտախօսկանն է, Առաքել Սիւնեցին վայրագ, մոլեռանդ, արհաւիրաշունչ հզօր քերթողն է վանական ցընորքներուն, տեսակ մը ռամիկ Նարեկացի, անձաշակ ու վայրենի, բայց նոյնքան ինքնատիպ, եւ իր լաւ կտորներուն մէջ՝ իսկական եւ ուժեղ բանաստեղծ :

Առաքել Սիւնեցի, բայց ի Աղակցիբէն, թողած է նաեւ բաւական բազմաթիւ քնարերգական քերթուածներ — որոնց հաւաքածուն ի մօտոյ պիտի հրատարակէ Հ. Պոտուրեան — ինչպէս եւ արձակ գրուածներ : Այս վերջիններուն մասին ո եւ է ծանօթութիւն չունիմ. բա-

նաստեղծութիւնները տեսայ վերջին անգամ վերջնական գտնուած միջոցիս. անոնցմէ մին, Տաղ վասն առաւ հոգեվարի զոր արդէն իսկ օրինակած էր 1898ին վերջնական գտնուած միջոցիս, հրատարակած եմ Անահիթի մէջ երկու տարի առաջ, այդ քերթուածին թէ՛ աննպատ, ջղուտ, գունաճոխ ոճը եւ թէ՛ ճարտար տաղաչափութիւնը ուշագրաւ թուած էին ինձի. կտորը կը կրէր « Առաքել » անունն իբր հեղինակ, բայց չէի գիտեր ո՞վ էր այդ Առաքելը. նոյնպէս հրատարակած եմ վասն ասնջանաց դժոխոց սարսաղ-ցեցիկ կտորը՝ առանց հեղինակը ճանչնալու : Հ. Պոտուրեանի չնորհիւ ստուգուեցաւ որ « Հոգեվարքի տաղ »ը Առաքել Սիւնեցիինն էր ինչպէս եւ « Վասն դժոխոց »ը որ Աղակցիբի մէջ հատուածն է :

Առաքել Սիւնեցիի կեանքին վրայ գեղ ոչինչ գիտենք : Այդ մասին ակղեկութիւն ստանալու համար՝ պէտք է սպասենք « տաղերու » հատորին, որուն սկիզբը Հ. Պոտուրեան մտադիր է դնել կենսագրական եւ քննական ընդարձակ յտաճարան մը, արդիւնք հին ձևագիրներու մէջ իր երկայն ու համբերատար խուզարկումներուն : Աղակցիբի հակիրճ նախաբանին մէջ, Հ. Պոտուրեան սաչափը միայն կ'ըսէ թէ Առաքել Սիւնեցին կ'ապրէր Փն. գարուն եւ Սիւնեաց նահանգին մետրապօլիտ-եպիսկոպոս էր :

Առաքել Սիւնեցիի գործը — Աղակցիբ, տաղեր, եւ՝ ապահովապէս՝ նաեւ արձակ գրութիւնները — զրեթէ բոլորն ալ իբր ներշնչման ազդիւր ունին աստուածաշնչական, միտախօսկան կամ խրատական նիւթի. բացառութիւն կազմող կտորները — ինչպէս քանի մը կարճ տաղեր՝ աստղագիտական աւանդութեանց տաղաչափում՝ սակաւաթիւ են : Հետաքրքիր ու սուր միտք մը եղած եւ ժամանակին հայ եւ օտար կրօնական մատենագրութեան բաւական բան կարգացած ըլլալ կը թուի : Իր գործերուն մէջ տարրերու բազմութիւնը, բարդութիւնը,

այլազանութիւնը նկատելի է : Աստուածաբանը, քարոզիչը, բարոյախօսը, քնարերգակը, դիւցազներգակը, աղօթողը, աշուղը իրար կը խառնուին հոն : Լեզուն ստորին գրաբարի եւ աշուղերէնի խառնուրդ մըն է : Դժբաղդաբար կը պակսի ճաշակը՝ որ այդ բոլոր բարգոլթեան մէջ ներդաշնակութիւն զնէր . Առաքել Սիւնեցի ահաւորապէս անհաւասար է . սողերուն ստուար մասը ձանձրանալի ու տափակ խրատաբանութեամբ մը տոգորուած է, Աղաւզիտի բերք քաւորքը անընթեռնի է, — թէպէտ այդ ամենէն ձանձրանալի կտորներուն մէջ ալ՝ տեղ տեղ կը պատահին ուժեղ սողեր եւ հատուածներ : Իր մեծ թերութիւններն են երկարաբանութիւն, կրկնութիւններ, անճիշդ բացատրութիւններ, գէշ կազմուած ֆրազներ : Կրկնութեանց եւ աւելորդաբանութեանց մասամբ պատճառ եղած է այբուբենական սաղաշափութիւնը զոր Սիւնեցի կը սիրէ յաճախ գործածել, եւ որ կը ստիպէ զինքը յաճախ մեր երկարածիկ այբուբենին բոլոր տառերովն սկսող տուններ շարելու համար՝ արդէն ըսուածը յեղյեղել կամ անխմատ ու թոյլ յաւելուածներ կարկտել : Ատի սակայն մին է միայն այդ թերութիւնը բացատրող պատճառներէն . գլխաւորը՝ ճաշակի պակասը, գրական նուրբ կրթութեան մը բացակայութիւնն է . պարզ սաղաշափութեամբ գրուած սողերուն մէջ ալ գրեթէ միշտ նոյն թերութիւնը կը նկատուի :

Այս բոլոր բացասական կողմերովն հանդերձ, ինչ որ կայ Սիւնեցիին մէջ լաւ . այսինքն վեց եօթը տաղ եւ Աղաւզիտի մէկ երրորդը, բաւական է իրեն տալու շատ փայլուն ու առանձնայատուկ տեղ մը մեր հին գրականութեան մէջ : Տաղերուն մէջ ամենէն գեղեցիկներէն են, բաց ի ոգեւար հոգւոյն քստմեկի ուղեւորութիւնը երգող քերթուածէն որ Անանիոսի մէջ երեւցաւ, միստիքական սիրերդ մը առ « Բազմալին Յիսուս » զոր Հ. Պոտուրեան 1906ին հրատարակեց Բազմալիւսի մէջ, երկու երեք ներքող Աստուածածնայ, ու Վասն փառաց արքոցն տիտղոսով քերթուած մը : Առ քաղձալին Յիսուս տաղը, դժբաղդաբար՝ չափազանց երկայն, զմայլելի տուններ կը պարունակէ, ուր բանաստեղծը՝ շատ ինքնատիպ կերպով ներշնչու չուելով Երգ Երգոցէն՝ քնարերգական ամենափափուկ գեղեցկութեանց կը բարձրանայ .

. . . Դու ի վերայ ծաղկեալ լերանց
Անուշահոտ խնկաբերաց՝
Ճառագայթես լուսով փառաց,
Զիւնատեսիլ սպիտակացած :

. . . Թէ տեսուցեսն քում հանգիստիմ,
Որպէս շուշան լուսով ծաղկիմ,
Եւ որպէս հուր սիրով վառիմ,
Փափաքելով քեզ նրադիմ :

. . . Կամն ու խորիսի ի բոյժ շըրթանց

Բրդիեալ բաշխես պասքեալ անձանց .
Դու ճառագայթ արեգականց,
Զիս արացես լուսամափանց :

. . . Յօղ արտասուացս իմ սաստկագին
Համայն զերկիր հեղեղեցին .
Յայց ինձ ըզդէմըս բո կըրկին
Ահեղակերպ եւ լուսածին :

Աստուածածնայ « գովքերը » շատ անհաւասար են . նիւթը՝ հազար անգամ ծամծմուած, հասարակ տեղիք դարձած նիւթերէն է այդ աւտեններու եկեղեցական քերթուածներուն համար . բայց մերթ ինչ քնքուշ տողեր կը գըտնենք Սիւնեցիին այդ շարքին մէջ, ինչ աղւոր պատկերներ՝ նրբօրէն արտայայտուած՝ դաշնաթաւ տողերու մէջ .

. . . Լամբար լուսածին,
Զքեզ վառեաց Հոգին,
Զարեգակն անշէջ ծագեցեր հոգոյն ի բանտին :

. . . Տուփ ես լուսափայլ խրեկին .
Ըզքեզ արծարծեաց Հոգին .
Հոտով բո լըցաւ երկին,
Անճառ լուսոյ մայր Սուրբ Կոյս :

Սիւնեցիի սողերուն յարաբերաբար ամենէն կատարեալ ու փողփողուն կտորը՝ « Վասն փառաց սրբոց » քերթուածն է . հոտ՝ Սիւնեցի ապացուցած է որ գիտէր այնքան թարմ ու պայծառ գոյներ շողացնել սուրբերուն երանութիւնը նկարելու համար որքան որ մոռալ ու արհաւիրալից գոյներ էր ստեղծած՝ մեղաւորներուն անձկութիւնը, սարսափը կամ յաւիտենական տանջանքներուն զարհուրանքը պատկերացնելու համար : Այդ տաղը, եթէ չունենար քանի մը թոյլ տողեր եւ կրկնաբան աւելորդ տուններ, իր տեսակին մէջ հրաշակերտ մը պիտի կարենար նկատուիլ . կը զնեմ ստորեւ գեղեցկագոյն տուններ .

. . . Բանին գերեզմանք,
Յառնն հողացեալ մարմինք, զինչ որ մեռեալ է :

Գունով զարդարին,
Արեգակնակերպ մարմնով՝ որ անցնելոյ չէ :

Դասք դասք պրտակին
Այնպէս զանազան փառօք՝ որ պատմելոյ չէ :

Երկիր նորոգի,
Որպէս գծին սպիտակ գառնայ՝ զի Տէր գալոց է :

Զարդարին երկինք,
Եօթնասրտակ լոյս դառնան՝ քան զոր հիմայ է :

Երեսեալ յերկնից

Ճառագայթածե սուրբ Խաչն՝ զայլ լոյս ամփոփէ :

Ընդ Խաչին ճագմանն
Զօրքըն հրեղինացն հոսին , անհուն(1) բանա՛կ է :

Թիժուներն(2) Առուցիս
Մարմնով ընդ հրեշտակս խառնին՝ Է այլ բաժնելոյ(3) չէ :

Ժառանգեն ըզկեանս
Նոյն անմահացեալ մարմնովն , Է այլ մեռնելոյ չէ :

Ի ձայն ահագին
Հողմն ամպախաղաց հրնչմամբ՝ ԱՅուրն իջանէ :

Լուսերամ դասիք
Մարդիկ ընդ հրեշտակս Թըռչին , Է այլ վայր գալոյ չէ :

Խայտալով հըրճուին ,
Երկնից Արքային սպասեն , այնմ որ գալոց է :

Ծագի ի վերուստ
Անճառ ճառագայթն Աստուած՝ որ պատմելոյ չէ :

Կառք լուսեղինացն
Հազար հազարաց յայտնին , որ Թիւ գալոյ չէ :

Հաստատին ի յօդս
ԱՅուրքն փառաց լուսովն , աշխարհ տեսանէ :

Ձայն քաղցրազրարծ
Հրնչին ի զուարմնոց դասէն՝ զմայլումն որոց է :

Ղամբարքըն կուսից
Արեգակնապէս վառին , Է այլ անցնելոյ չէ :

Ճառագայթք լուսոյ
Հոսին ի մարմնոյ նոցա , զինչ արեգակնէ :

... Յաժող ծաղկածին
Բազմեալ հանգիցեն մարմնով՝ զոր միտք չըզկայէ :

Նըստեալ ընդ աջմէ
Երկնից Արքային փառօք՝ որ պատմելոյ չէ :

Շատ են ու անհունք՝
Որպէս զփոշի որ շողայ՝ ընտրեալք ի Հօրէ :

Որպէս եւ զաստեղս
Փայլին ի կանառս երկնից՝ որ ընկնելոյ չէ :

... Ձահք անշիջելիք(4),
Յայնմ առագաստին վառին՝ որ անցնելոյ չէ :

(1) Ձեռ. յանհուն . — Թերեւս՝ յանհուն բանակէ :
(2) Ձեռ. քիթղունկն : (3) Ձեռ. բաժանելոյ :
(4) Ձեռ. անժիջանելիք :

... Ռամիկ հողեղէնք
Թագսուորունեան հասնին որ մեզ գուման չէ :
... Տարեալ յօժեւանս
Ի տուն հայրական յերկինս՝ բազմեալ հանգուցէ :
... Յանկալի սեղան
Պէսպէս բարուձեամբ լըցեալ՝ նոցա պատրաստէ :
Իիւծ այն սեղանոյն
Չէ մեզ գիտելի այսօր՝ Թէ ո՛րպէս իցէ :
Փափկացեալ յագին
Յայն աստուածային սեղանն՝ որ անցնելոյ չէ :
Քրիստոսի Փրկչին
Որ քան ըզհրեշտակս ի վեր՝ զմարդիկ կու դասէ ,
Տամք վառք Անեղին ,
Եին որ զհողոյ ստեղծեալքս՝ այսպէս պըսակէ :

Սիւնեցիի էական գործը սակայն , Աղաւ-
զիտին է : Հոն կը գտնենք տաղերուն մէջ յայտ-
նուած բոլոր յատկութիւններն ու թերութիւն-
ները , եւ աւելին : Այդ գործը մեր նախնեացմէ
մնացած միակ երկարաշունչ վիպաքերթուածն է՝
մարդկային գրականութեան ամենէն մեծ նիւ-
թերէն մէկուն վրայ գրուած , եւ որ ունի որոշ
ինքնատուութիւն եւ իր մէկ քանի մասերուն
մէջ գրական մեծ գեղեցկութիւններ . Շնորհալիի
Յիսուս Որդին կամ Վիպասանութիւնը , Թլկու-
րանցիի Արարածքը , Առաքել Բաղիշեցիի Յո-
վասափոռ պատմութիւնը եւ ասոնց նման մէկ
քանի սակաւութիւ գործերը զոր այս ճիւղին
մէջ արտադրած են մեր նախնիք , շատ վար կը
մնան Աղաւզիտին , որուն հետ կրնայ բաղդատ-
ուիլ միայն Ֆարսանի Աստուած , թէպէտ այս
վերջինն ալ՝ բարոյական ու գեղեցկագիտա-
կան սեռակէտով՝ Աղաւզիտին բարձրութեանը
չի հասնիր : Յայտնի է որ Սիւնեցի այդ գործը
գրելու համար օգտուած պէտք է ըլլայ՝ աստ-
ուածաբանական տարրերուն մէջ՝ օտար եւ հայ
եկեղեցական մատենագրութիւնէն , բայց գործին
զուտ բանաստեղծական , երեւակայական , վի-
պական մասին մէջ՝ որ կարեւորագոյնն է՝ իր
անձնական ներշնչումէն հոնա՛մ ըլլալու է ամէն
բան : Իր քերթողական քմայքը , մարդուն անկ-
ման հեքեաթին թելադրիչ ու ճոխ նիւթէն հրա-
պուրուած , զայն արտայայտել ուղղած է բոլոր
իր կրցած հնարքներովը : Թէ իր ձեռնարկը ըմ-
բռնած է ոչ միայն իրր եկեղեցւոյ մարդ , այլ
եւ՝ մանաւանդ՝ իբր բանաստեղծ , ատիկա որոշ
կը յայտնուի սա հանգամանքէն որ միեւնոյն
քերթուածը երեք անգամ չարադրած է , իւրա-
քանչիւր անգամ դժգոհ մնալով երեւան եկած
արդիւնքէն՝ վերսկսած է գործը նոր ձևով : Հ-
Պատուրեան հրատարակած է երեք քերթուած-
ներն ալ ետեւէ ետեւ . Աղաւզիտի Գ.ը , որ ա-
ռաջին փորձն է , Աղաւզիտի Բ.ը , որ կրկնորդ

փորձն է, աւելի համառօտ են քան Աղաւգիրք
 Ա. որ վերջինն ու վերջնականն է, եւ ունին
 իրենց յատուկ յատակագիծ եւ մասնաւոր շա-
 րագրութիւն. սուս մը չկայ զոր նախորդ երկու
 փորձերէն նոյնութեամբ առած ու պահած ըլլայ
 վերջնական ձեւին մէջ. առաջին շարագրու-
 թիւնները սրբագրելով չէ որ կազմած է վեր-
 ջինը. նորէն գրած է:

Պիտի նախընտրելի որ Հ. Պատուրեան, փո-
 խանակ երեք Աղաւգիրքերը ետեւէ ետեւ հրա-
 տարակելու, (ինչ որ կրնայ երեք մասով գործի
 մը սովաւորութիւնը թողուլ), հրատարակած
 ըլլաք իբր Սիւնեցոյ քերթուածը՝ միմիայն
 ընդարձակ ու վերջնական Աղաւգիրք, իսկ միւս
 երկուքը տարբեր տառով նոյնիւրու մէջ: Գրա-
 կան հասարակութիւնը պէտք է միայն կարգայ
 վերջնական շարագրութիւնը Աղաւգիրքին. միւս
 երկուքը գրագէտներու եւ բանասէրներու հե-
 տաբերութեանն ու քննութեանը միայն կրնան
 ծառայել:

Աղաւգիրքը (կը խօսիմ միայն վերջնական
 շարագրութեան վրայ) ոչ միայն ունի այն բոլոր
 թերութիւնները զոր նշանակեցի վերեւ Սիւնե-
 ցիկ տաղերուն վրայ խօսելով, այլ եւ յատու-
 կագծի խառնաշփոթութեան, բազկացոյցիչ
 տարբերու արտակարգ անհամահմտութեան ծա-
 նըր պակասութիւնները: Կործը շատ լաւ կը
 սկսի. առաջին գլխուն մէջ բանաստեղծը կ'երգէ
 աշխարհի եւ Ազամ ու Եւային ստեղծագործու-
 թիւնը, յետոյ կուգայ գրայտին նկարագրու-
 թիւնը եւ Ազամայ երանութեան արտայայտու-
 թիւնը, յետոյ՝ պատմութիւնը դաին զոր նա-
 խանձակէզ Սատանն ու իր հետեւորդները կը
 սարքէին Ազամն ի կորուստ մղելու համար,
 յետոյ՝ օձի կերպարանք մտած Ստանին հան-
 գիպումը Եւային հետ եւ այս վեր՝ այն խոր-
 ուիլը, յետոյ՝ Ազամայ անկումը Եւայի խօսքե-
 րուն ազգեցութեամբ: Մինչեւ հոս, իսկական
 վերգերգութիւն մըն է, ուր գործողութիւն մը
 կը սկսի ու կ'ընթանայ, հետզհետէ բարգանա-
 լով, դէպ ի եղբրական վախճանը. մինչեւ հոգ,
 որքան ալ պատմութեամբը ունենայ դանդաղու-
 թիւններ, կրկնութիւններ, աւելորդութիւններ,
 բանաստեղծի մը գործն է, որ իր նիւթը աչքին
 առջեւ ունենալով կը քալէ շիտակ. բայց այդ-
 տեղ յանկարծ յատակագծի շփոթութիւնը կը
 սկսի. Ազամ ու Եւա կը սկսին ողբալ, եւ իրենց
 աղ ողբերուն մէջ կը նախատեսեն մարմնէն
 բաժնուող հոգիին անձկութիւնը հոգեվարքի օր-
 ուան մէջ եւ անոր պայքարը զեւերուն հետ
 (տեսակ մը վարիանթ Անահիթի մէջ տպուած
 տաղին), յետոյ՝ վերջին գառաստանին տեսարանը
 եւ Դժոխքին շարչարանքներուն ամբողջական
 ու մանրամասն պատկերը: Եւ այդ բոլորին մէջ
 կը տեսնեն ոչ թէ զիբերը երկուքը միայն, այլ
 մանաւանդ իրենցմէ բլխելիք բոլոր անհամար
 մարդկային սերունդները: Իսկապէս՝ բանաս-
 տեղծը ինքն է որ այդտեղ՝ Ազամի եւ Եւայի
 բերնով՝ կ'ողբայ, կը սարսափի, կը զառանցէ՝
 խորհելով հոգեվարքի, դատաստանի ու դժոխքի

արձախընդունելու: Ազամայ ու Եւայի բուն ողբը,
 ինչպէս եւ մեղքին յետոյ՝ Աստուծոյ եւ նախա-
 մային խօսակցութիւնը՝ որոնք բնականօրէն կը
 յաջորդէ այդ ողբը, Աղաւգիրքին մէջ կը գտնուի
 միջնագրան վանականի այս մղձաւանջային
 անսխլութէն շատ յետոյ՝ շարին իսկութեան, բար-
 ւոյն ցանկութեան, մարգուն Աստուծոյ պատ-
 կերը ըլլալուն նուիրուած աստուածաբանական
 գլուխներէ ետքը. եւ այնուհետեւ՝ արգէն բա-
 նաստեղծը, վիպագը իր նիւթին իրական շաւիղը
 կը կորսնցնէ, եւ կը մոլորի աստուածաբանա-
 կան-խրատական անվերջ եւ անսխլութեան երկար
 ու կրկնաբան խորհրդածութիւններու մէջ, —
 Վասն զանազան խորհրդոց կողմէն որ առաջ Ա-
 զամայ երեք երկար գլուխ, Թե վասն է՞ր ի
 նորոյ ետեւի՞ զԱզամ եւ ոչ յայն կիրքոց, Վասն
 սարեց որ մարսիս եւ Աւարչիս, Վասն հաւնե-
 մասնութեան նախնոյն ընդ Տեառն, եւ դարձեալ
 (ա.ա.գ) Վասն կողմէն խորհրդոց . . . Այլ նոր
 խորհուրդ վասն կողմէն (ա.ա. ա.ս կողմէն ան-
 տանելիութիւնը . . .), Դարձեալ խորհուրդ մեծ
 ՚ւսնէրնին սուրբ կրկնելոյ գերեզնեսին, Դարձ-
 եալ վասն մահու եւ յարութեան Տեառն որ ի
 մեզ խորհրդածի, եւն:

Աստուածաբանութեան այդ հեղեղին մէջ,
 ոչ միայն վէպը կը կորսուի, այլ եւ բանաս-
 տեղծին տաղանդն ալ, որ այլ եւս ուրիշ բան
 չ'ընէր այլ վանական սկզբնապիւծ իմաստակա-
 թեան այդ բոլոր անամէջ հասարակ-տեղիքները
 անյագ անործակով մը տաղաչափութեն յեղեղել
 ու հազիւ մերթ ընդ մերթ՝ մէկ քանի յաջող
 առգերու, սիրուն պատկերներու, փայլուն հատ-
 ուածներու մէջ ինքզինքը կը գտնէ. ինչպէս
 կողմէն նուիրուած ԹԸ. գլխուն եւ մանաւանդ
 Վասն Չարին գլխուն՝ մէկ քանի տուններուն
 մէջ:

Իրական Աղաւգիրքը կ'ամփոփուի ուրեմն՝
 ըստ իս՝ վեց եօթ գլուխներու մէջ. բայց տա-
 զանգը որ ատոնց մէջ կը յայտնուի, բուսական
 է Առաքել Սիւնեցիին անունը անկորուստ պա-
 հելու: Առաջին գլուխը կը սկսի սքանչելի տո-
 ղերով որ արարչագործութիւնը կ'երգեն.

- Նախ քան զկոյտըս ամենքեան՝
 - Երրորդութիւնն անկրկան,
 - Անուր, աներբ եւ անասիւան.
 - Նա գոյացոյց գէթ ամենայն:
-
- Նախ յոչէից արար գիւղին,
 - Երկրորդ՝ ըզտերս համօրէն,
 - Երրորդ՝ զգոյակերն լուսելէն,
 - Չորրորդ՝ զաարերբըս հիւսնելէն:
-
- Երկիրս անայտ եր' անպարստ,
 - Շուրն ի վերայ նորին տապաստ,
 - Շողմն ի վերայ ջրոյն ըզգաստ,
 - Շուրնն հոյժոյն կայր անագաստ:
-
- Վերացուցեալ զշուրն ի ծովէն
 - Արար զկամարն ջրեղէն,

Երբց զատակըս հողելէն,
Ի բնակութիւն մեզ համօրէն :

Եստեղծ եւ զդրախաղն բարձրագոյն,
Ծառս եւ ծաղկունս ի նմա անհուն,
Պէտ պէտ կերպիւ լուսափայլուն,
Զի բնակութիւն լիցի մարդոյն :

Ծաղկեաց զերկին լուսաւորօք,
Արեգակամբ եւ աստեղօք,
Զերեսս երկրի ելից ծաղկօք,
Զի ցնձացուք մեք հրճուանօք :

Դժբաղդաբար այդ գլխուն շարունակու-
թիւնը թույլ է . վիպերգուն՝ յանկարծ՝ քերթո-
ղական բարձունքէն տիրացուական ճահիճին մէջ
կը թաւալի :

Երկրորդ գլուխը, գովք դրախտին գեղեց-
կութեան եւ Ադամայ երանութեան, զմայլելի
տուներ կը պարունակէ, եւ՝ եթէ բանաստեղծը
չնշած ըլլար այդ գլխուն կէտը որ կրկնութիւն
է կամ թոյլ, գոհար մը պիտի ըլլար այդ կտորը:
Տեսէք սակայն ի՞նչ շողշողուն գոյներ է գտած
Սրենեցին՝ նկարելու համար փառքը Դրախտին
ու զեռ մաքուր նախամարդուն .

Եր փառք դրախտին անպատմելի,
Զքնաղատես եւ սխրալի,
Ծաղկունքն տայր փայլըս փայլի,
Արեգական նման եւ լուսնի :

Դէմքն Ադամայ փառօք ծաղկեալ,
Եւ որպէս լոյս հառապայմեալ .
Յոլմունք լուսոյ անտի հոսեալ
Եւ որպէս հուր փայլատակեալ :

... Զինչ հայկի պայծառ փայլեր,
Աստուած ի նմա միշտ երեսեր,
Եւ հառապայմ լուսոյն հոսեր,
Զանձամբ իւրով փայլատակեր :

Մարմնով զերմ զակն էր լուսընկալ,
Եւ ձախանցիկ լուսով ծաղկեալ .
Միտքն ու հոգին պայծառացեալ,
Եւ ինքն ընդ փառս իւր հիացեալ :

... Աչօքն Աստուած հայեալ հրըճուէր,
Զծայն ականջօք առեալ զմայլեր,
Յանմահութեան հոտն որ բուրբեր,
Սիրտըն բերկրեալ՝ անձամբ քրմբրեր :

... Անդ լոյս սիրոյն հառապայմեր,
Եւ խընդումեամբ փառքն փայլեր .
Ուրախութիւն յարգահոսեր
Եւ հրըճուանաց ձայնըն հրնչեր :

Երրորդ գլուխը Ադամգիրտին էական հատ-

ուածն է եւ թէպէտ՝ դարձեալ՝ պակասաւոր՝
կը պարունակէ տարօրինակ գեղեցկութիւններ :
Առաջին մասին մէջ կը տեսնենք Սատանը, որ՝
Ադամայ փառքն ու երանութիւնը նկատելով
նախանձէ գալարուած՝ ի ժողով կը գումարէ
իւր հեռեւորդ բոլոր դեւերը, որպէս զի միջոց
մը խորհին Մարդը ի կորուստ մատնելու . իր
հրամանով « երկաթէ հրահալոց » ին մէջ կը բե-
րեն կը նետեն « չարին բոլոր արկած » ները,
ու կը կազմեն « չարին պատկերը », այսինքն
գործիքը, մեքենայութիւնը որով պիտի կործա-
նեն Ադամը . յետոյ կը յօրինեն մահաբեր Գինին,
« դառն եւ մրուր խաւարային » ըմպելին, որ
չարին բոլոր ազդեցութիւնները իր մէջ կը կեդ-
րոնացնէ եւ թափն համեմատ որով պիտի մատ-
ուակուի՝ իր կորստաբեր յատկութիւններէն
այս կամ այն պիտի փոխանցէ Մարդուն : Այս
ամբողջ մասին մէջ բանաստեղծին երեւակայու-
թիւնը աշխոյժ ու ստեղծագործ կը յայանուի,
բայց արտայայտութիւնը շատ խառնակ, անհա-
ւասար, անձաշակ ու մերթ մուրթ է, բաց ի մէկ
քանի հատուածներէ ուր ոճը սուր, տողերը ա-
մուր ու յստակ, պատկերները ինքնատիպ են :
Յետոյ, կը տեսնենք Սատանը որ օձի կերպա-
բանք առած՝ կուգայ, իր բոլոր թոյներովը զին-
ուած՝ Եւային կը մօտենայ : Պօսակցութիւնը
Եւայի հետ՝ բաւական ճարտար կերպով յղաց-
ուած ու գործադրուած է : Յայտը կտորը ուր
Եւա, խարուելով, արգիլուած պտուղը կ'ուտէ
ու ուտելէն յետոյ զգալով իր սխախ ու ան-
կուճը՝ կը տառապի, շատ կենդանի է ու հոգը
(եւ բանաստեղծը « արգիլուած պտուղ » ին պատ-
կերին տակ թաքնուած խորհրդանշանը, կու-
սական անմեղութեան քայքայումը՝ ցանկու-
թեան հրայրքին տակ, իրապաշտ յանդգնու-
թեամբ մը որոշ ցոյց տալ ուզած ըլլալ կը թուի) .

Առեալ զպրտուղն յիւրում ձեռին
Դուայր մարմնով ստեալ հոգին .
Զի գուշակչո բնութիւն նարին
Զկորուստ անձին իւր դաւնագին :

Բացեալ գրերանքն դրժնային՝
Ծամեաց ըզթիւնքն օձի լեզուին .
Զմաղձըն մահու որ ի պըտղին
Նա կըլանէր բոլորովին :

Յանկարծ լինէր ի հիացման,
Ետես զոր ոչ կարծէր յինքեան .
Խլեցին զլուսոյն ըզպատմուճան,
Լինէր խաւար գիշերանման :

Կայր մորմորմամբ ի կըսկըման,
Դ' աղալակէր հառաչանայն,
Սաստիկ գոչէր որպէս զանբան,
Եւ ճիշ բառնայր մոլեգեական :

Նա զարտասուս սաստիկ հոսեր,

Լայով միշտ զանձն իւր հեղեղէր ,
Որպէս սգաւոր զհերսըն փետէր ,
Եւ արեամբ զանձն իւր շաղախէր :

Որպէս մոլեալ ինչ կատաղէր ,
Որ եւ ըզմիս բազկին ուտէր ,
Քունըն հատեալ՝ հանգիստ չունէր ,
Յաղաղակէն ոչ դադարէր :

Յերկինս հայել՝ աչքըն մըններ ,
Դիտել զերկիր՝ միշտ խաւարէր .
Յետ եւ յառաջ տարակուսէր ,
Յաջ եւ յահեակ միշտ երբէրէր :

*Իսկ տեսարանը Ադամի եւ Եւայի միջեւ ,
ուր Եւա Ադամը իր անկմանը մէջ քաշելու ,
իրեն բաղդակից ընելու համար հարկ եղած խօս-
քերը կը գտնէ խորապէս կանացի նրբամտու-
թեամբ մը , զմայլելի է , եւ ապշեցուցիչ՝ այդ
բարբարոս վանականին մօտ .*

Եկն առ Ադամ որպէս օտար ,
Մերկ , խայտառակ , անասնաբար .
Ադամ տեսեալ զնա զարմանայր
Թէ զի՞նչ եղեւ այդքմ պատճառ :

Ասաց Թէ՛ Զի՛ կուլաս դու , կի՛ն ,
Զի՞ հառաչես ողորմագին .
Այդ ի՞նչ չարիք որ քեզ եկին ,
Ո՛ւր է քո լոյս պատմութեանին :

« . . . Զի կողակիցն իմ ցանկալին
Լուսով ծածկեալ էր ի մարմին .
Դու գարշելի խաւարային ,
Դէմք քո դըժնի՛կ ամենեւին : »

. . . Ասէ Թէ՛ Զիս Զարըն խաբեաց
Պտղով ճառոյն զոր Տէրն յայտնեաց .
Առի ձեռօք իմ չորացած
Եւ մերկացայ յանճառ փառաց :

Բայց Թէ դու սէր ունիս ընդ իս՝
Փութով լրսէ քո կողակցիս .
Առ կեր եւ դու զպրտուղս ընդ իս ,
Զի մնամ ընդ քեզ ես ի դրախտիս :

Թէ կայր քո սէր ընդ իս նախկին ,
Այդ սէրն այսօր երեսեցին .
Վասըն սիրոյ քո Արարչին
Յիշեա՛ եւ զվեր սէրն առաջին :

... Ե՛ս որ դիպայ այս փորձութեան՝
Մեռեալ ի հող դառնամ անձամբ ,
Հոգիս տանջի անանց մահուամբ :
Թող դու մընա՛ս յայդ խնդութեան :»

... «— Մի՛ մեղադրեր զիս դու , ո՛վ կին,
Ես նոյն սիրովն եմ առաջին ,
Բայց Թէ ուտեմ զպրտուղ ճառին ,
Ես քեզ նրման պատուհասիմ :

. . . Զի՞նչ արասցուք ցաւոց քոյին .
Մոլորելոյդ ընդ բանասարկուին ,
Քեզ բըժըշկել չէ հրնարին ,
Զի նենգեցիր դու Անհասին :

Դու ըզբըժիշկըն խոցեցեր ,
Եւ զդեղ ցաւոցդ հեղեալ հոսեր ,
Դու որ զԱստուած դառնացուցեր՝
Զատ ի նմանէ այլ ո՛վ է դձող : »

Ուրախացաւ կինն ի հոգին ,
Զի ետ սիրով զպատասխանին .
Հընար գըտաւ Թըշուառ հոգին՝
Սիրով խաբել զմարդն առաջին :

... «— Պատիժ չարեաց պատուհասին
Զոր խոստացաւ Տէրն յանցողին ,
Ես նախ ստեցի պատուիրանին ,
Պատուհասն այն էր զինչ եկին :

« Ես նենգեցի Տէրն բանի ,
Ցիս դիպաւ նետ պատուհասին .
Զոր ինչ պատիժ կայր յանցողին՝
Գալոց չարն այս էր զինչ եկին :

« Մինն էր պատուէրըն հրամանին
Եւ մին պատիժ յանցաւորին .
Ես որ մարտեայ լնդ հրամանին՝
Ցիս դիպաւ նետ պատուհասին :

« Ձես հակառակ դու Արարչին
Որպէս եւ ես մեղայ նախկին .
Թէ դու սիրով ուտես վասն իմ ,
Իմ նենգութեան մեղքըն ջընջին :

« Զիս վասըն քո յօրինեաց Տէր ,
Զի՛նդ քեզ ունի մեծ ՚ւ անճառ սէր .
Թէ դու ուտես՝ զմեղս քո չյիշէ ,
Եւ վասըն քո զիս չարսարսէ :

... Թէ դու զփրկելն իմ կու կամիս ,
Սիրով ականջ դընես բանիս .
Ա՛ռ , ճաշակեա՛ եւ դու ընդ իս ,
Զի մնամ ընդ քեզ ես ի դրախտիս :»

« Բայց Թէ հանէ նա զիս միայն ,
Քեզ ո՛վ իցէ այլ օգնական .
Ահա ես կամ ՚ի կրկըծման
Եւ յարտաուուս հառաչածայն :»

Խալբալեցաւ միտքն Ադամայ
Յորժամ ետես խաբեալ զԵւա ,

Կամէր լըսել բանից նորա ,
Ջի ունէր սէր մեծ ընդ նրմա :

Տարակուսեալ լինէր յանձին
Կրնո՞ջ լըսել Յէ Արարչին .
Խելքն ընդ աչացն գընացին ,
Եթող զԱստուած եւ ոչ ըզկին :

... Քանզի էր կէս մարմնոյն մեռեալ ,
Կիտոյն ապրիլ ոչ էր հրնար .
Վասն այն կերան անասնաբար ,
Ջի գլուխն ոտից էր խանարհեալ :

Առեալ եւ նա զկայծըն հըրոյ ,
Ջպըտող մահուն բորբոքելոյ ,
Ետ ի բերան բաղձմամբ յուտոյ ,
Վասն Եւայի ազատելոյ :

Տեսարանը աւելի երկար է քան ինչ որ յիշատակեցի . դուրս ձգեցի այն մասերը որ թոյլ են կամ կոշտ :

Աստուծոյ եւ նախամոլին միջիւ տեսարանը՝ անկուռն յետոյ , ոչինչ ունի ուշադրաւ . աստուածաշնչական հեքիաթին քիչ մը երկարաբան տաղաչափումն է . եւ ցաւալին այն է որ Սիւնեցին , չբաւականանալով ԺԱ. գլուխով ուր Աստուած պէտք եղածը կ'ըսէ Ադամին ու Եւային , ԺԲ. գլուխ մըն ալ զրած է ուր միեւնոյն բանը կը կրկնէ՝ աստուածաբանական ձանձրանալի մանրախուզութիւններով , եւ ԺԳ. գլուխ մը ուր Աստուած կ'ուզէ օձին ճառ մը անհանգուրծելի երկարութեամբ եւ անզուգական իմաստակութեամբ փըրցուողոյ . ԺԴ. եւ ԺԵ. գլուխները որ կը հետեւին , կը պարունակեն Ադամայ ու Եւայի ողբերը , ահաւելի երկարութեամբ եւ աւելորդաբանութիւններով ծանրաբեռն , բայց ի փոքրիկ կտորէ մը , զոր բանաստեղծը իբր առանձին քերթուած՝ « Ողբ Ադամայ » գրած է (այդ կտորին տնազլուխ տողերը Տէր Առաքեալ կը կապեն) եւ որ հիանալի կտոր մըն է . միակը Ադամայի մէջ որ կատարեալ է .

Տեղիք չունիմ ես հանգըստեան
Եւ ոչ պատճառ ինչ խընդունեան .
Սիրտ իմ պահէ գիս յերերման
Եւ յարտասուս հառաչածայն :

Եթէ Թաքչիմ ի տան սըրտիս ,
Ոչ հանդարտի առ իս հոգիս .
Եւ Յէ յայտնեմ զխորհուրդս որ յիս՝
Ձտանի աշխարհս ըզմայն գուծիս :

Բամեալ մասամբ հոգեկանիս
Եւ անդամօք բոլոր մարմնիս
Ողբամ ո՛ղբս հառաչալիս
Ջոր վայելէ հանուրց ազգիս :

Այլ իմ հեղու զհոսանս գետոց ,

Սիրտ իմ բըղխէ զվրասկս ցաւոց ,
Մըտօք տանջիմ ի խորհըրդոց ,
Անձամբ վառեալ որպէս բզրոց :

Ռամիկ մատունքս իմ ցաւագին
Չարեաց պըտուղս ինձ բաղեցին .
Եւ ատամունքս իմ դըմնային
Չմաղձըս մահու նաշակեցին :

Անձ իմ ինձ ամպ եղեւ չարեաց ,
Չանձրեւ ցաւոց ինձ հելեղեաց .
Չամարք ցօղոյն որ ինձ հոսեաց՝
Պէսպէս կըսկիծըս տնօրինեաց :

Քաղեալ ըզցաւըս զանագան՝
Փունջ կապիցի որպէս շուշան .
Փուշ եւ տատասկ կըսկըծական՝
Եղին պըտուղն ինձ անվայսնան :

Եւայ խորհուրդս իմ անդադար ,
Ջի հրով վառեալ կամ հաւասար .
Միոքս եւ խորհուրդս անասնաբար
Ինեւ գործել տըլին ինձ չար :

Ասաց ինձ տալ փառս ընդհանուր .
'Ի ես ցանկացայ մըտօք իմ կոյր .
Ձեռօքս առի զբնումեանըս հուր ,
Շըծումը լեղի դառն եւ մըրուր :

Լըռել սըրտիւ ոչ հանդարտիմ ,
Լալով ցաւըս իմ ոչ վարատին .
Անցեալ փառացն ոչ հասանիմ ,
'Ի ի տանջանացն ոչ ազատիմ :

Միւս շարքը նախամոլին ողբերուն , որ կը յաջորդէ Ադամայ եւ Եւայի մեծ տեսարանին եւ որ չորս գլուխ կը բռնէ (Դ. Ե. Զ. Է.) , առաջին տողերուն մէջ նախամոլին պատշաճ խօսքեր կը պարունակէ , բայց արդէն իսկ երկրորդ գլխուն մէջ , ինչպէս զիտել տուի վերեւ , խօսողը այլ եւս Ադամը կամ Եւան չեն կրնար ըլլալ՝ որքան միջնադարեան վանական մը , որ մահուան , դատաստանի եւ դժոխքի պատկերներուն զարհուրանքը կ'երգէ . կարելի էր անշուշտ որ բանաստեղծը Ադամին ու Եւային մարգարէական տեսիլ մը վերագրէր ուր իրենց աչքին երեւար իրենցմէ սերելիք բովանդակ մարդկութեան ապագայ չարչարանքը , դժբաղդութիւնը , եւ՝ Ժամանակներու կատարածին՝ իրենց եւ իրենց անհամար զաւակներուն կրելիք տառապանքը յաւիտենական դժոխքին մէջ . ատիկա չէ խորհած Սիւնեցին . մեղքին գործուելէն անմիջապէս յետոյ , երբ դեռ Աստուած զիրենք չէ արտաքսած դրախտէն , երբ դեռ զաւակ մ'իսկ չեն ունեցած , յանկարծ երկուքը մէկ կը տեսնեն ոչ միայն իրենց հողւոյն՝ մահուան օրը՝ դեռերուն ձեռքով խոշտանգուող , այլ եւ կը տեսնեն իրենց հողւոյն հետ՝ բոլոր մեղաւորներուն հոգիները

արդէն իսկ « կայան »ին մէջ հաւաքուած , —
 անպիսի ատեն մը երբ իրենց երկուքէն ուրիշ
 մեղաւոր չկար : Այդ չորս գլուխները , մանա-
 ւանդ վերջին հրեքը , պէտք է կարգալ իբր ա-
 ռանձին քերթուածներ , եւ՝ այդպէս՝ անոնք
 հիանալի են , Սիւնեցիի ամենէն հզօր քերթը-
 ւածներու կարգը կրնան դասուել , միշտ լեցուն
 ըլլալով հանդերձ ծանր թերութիւններով : Ե.
 գլուխը քերթուածն է մահէն զգետնուած հո-
 գիին որ ահաւոր ուղեւորութիւնը կը կատարէ
 միջոցին մէջ դէպ ի հանդերձեալ աշխարհը , խա-
 ւարչտին օղերուն մէջէն , ուր դեւերը կը պաշա-
 րեն ու կը գերեն զինքը :

... Դէմքն այլակերպ եւ ահագին
 Զարհուրական կերպարանին .
 Շուր ցլանայ յորնգաց նոցին
 Եւ պաշարէ զգերեալ հոգին :

... Զայնի գոչեն յոյժ սաստկագին
 Որպէս ճայմունք յորոտս ամպին ,
 Եւ ի ճըչկո ձայնից նոցին՝
 Սարսեալ հոգւոցն նըւաղին :

... Շոտ գարշունեանց յոյժ զազրագին
 Որ ի դիւաց դասէն բուրին .
 Զմահ աղծրուծեանըն տաղակային
 Ատեալ հոգւոցն քակտակին :

Շուրջանակի պատեն զհոգին
 Ըստ վեց շարժմանցն որով յանցին .
 Ի վեր ի վայր յաջ՝ Է ահեկին
 Յետ եւ յառաջ մըրցեալ կըռուին :

... Եւ ղօղանցեն գոչմամբ նորին ,
 — Այո՛ , այո՛ , աչք մեր տեսին .
 Զարկածք չարեաց մերոց ի դմին՝
 Ի սկըզբանէ մինչ ի վերջին :

Զ. գլուխը տեսին է վերջին դատաստանին .
 այս նիւթին վրայ մեր հին բանաստեղծներէն
 շատերը գրած են , մամոււտրապէս նարեկացին ,
 որ քանի մը հզօր էջեր ունի ատոր նուիրուած .
 Սիւնեցւոյն այս կտորն ամենէն ուժեղներէն մին
 է այդ շարքին մէջ .

Յորժամ դըրունք երկնից բանին ,
 Լինի հընչմունք ահագնագին ,
 Դասք հրեղինացն ի վայր հոսին ,
 Մինչ զի Թափօր մընայ երկին :

Յայնժամ լինի բարբառ փողոյ
 Նըման ամպոց որոտալոյ .
 Կոչէ զմարմին ի չորս նիւթոյ՝
 Կալ առնօջի Տեազն Աստուծոյ :

Յայնժամ մեռեալքն ամենեքեան
 Յառնեն եւ զան ի դատաստան .

Ոմանք զինչ լոյս արեգական ,
 Ոմանք խաւար դիւաց նըման :

Զորեկերպեան ամոռ դընին ,
 Յորմէ տեսողքն սարսափին .
 Աստուածն Յիսուս բազմի ի նմին ,
 Հարցաքննէ զամենեսին :

Հարցնէ բանիւրն սիրալիր
 Յորմէ դողան երկինք՝ Է երկիր .
 « Ընկե՛ր , վասն է՛ր այսըր մըտիր .
 Երբ հարսանեաց հանդերձ չունիր : »

Յայնժամ բերանքն պապանձին ,
 Զի պատասխան տալոյ չունին .
 Այլ որպէս մոմ ի մէջ հըրին
 Յաստուածային յահէն հալին :

... Ոմանց ասէ ձայնն ահագին .
 « Գնա՛ք ի խաւարն աղբամբղջին ,
 Անդ լալ աչաց ձեր եղիցին
 Եւ ատամունք ձեր կըրծըտին : »

... Յայնժամ ջոկէ նա յիրերաց
 Զմաքուր օղիսն ի սու այծեաց .
 Դասէ զօղիսն յաչմէ լիւաւաց
 Զայծս ի ձախմէ նախատանաց :

Գետքն հրեղէն յորդահոսին .
 Եւ բարկութիւնքն բորբոքին .
 Սաստիկ գոչեն հառաչագին՝
 Ճիչ բառնալով դասքն չարին :

Տանջանարանքն պատրաստին
 Ըստ զանազան գործոյ չարին .
 Զկարէ քընեւ միտք մարդկային .
 Զոր լինելոց է անց նոցին :

Ի վերուստ Տէրն ահագնագին .
 Ներբուստ դըժոխք բացեալ լինին .
 Ի ձախմէ դասք դիւաց գնդին ,
 Յաչմէ հրեշտակք ցամամբ ի լին :

... Մեծ է երկիւղ դատաստանին
 Քան ըզդժխոց հուր գեհենին .
 Քանզի երկինք՝ Է երկիր շարժին
 Ի բարկութեանց դատաստանին :

Է. գլուխը Դժոխքին չարչարանքներուն
 նկարագրութիւնն է , որուն մէջ կէսը կըրկ-
 նութիւն , թուլութիւն , անճաշակութիւն է ,
 բայց միւս կէսը , հոյակապ , մեր միջնադարեան
 բանաստեղծութեան ամենէն հզօր կտորներէն
 մէկ քանին կը պարունակէ .

Մերձ ի տարերս հրեղէն ծովին ,
 Ի խորս ներքին յատակ ստորին ,
 Յոյժ հեռագոյն ամենեսին
 Նա ի խնամոցն աստուածային . . .

... Ձորս օօգ տանչանքն գրիւովին
Ըստ չորս հիւնոցս ինչ պատրաստին .
Իսկ ըստ գործոց զանազանին
Պէտպէս լըլիանք կայ ընդ նոսին :

Դէմ երեսաց հուր գեհնին ,
Եւ ի յետուտ սառնամանին .
Անքուն որդուքն յաջմէ դասին ,
Զախմէ խաւարն տղջամրղջին :

... Ի հրոյ բերանքն պապակին ,
Յըրոով ատամքն կոփկոփին ,
Ծրծին որդուք զմարմինն նոցին ,
Վէրքն յատամանցն խորովին :

... Ի կայծականց վերայ նիրհն ,
Այս է նոցա միշտ անկողին .
Եւ ի հրոյ մէջ թաւալին .
Զար է հանգիստն անծանց նոցին :

... Անդ արտասուքն ի ծով դառնայ
Եւ եռացեալ այրէ գնոսա .
Աղաղակն գոչմամբ նոքա .
Զի բարկութիւնքն բազմանայ :

Այն հուրն այլ չէ անցանելոյ ,
Եւ այն սառիքն ոչ հալելոյ ,
Որդուքն չեն մեռանելոյ ,
Խաւարն չէ ի լոյս գալոյ . . .

**Գրքին զուտ աստուածաբանական կտորնե-
րուն մէջ զուարճալի է « կող »ին նուիրուած
գլուխներէն՝ ԺԲ. գլուխը , ուր մեր կնատեաց
վանականը յաջող պատկերներ կը գտնէ չարա-
զէտ եւային ու էնկից բղխող « յաւիտենապէս
աղիտաբեր » սեռին « վտանգաւոր թիւեր արտա-
յայտելու համար . « վանական երգիծանութեան »
հետաքրքրական էջ մը կարելի է նկատել այդ
կտորը .»**

... Կամ զի կողն ոսոր է անրգգայ
Ռնքն ըստ ինքեան բան չիմանայ ,
Վասն այն կրնոջն խելք չը կայ .
Զինչ որ ինքն փուտ հաւատայ :

Կամ զի դատարկ է մէջ նորա ,
Պարարտ ուղիղ ի նմա չը կայ ,
Եւ կինն իրօք ոչ լիանայ .
Այլ զինչ տեսնու աջօք ցանկայ :

Կողն նրման է պինդ ոսկրի .
Բայց մէջըն փուռ չեչով ի լի .
Կինն տեսօք լաւ կու երեւի ,
Բայց տեսանողն կը խարուի :

... Եւ զի կողն է աղելնածու ,
Կնոջ դէմքն նետ , իւր տեսն թեւ .

Ով որ հայի ընդ կրնոջ գեղ ,
Նորա խոցին ալ չը կայ դեղ :

Դարձեալ կողն է նրման Թրրի ,
Խոցեաց զԱրամ բանիւ լեզուի .
Կնոջ լեզուն սուր է երկսայրի ,
Զով որ խոցէ՝ այլ չը բժշկի :

Եւ զի կողն է անհաւասար ,
Մին կոյսըն փոս , մին կոյսըն դար .
Դիմօքն սէր ցուցնէ արդար ,
Իսկ սիրտըն խեղ գազանաբար :

**Այդ չարքին ամենէն հետաքրքրական կտորը՝
Չարին իսկութիւնը բացատրել ձգտող գլուխն
է . հաւանական է որ Սիւնեցի հող ամփոփած
է ինչ որ Եկեղեցւոյ Հայրերը դարերէ ի վեր
ըսած են այդ աստուածաբանական (ու փիլիսո-
փայական ալ) մեծ ու իսկապէս չահեկան հար-
ցին վրայ , (ի՞նչ է Չարը եւ ուսկից ծնած է .
Աստուած բարի ըլլալով ինչո՞ւ ծնունդ տուած
է Չարին , եւ եթէ Աստուած չէ զայն ծնողը ,
ուսկից յառաջ եկած է) : Բայց այդ գլխուն մէջ
բանաստեղծօրէն բացատրելու համար Չարին
մասին աստուածաբանութեան յղացած կարծիք-
ները , կան չարք մը պատկերներ , տողեր , դար-
ձուածքներ , շատ սիրուն , եւ որոնք մեր բա-
նաստեղծին կնիքը կը կրեն եւ իր ստեղծուին
ըլլալու են .**

Ո՛վ հիացմամբ զարմանալի
Եւ տարակոյս անքննելի .
Ստեղծեալ էակ բնութեամբ բարի՝
Զար խարբալիպ ապականի :

Նախ քննեցուք թէ զինչ է Չար
Եւ կամ ո՛ւստի նորին պատճառ ,
Որ հրեշտակացն էած խաւար՝
Եւ մեր բնութեան մահ կրկնաբար :

Անկ 'ւ անգոյ եւ անկատար ,
Ոչ է ստեղծուած մեզ հաւասար .
'Ստ ինքեան ոչինչ , անունըն Չար՝
Առնէ վընաս հրգօրաբար :

... Է հիացումըն զիս պատեալ ,
Կամ զարմացմամբ տարակուսեալ ,
Թէ զՉարն որ չէ Աստուած ստեղծեալ ,
Ո՛ւստի եղեւ նա՞ գոյացեալ :

... Այս մեզ անհաս է գիտելոյ ,
Թէ Չարըն ո՛ւստի է 'ւ անգոյ .
Միտք մեր որպէս կամ մի ծովու՝
Առ անհասին բաղդատելոյ :

Բայց ըստ կարծեացրու մարդկային
Տարակուսեալ մըտօք ստորին
Սակաւ քննեմք վասըն սորին
Զի՞նչ է յատուկ Չարն ըստ իրին :

Ոչ է տոնո՞ւմեալ Աստուած ըզնա ,
 Այլ ի գործելն գոյանայ ,
 Որպէս ըզհետ յիրիք վերայ
 Որ յընձանալն երեւենայ :

Սա իմացմամբ է սոսկ միայն ,
 Անէ 'ւ անգոյ եւ անսահման .
 Ի գործածելն գոյանան
 Եւ յոչ գործելն անգոյ մընան :

Որպէս ըզմահն ի սուսերին
 Առանց հատման ոչ կատարին ,
 Այլ կայ ծածկեալ ի մէջ նորին
 Որպէս անգոյ ամենեւին :

Եւ որպէս հուր լուսապայծառ
 Վառէ ըզհիւնն իւր հաւասար ,
 Այսպէս դիմակք սորինն Չար
 Ում հանդիպի առնէ խաւար :

... Որպէս բնութեամբ Բարին միշտ է ,
 Եւ յոչէից ի գոյ ածէ ,
 Դիմակք գորին Չարն ոչինչ է ,
 Ում հանդիպի ոչընչացնէ :

Պակասութիւն Բարոյն է Չար ,
 Որպէս անյոյս տեղին՝ խաւար . . .

Իր բոլոր թերութիւններով մէկտեղ, Ադամ-
 գիրքը մեծապէս շահեկան ու կարեւոր գրական
 տոքիւման մըն է : Հ. Պոտուրեան մեծ շնորհա-
 կալութեան արժանի է՝ երեւան հանած ըլլալուն
 համար Առաքել Միւնեղին : Այդ մտայլ, դաժան,
 բարբարոս, անճաշակ, միամիտ ու խառնաշփոթ
 բանաստեղծին մէջ, հանճարի լոյսը կը փայլի
 մերթ, ամենէն թանկագինը լոյսերուն, եւ որ
 շատ յաճախադէպ չէ մեր հին գրականութեան
 մէջ : Հայոց միջնադարեան մատենագրութեան
 վրայ խօսող մը այլ եւս պիտի չկրնայ զանց
 առնել Առաքել Միւնեղին, որ իր լաւագոյն էջե-
 րուն ինքնատիպ ու ջղուտ գեղեցկութեամբ
 զինուած՝ կուգայ հոն իր տեղն ընդ միշտ գրա-
 ւել՝ առաջին կարգին մէջ :

Մինչ Հ. Պոտուրեան կը շարունակէ իր
 յոգնալան ու բազմարգիւն պեղումները մեր հին
 գրականութեան անտիպներուն շեղջակոտին մէջ,
 Հ. Ղազրիկեան կը ձօնացնէ չարքն իր գեղեցիկ
 թարգմանութեանց, Տանթէին ու Օստիանէն յե-
 տոյ, Վիթթորիա Ազանուրը, յետոյ Լէոփորասին
 իր ձեռքով հայերէնի վերածուեցան : հիմայ ն-
 նէականի թարգմանութիւն մըն է որուն կը
 ձեռնարկէ . եւ ունի պատրաստ ամբողջական
 թարգմանութիւն մը թասսոյի Երուսաղեմ Ա-
 զաշեալին :

Գրական գլուխ-գործոցի մը իսկապէս յա-
 ջող թարգմանութիւնը ամենէն դժուար ու հազ-
 ուապիւտ բաներէն մէկն է բոլոր գրականու-
 թեանց մէջ : Մեծ բանաստեղծի մը գործը իր
 լեզուէն ուրիշ լեզուի մը փոխադրելու համար,
 չի բաւեր երկու լեզուներուն խորին հմտութիւնը
 կամ տաղաչափական կանոններու գիտակցու-
 թիւնը. պէտք է թարգմանիչը «արուեստագէտ»
 ըլլայ ինքն ալ, պէտք է բնագիրն «զգայ» եւ
 զայն նոր լեզուով մը «վերաստեղծէ» : Ասոր
 համար է որ լաւագոյն թարգմանութիւնները
 անոնք են որ ինքնատիպ բանաստեղծներու ձեռ-
 քով են կատարուած (օրինակ՝ Ֆրանսական գրա-
 կանութեան մէջ՝ Պոպէրի թարգմանութիւնն
 էտկար Բօի, Լըքոնթ տը Լիլի թարգմանութիւ-
 նը Հոմերի, Եսքիլի, Սոփոկլի, Շաթոպրիանի
 թարգմանութիւնը Միլտոնի) . բայց ինքնատիպ
 բանաստեղծներէն շատ քիչեր ժամանակ կը
 կորսնցնեն ուրիշի մը գործը թարգմանելու,
 որովհետեւ իրենք իրենց անձնական գործն ու-
 նին կերտելու, եւ կամ՝ եթէ այդ գոհողութիւնն
 ընեն, առի կ'ըլլայ իրենց կեանքին մէջ բացա-
 որիկ դէպք մը՝ չափազանց սիրուած այս կամ
 այն հեղինակին կամ քանի մը հեղինակներու ի
 նպաստ միայն կատարուած : Հ. Ղազրիկեանի
 պարագան աւելի հազուադէպ է եւ զարմանալի .
 ստեղծագործ բանաստեղծ մը չէ ինքը, լայն իր
 թարգմանութեանց լեզուին, ոճին, տաղաչա-
 փութեան մէջ ինքզինքը կը յայտնէ իրական
 արուեստագէտ . ասիկա բարեբաղդութիւն մըն
 է մեզի համար, որովհետեւ շնորհիւ այս հան-
 գամանքներուն, մենք պիտի ունենանք գլխաւոր
 դասական հրաշակերաններուն աշխարհաբար տա-
 ղաչափեալ գեղեցիկ թարգմանութիւնը՝ նորը
 արուեստագէտի մը ձեռքով յօրինուած :

Ճաշակը որով Հ. Ղազրիկեան իր հայերէնին
 մէջ՝ կ'ընտրէ բառերը, զանոնք կը դասաւորէ եւ
 կը հիւսէ իր տողերը, եղանակը որով կ'ըմբռնէ
 «ոտանաւոր»ին յատուկ հրապոյրը ու տաղաչափ-
 ուած լեզուին թեթեւ երաժշտութիւնը, այն կեր-
 պը որով մեր աշխարհաբարին բոլոր ուրոյն գե-
 ղեցկութիւններն ու շնորհները նկատած, իւրա-
 ցուցած է եւ զիտէ տեղին կիրարկել, ամէն
 գովեստէ վեր են : Ալիշան ինքն իսկ, որ ստեղ-
 ծագործ քերթող մըն էր՝ մեծ աւելնով ու կրա-
 կոտ երեւակայութեամբ, ինքզինքն այդ ճաշա-
 կէն զուրկ ցոյց տուած է յաճախ՝ թէ՛ գրաբարի
 եւ թէ՛ աշխարհաբարի մէջ :

Ըսել չեմ ուզեր որ Հ. Ղազրիկեան անթերի
 եղած ըլլայ իր ցարդ հրատարակած բոլոր թարգ-
 մանութեանց մէջ . Տանթէի Իժոխիին թարգ-
 մանութիւնը, մին իր ասոյցն փորձերէն, պա-
 կասներ շատ ունէր . Ականուրի եւ Լէոփորասի
 քերթուածներուն թարգմանութիւնը անհունա-
 պէս ունի գեղեցիկ էր, բայց անոնց մէջ ալ
 գեղ կային թերութիւններ : Հ. Ղազրիկեան կը
 գործածէր մ.թ գրաբար այնպիսի բառեր կամ
 բարբութիւններ՝ ո՞նք խորթ են ինծի համար,
 խորթ՝ որովհետեւ մեռած բառեր են, կամ

«բիրէ» դարձած բարգուծիւններ, մինչ անոնց փոխարէն աշխարհաբար համարժէք աւելի կենդանի բաներ երբ կան՝ նախընտրելի պէտք է միշտ համարուին :

Հ. Ղազիկեան ցոյց կուտար նաև շրջմանց եւ սողանցութեանց մէջ չափազանցութիւն, ինչ որ մերթ իր սողերը բնագրութիւ կը դարձնէր : Գիտեմ որ Հ. Ղազիկեան այսպէս ընել ինքզինքն ստիպուած կարծած է՝ բացարձակ հաւատարմութեամբ կազապարելու համար Աղանուրի ու Լէսփարտի բնագիրը ուր շրջումներն ու սողանցութիւնները յաճախագէպ են : բայց մեր աշխարհաբարը որոշ չափով մը միայն կը վերցնէ այդ սողանցութիւններն ու շրջումները այդ չափէն անդին երբ անցնինք, յեզուն այլ եւս կը կորսնցնէ իր բնականութիւնը, ու սողերը կը դառնան անախորժ ու նոյն իսկ միջին Ասոնք բիծեր էին միայն այդ հոյակապ թարգմանութեանց մէջ, ուր կը վստային անթերի կատարելութեամբ տուններ, օդային թեթեւութեամբ սահող թաւալող, շնորհալի նազանքով մը օրօրուող սողեր, սողեր՝ որոնցմէ աւելի գեղեցիկները չեն գրուած ու չեն կրնար գրուիլ մեր աշխարհաբարով :

Արդ, Թաստոյի Երուսաղէմ Ազատեալին թարգմանութիւնը, որմէ երգ մը ինձ ցոյց տուաւ Հ. Ղազիկեան՝ վերջին անգամ վենետիկ գրտնուած միջոցիս, ունի բոլոր յատկութիւնները եւ գերծէ մէկ քանի թերութիւններէն զոր վերեւ նշանակեցի : հոտ, այլ եւս Հ. Ղազիկեան, իր արուեստին զենթիւն է հասած : աւելի բնական, զիւրասահ, շնորհալի սողեր, պատմուածքի աւելի գոյտը, յստակ ու վայելուչ ոճ, աշխարհաբարի սիրունութիւններն արժեցնելու աւելի կիրթ ու ճարտար ճաշակ կարելի չէ երեւակայել : Այդ երգը, որուն ընդօրինակութիւնը հաճեցաւ ինձի տալ Հ. Ղազիկեան, կը հրատարակեմ Անանիսի այս թիւին մէջ :

Միևնոյն կատարելութիւնը գտայ նաև Ենէականի Ա. Երգին թարգմանութեան մէջ, զոր Բագմալիպը հրատարակեց այս օրերս : Հ. Ղազիկեան այլ եւս տիրացած է արուեստին : այլ եւս օտար մեծ բանաստեղծները իր մէջ պիտի գտնեն թարգմանիչ մը որուն նմանը թիչ կայ ո եւ է ազգի մէջ : Հոտ սակայն, Ենեակսնի այդ աշխարհաբար թարգմանութեան երեւոյթին մէջ, կայ ուրիշ մէկն ալ զոր պէտք է շնորհաւորել, այն է Ս. Ղազարու արբահայրը : Ենէականի աշխարհաբար թարգմանութիւն մը վենետիկ վանքին մէջ, ուր Ալիշան ինքն իսկ աշխարհաբարը « քուրչի կտոր » կ'անուանէր, ուր Վիրգիլի եւ աշխարհաբարի զուգակցութիւնը հայհոյանք պիտի նկատուէր երբեմն, ուր Հիւրմիւզէ մը յետոյ Ենէականի նոր թարգմանութեան մը ձեռնարկելը սրբապղծութիւն պիտի կրնար նրկատուիլ, ազուր ու յանդուգն նորութիւն մըն է, որ ցոյց կուտայ թէ Ս. Ղազարու վանքը կենդանի է, քանի որ կրնայ վերանորոգուիլ, քալել ժամանակին հետ : եւ արբահայր մը, որ ասիկա կ'ըմբռնէ, կը թոյլատրէ եւ կը քաջաւերէ,

արժանի է շնորհաւորութեան :

Պարզապէս հրաշայի է Ենէականի այդ աշխարհաբար թարգմանութիւնը : մեր աշխարհաբարը՝ այդպէս գործածուած՝ կրնայ մրցիլ գրաբարին հետ : իսկ հարազատութեան տեսակէտով, նկատի ունենալով ինձ հաղորդուած գեղեցիկութիւնները, Հ. Ղազիկեանի թարգմանութիւնը աւելի մօտ է բնագրին քան Հիւրմիւզինը : այս հարցը լատինագէտները պէտք է վճռեն : բայց փրոֆէսէօր Թեմա, բազմահմուտ գրականագէտ լեզուաբան հայագէտը, նրբաճաշակ ու խստապահանջ մարդ, զրկեր է Հ. Ղազիկեանին՝ այդ թարգմանութիւնը կարգալէ յետոյ՝ « Պէտք է ձեզ շատ գովեմ » : ասիկա արդէն մեծագոյն վարձատրութիւն է տաղանդաւոր Մխիթարեանին ջանքերուն :

Երկու բան ունիմ դեռ նկատելու այդ թարգմանութեանց մէջ : Նախ՝ ըի խնդիրը՝ Մեր նախնեաց քերթուածներուն մէջ ըով վերջավանկերը անշեշտ ըլլալով՝ միշտ յաջորդ հատածին մաս կը կազմեն :

Մանաւանդ մեզ ծանուցեալք
Եւ երկրայնոցրս մերձաօրք,
Սուրբ Գարիիէլ եւ Միքայէլ
Հրեշտակապետք Բարձրելոյն,
Որ Աստուծոյ կայք առաջի
Մաղմիլ ըզմե՛րքն փերկուե՛ին : (Ն. ՇՆՈՐՀԱԼԻ)

բայց աշխարհաբարի մէջ ը սատը իբր յօդ եւ իբր հայցականացուցիչ՝ անհունօրէն աւելի յաճախ կը գտնուի բառերուն վերջը քան գրաբարի մէջ, (եւ արդէն գրաբարի մէջ՝ ըով վերջացող բառ չկայ, այլ միայն ը ձայնաւորով վերջավանկ, սրբոցրն, կայսր, եւն.) : արդ՝ անկարելի կը թուի ինձի այդ անհամար ղերը միշտ յաջորդ հատածին անցընել, առանց յաճախ սողը բնագրութիւ դարձնելու : եթէ դեռ կան թէ՛ Թաստոյի եւ թէ՛ Վիրգիլի թարգմանութեանց մէջ քանի մը — չափազանց սակաւաթիւ —, անբնական սողեր, պատճառը՝ գրեթէ միայն ըն է :

Է սըրտին խորը Պարիսի գատաստանն :

Մեր ժողովրդական բանաստեղծութիւնը ըր բրէք միւս հատածին չի կցեր : ուստի հայերն ալ նմանապէս : Այդ ալ հակադարձ ծայրայեղութիւն մըն է : Ասով՝ մեր աշխարհաբար ոտանաւորը ինքզինքը պիտի զրկէր ներգաշնակութեան առաջնակարգ տարրէ մը, որովհետեւ երբ այդ շեշտի կանոնն ու սողին բնականութեան պահանջքը հաւասարապէս յարգուած են, զմայնելի է արդիւնքը :

Ես կը կարծեմ թէ կարելի է, եւ պէտք է, միջին եզր մը գտնել : պէտք է ըով վերջավանկերը միշտ յաջորդ հատածին անցընել, որովհետեւ անտանելի է վազըր, մայրըր, ասըրդի պէս բա-

ներու վերջին վանկը հատածի մը վերջը թողուլ . իսկ ըով վերջացած վանկերուն համար , պէտք է ընդունիլ իբր ընդհանուր կանոն՝ ըր անցընել յաջորդ հատածին , բայց մերթ թոյլ տալ զարտուղութիւններ , իբր « քերթողական ազատութիւն » . առով՝ տողերու անքակահանութեան անպատեհութեանը առաջին առած ու նաեւ բոլոր հատածներուն վերջավանկին շեշտուած ըլլալուն երաժշտական ծայրայեղ միօրինակութենէն ալ խոյս տուած կ'ըլլանք . ճիշդ այդպէս , Հիւկօ , Ֆրանսական «ալեքսանտրէն»ին միօրինակութիւնը խզելու համար , մտցուց նորութիւն մը , այն է՝ մերթ տողը բաժնել երեք քառավանկի , փոխանակ միշտ երկու վեցավանկի բաժնելու : Արդէն , ուշադրութեամբ քննելով մեր ամենէն խստապահանջ ու կանոնամուտ տաղչափներուն ստանաւորները , չէ՞ որ՝ եթէ ըր իբր անշեշտ վանկ յաջորդ հատածին կ'անցընեն , բայց հատածներուն վերջը յաճախ տնին բառեր որ շեշտաւոր չեն . ահա օրինակներ .

- ... Ու կը մըրկին կը փոթորկին երկրի՝ վրայ . . .
- ... Զոյգ բեւոտներն , եմբի՛ն մէջ կը շողան . . .
- ... Ըստէպ ըստէպ փայլատակներ . ամէ՛ն ինչ . . .
- ... Կեմոնոյէ Տրխոնի՛ հեռ միասին . . .
- ... Ու կը դառնան դէպ ի փունքն փրփրկեան :

Վրայ , մեջ , ինչ , հեռ , ի , հատածներուն վերջը դրուած , այնչափ անշեշտ են որչափ ըր՝ Միւս նկատողութիւնս՝ էական գերանուններու իգականին մասին է : Ը . Ղազիկեան կը գործածէ մերթ նե , ներա : Անահիտի ընթերցողներուն ծանօթ են այն յօդուածներս որ ես առաջարկած եմ ընդունիլ մեր աշխարհաբարին մէջ իգական գերանունի համար՝ *հե* , *հեռ* , *հեռով* , *հեւ* . ձեւը . մինչեւ ցարդ ոչ ոք ձայնակցեցաւ , բայց ոչ ոք ալ հակառակ կարծիք մը յայտնեց : Ամէն պարագայի մէջ , կամ պէտք է բնաւ չը գործածել էական գերանունի իգականը , կամ անհրաժեշտ է *հե* , *հեռ* ձեւը ընդգրկել : Նեն

անգործածելի է՝ մեր արեւմտեան աշխարհաբարին համար , քանի որ նախ ջնջուած է՝ տեղի տալով *ան* , *անոր* ձեւին : Նեն չենք կրնար հօլովել . շատ շատ կարելի է ունենալ *ներա* , *ներանկ* , *ներանով* (եւ այն ալ՝ ինչքան տգեղ է *ներա՛* իբր արական հօլով գործածուած , Հայցական կարելի չէ . (տեսայ *նե՞* , *նե՛ն* , *զնե՞* .) *ներանկ* Գուրեանը գործածած է , բայց խորթ է . յորնակի մէջ բնաւ կարելի չէ . *նիհա՞* , *նիցա՞* , *նիցանե՞* , *նիցանո՞վ* : Եւ առոր համար է որ Ը . Ղազիկեանի թարգմանութեանց մէջ՝ էական գերանունի իգականը միմիայն *նե* եւ *ներա* ձեւով կ'երևայ : Արդ , այդ իգականը պէտք է իր բոլոր հօլովներով գործածել , կամ բնաւ չգործածել . Ես կը կարծեմ , թէ անհունապէս նախընտրելի է *հե*ը (հնոր . էն , զէն , զէնիկա . էնկից , հնորմէ . հնով . հնոնք , հնոնց , զէնոնք , էնոնցմէ , էնոնցմով) , իսկ ուսսահայոց համար նէ , նորա , նորանք , եւն . քանի որ նէ , նրա , նրանք՝ այժմ ընդունուած ձեւն է իբր էական գերանուն :

Վերջացնելու համար այս քրոնիկս՝ ուր Ս . Ղազարու վերանորոգ կենսականութեան մասին իօսեցայ , լաւագոյն բանը զոր կրնամ ընել՝ մատնանշելն է գրական քննադատութեան հոյակապ էջերու այն շարքը զոր Ը . Անգրիկեան կը հրատարակէ Բազմալիկային մէջ՝ Գեղեցիկը շեղուիմ մեջ տիտղոսով , նրբաճաշակ ու հնարամիտ քննութիւն հին հայերէնի կրած այլ լազան ձեւերուն՝ ոսկեգարէն մինչեւ անկման դարերը , ու փափկերանգ վերլուծում գեղեցկագիտական արժէքի տեսակին ու չափին զոր ցոյց տուած է մեր հին գրականութեան վարպետներէն իւրաքանչիւրն իր դարուն , զպրոցին , խառնուածքին համեմատ : Ու պէտք է ուշադրութիւն հրաւիրեմ նաեւ նոր՝ ու արդէն իսկ ինքնատիպ ու հզօր՝ բանաստեղծի մը վրայ , Ահաբոն , որ կը ծագի Մուրատ-Ռափայէլեան վարժարանէն , եւ որմէ քերթուած մը կը հրատարակեմ Անահիտի այս թիւին մէջ :

Ա . ԶՊԱՆԵԱՆ



Թ Ա Ս Ս Ո Ց

Ե Ր Ո Ւ Ս Ա Ղ Է Մ Ա Չ Ա Տ Ե Ա Լ

Չորրորդ Երգ



ինչ ըզբաղած են ասոնք այս շինութեանց

Որ կարենան զանոնք գործի բերել շուտ, Մարդոց աղգին ոխերիմ մեծ թըշնամին կապոյտ աշուին քրիստոնէից դէմ շըրջեց, Եւ ա՛լ զանոնք գոհ և ուրախ տեսնելով եր կըտղուցքէն խածաւ երկու շըրթունքներն, Եւ վիրաւոր ցուլի պէս դուրս փըռընչեց Մըռընչելով և հեծելով ցաւն իրեն :

Կը մըտածէ մըտքին բոլոր զօրութեամբ Անոնց դըլխուն յետին փորձանքը բերել . Հրաման կու տայ որ գումարուին իրեններն Արքունիքին մէջ (սոսկալի հաւաքոյթ) .

Շատ դիւրին բան կարծելով ա՛յ խելագար՝ Պատերազմիլն աստուածային կամքին դէմ .

Ու կը շամբէի հաւասարիւ Երկընքին , Չըյիշելով թէ ի՛նչ ահեղ կորոտայ Չարացեալ աջը վրէժխընդիր Աստուծոյ :

Տարտարոսի փողին զօղանջը խըռպոտ Կը հրաւիրէ բնակներն յաւերժ խաւարին . Կը զողան լայն աղջամըղջուտ անձաւներն Ու մըթին օդն այն որոտէն կը թընդայ . Այնքան ահեղ ճաթիւնով չի թօթափիր Շանթը վերին գաւառներէն երկընքին , Ոչ ալ երկիրն ա՛նպէս ցընցուած կ'երերայ երբ կը սեղմէ յըղի ծոցին մէջ շոգին :

Ամէն կողմէ շուտ աստուածներն անգունդին Կը վագեն գունդ գունդ բարձրաբերձ դըռներուն :

Ո՛հ , ի՛նչ դէմքեր զարհուրելի , այլանդակ , Սարսափն ու մահն աչքերնուն մէջ կը ցուայ : Ունին ոմանք օձախըռիւ մագերո՛ւ

Տակ մարդկային դէմք և թաթեր գազանի . Եւ ետեւնին կ'երթայ կու գայ պոչ մ'անծայր՝ Խարազանի պէս գալարուող ու քալուող :

Կը տեսնէիր հոն բիւր զազիր Արպեաններ , Կենդաւրօսներ , Սփինքսներ , արժգոյն Գորգոններ ,

Հաջող լափէշ ըՍկիլլաններ անհամար , Բիւր Հիդրաներ սուլող , շըջող Պիւթոններ , Եւ քիմեոներ որ թուխ բոցեր կը փըսխեն , Գերիտներ . Պոլիփեմներ քըսամնելի , Եւ խառնուրդէն՝ ձոյլէն կերպ կերպ դէմքերու Չըտեսնըւած , չըլըսուած հրէ՛շ ճիւղներ :

Ժանտ արքային առջև կ'երթան կը նըստին Ոմանք աջ կողմ և ուրիշներ ձախակողմ . Պղուտոն մէջտեղը կը բազմի , աջ ձեռքով Խորտաբորտ , ծանրը գաւազանը բըռնած . Ծովային է՛ն մեծ խութն , ալպեան է՛ն մեծ Ժայռն ,

Երկընթացիկ կալպէն , Ատլասն ամպածրար՝ Փղբրիկ բլուրներ կը տեսնըւին անոր քով . Եղջերաբերձ ճակատն այնքան վիթխար է :

Վայրագ դէմքին վայելչութիւնն ահաւոր Զինքն աւելի սարսափելի , խրոխտ կ'ընէ . Արիւնըռուշա աչքին նայուածքը թունտ Բոց կը ցայտէ՝ զերդ գիսաւոր մահաբեր .

Ծածկելով ծնօտը՝ թաւարծի կուրծքին վրայ Կ'իջնէ մօրուքը թանձրախիտ 'ւ ահաւելի . Եւ խորանդունդ վըհի մը պէս կը բացուի Փեռեկ բերանը թաթախ թուխ արիւնով :

Այն վայրենի բերանը դուրս կը ժայթքէ Գարշահոտ՝ սև շունչ և բոցեր ու շանթեր . Մոնգիբելէն այդպէս կ'ելլեն երկնապող

Ծըծումբի վառ ծուխն , որոտումն ու գարշ հոտն : Երբ ըսիքսաւ խօսիլ՝ Կերբեր դաղըրեցուց Իր հաջիւններն , Հիդրան քաշեց ձայնը վար , Կոկիտոս կանգ առաւ , զողաց Տարտարոսն , Ու մեծ բոմբիւնն այս խօսքերով լըսուեցաւ .

« Ո՛վ աստուածներ Տարտարոսին , ձե՛զ՝ որ էք Արժանաւոր արեւէն վեր նըստելու . Հո՛ն ուրկից դուք կը սերիք ձեր ծագումով ,

Չե՛ղ՝ զորս ինձ հետ երանաւէտ գահերէն
Թափեց մեծ դէպքն այս զընտանին մէջ զբժխեմ,
Հին կասկածներն Անոր և սէգ բարկութիւնն
Ու մեր վըսեմ ձեռնարկն՝ արդէն ծանօթ են .
Ան ուզածին պէս աստղերուն վրայ կ'իշխէ
Եւ մենք սեպուած ենք ապրստամբ հոգիներ :
Եւ փոխանակ զըւարթ պայծառ ջինջ օրուան ,
Փոխան ոսկի՛ արեւուն , լո՛յս աստղերուն ,
Այս խաւարչուտ անդունդին մէջ փակեց մեզ
Եւ մեր նախկին պատուոյն ցանկալն ալ չ'ուզեր :
Եւ յետոյ (ո՛հ , ի՛նչքան յիշելը դառն է ,
Եւ ա՛ս ցաւերս կը գայրացնէ աւելի) ,
Հրաւիրեց մարդն երկնի չըքնաղ գահերուն ,
Երկրածին մարդն անարգ , անարգ շաղախէ .
Ասով ալ գոհ չեղաւ , մատնեց իր որդին
Մահուան՝ որպէ՛ս զի աւելի փնասէ մեզ :
Տարտարոսին եկաւ դռները փըշրեց
Եւ ժրպրհեցաւ մեր արքունիքն ոտք կոխել ,
Խըլել բախտէն մեզ վիճակուած հոգիներն
Եւ այն շըքեղ աւարն երկինք փոխադրել ,
Ուր յաղթական կերպով յաղթողը պարզեց
Պարտեալ դժոխքին դրօշները՝ մե՛զ ի հեճուկս՝
Բայց ինչո՞ւ ցաւըս կը նորեմ խօսելով .
Որ՞ու ծանօթ չեն մեզ եղած զըրկանքներն .
Եւ ո՛ւր և ե՛րբ ձեռքը քաշեց երբեք ան
Սիրած շանթերը մեր վըրայ տեղալէն .
Բայց հին ցաւերն աւելի լաւ է մոռնանք ,
Ու մըտքերնիս դարձընենք նոր փնասներուն :
Ե՛հէ՛ , դուք չէ՛ք տեսներ որ ան կը փորձէ
Բոլոր ազգերն իր կըրօնքին հրաւիրել ,
Իսկ մենք ժամերն , օրերն անգո՛րծ անցընենք ,
Ու սըրտերնիս չը վառէ՛ հո՛գ մը չըքնաղ ,
Եւ համբերե՛նք որ օրէ օր զօրանայ
Ասիոյ մէջ իր ուխտապահ ժողովուրդն ,
Հըրէաստանը նըւաճէ , իր պատիւն
Ու իր անունը տարածուի աւելի ,
Եւ նորանոր լեզուներով , երգերով
Հընչէ՛ գըրուի , և քանդակուի նորանոր
Պըղինձներու վըրայ և նոր կուճերու
Ու մեր կուռքերը ցիրօցան ջախջախուի՛ն ,
Մեր բագիներն աշխարհ անո՞ր դարձընէ ,
Անո՞ր կախուին ուխտի նուէրներ , անո՞ր լոկ
Վառին խունկեր , ձօնուին ոսկի և զըմուռս :
Եւ երբ չըկար մեզի համար քոց մեհեան
Արգ պիտի մեր արուեստներուն չըբացուի՛ն ,
Ու պակսի՞ այնչափ հոգւոց հարկը սովոր ,

Ու թափո՛ւր մնայ Պըղուտոնի պետութիւնն :
“ Ո՛չ , քա՛ւ լիցի . զի մարած չէ տակաւին
Չեր մէջ նախկին կորովին հուրն եռանդուն ,
Երբ երկաթով ու բոցերով զինավառ
Մենք երկնային պետութեան դէմ կըռուեցանք :
Յաղթըւեցանք այն կըռուին մէջ՝ չեմ ժխաւեր .
Բայց ուժը վար չըմընաց մեծ խորհուրդէն .
Դէպքը բերաւ ի՛նքն յաղթեց , մեզ մընաց
փա՛ռքն
Անպարտելի քաջայանդուզն արութեան :
Բայց ձեզ ինչո՞ւ կ'ուշացընեմ դեռ , գայե՛ք՝
Մըտերիմներս , կարողութիւնս ու կորո՞վս ,
Գացէք փութով ու ժրպիրհներն ընկձեցէք
Զօրութիւննին քանի որ չէ շատցած դեռ .
Մարեցէք այն հետըզհետէ աճող բոցն՝
Հրէից գահոյքը դեռ մոխիր չըդարձած .
Մտէ՛ք մէջերնին , և զի անոնց վընասէք՝
Չեռք առէք մե՛րթ զօրութիւն , մերթ նենգ ու
դաւ :
Ճակատագիրն՝ ի՛մ կամքս ըլլայ . թող ոմանք
Աստանդական ըլլան , ոմանք ըսպանուին .
Վաւաշ սիրոյ ցանցերուն մէջ բըռնըւած ,
Պաշտէ ուրիշ մը քաղցր ակնարկն ու ժըմիտն .
Ամբօխը թող անմիաբան և ըմբոստ
Դարձընէ ի՛ր առաջնորդին դէմ իր սուրն ,
Եւ աւերակ դառնայ բանակն ու կորսուի ,
Հետքն ալ իր հետը ջընջըւի սպառնապուռ » :
Զըսպասեցին ապրստամբներն Աստուծմէ՛
Որ ան իր այս խօսքերուն վերջը հասնէր .
Խաւարակուռ գիշերէն դուրս խուժեցին
Սաւառնաթև՝ անձկոտ աստղերն աշելու .
Ա՛յդպէս մընչոզ ու թըլփայորդ մըրրիկներն
Իրենց ծընած որջերէն դուրս կը հրասն
Մըթագնելու երկինքը , մարտ տանելու
Յամաքային , ծովային մեծ պետութեանց :
Եւ պարզելով անմիջապէս թեւերնին
Ցրուեցան այս ու այն կողմերն ա՛խարհի .
Եւ ըսկըսան նորօրինակ զանազան
Նենգեր հինել և արուեստնին գործածել :
Ըսէ՛ , Մուսա , քրիստոնէից գըլխուն ի՛նչ
Փորձանք բերին նախ , և որո՞նց միջոցաւ :
Ամէն ինչ քեզ յայտնի է , մեզ հեռուէն
Հազիւ աղօտ շըշուկ մ՛հասաւ համբաւի :
Դամասկոսի և մերձաւոր քաղաքաց
Վըրայ կ'իշխէր հոյանուն մոգն Հիզրոսագ ,
Որ ինքըզինքն իր աղածրի հասակէն

Գուշակական արուեստներու էր տըւած .
 Եւ երթալով կ'աւելնար սէրն անոնց վրայ :
 Բայց ինչ օգուտ , երբ չըկըրցաւ գուշակել
 Այն անըստոյգ պատերազմին կատարածն :
 Ոչ տեգքն անշարժ ու մոլորուն աստղերուն ,
 Ոչ իսկ դրժոխքը կըրցան ստոյգը պատմել :
 Գատեց աս (ո՛հ , զաչացու միտք մարդկային ,
 Գատաստաններդ ո՛րքան սնտոի և ծուռ են)
 Թէ անըւած Արեւմտեան բանակին
 Կը պատրաստէր Երկինքն աւեր ու նախճիր .
 Բայց կարծելով որ Եգիպտոսն ինք տանի
 Վերջ ի վերջոյ մարտին պըսակն յաղթական ,
 Կը փափաքի որ աւարին ու փառքին
 Իր ժողովուրդն ալ մասնակից գըտնըի :
 Այլ զի փրանկ ո՛ւժը մեծապէս կը յարգէ ,
 Սարսափ կը զգայ արիւննոսոյ յաղթութեան
 Վըտանգներէն . և խորհի թէ ինչպէս
 Նախ և առաջ անոնց կորովը ջլատէ ,
 Որ անկէ վերջ շատ դիւրութեամբ նըւաճուին
 Իր զօրքերէն ' և Եգիպտական բանակէն :
 Կը մըտածէր ինքն ասոնք՝ վրայ երբ հասաւ
 Հրեշտակը չար , ու գըրգռեց զինքն աւելի .
 Խորհուրդ տըւաւ անոր , յայտնեց թէ ինչպէս
 Չեանարկութիւնը պիտի շատ դիւրանար :
 Ինքը թողնեայ մ'ունէր , որուն կ'ընծայէր
 Գեղեցկութեան բըրբախտն Արեւելք .
 Կընծական ու մոգական էն գաղտնի
 Գաւերն , հնարքներն իրեն ծանօթ են բոլոր :
 Կանչելով զայն կ'ըսէ անոր իր ծրագիրն ,
 Եւ կը ցանկայ որ նէ գանի գործադրէ :
 " Ո՛վ սիրելիս , դուն որ դեղձան մագերո՛ւ
 Տակ , և այդքան գողտրիկ՝ քընքուշ դէմքի մէջ
 Կը ծածկես միտք ըզգօն և սիրտ առնական
 Եւ արուեստիս մէջ արդէն զիս կը գըլես ,
 Մեծ մըտածում մ'ունիմ . եթէ օգնես դուն՝
 Պիտ' արդիւնքները յոյսերուն հետեւին .
 Կըկէ՛ հինած կըտաւս որ քեզ կը ցուցնեմ ,
 Խոհեմ՝ ծերու քաջայանդո՛ւկըն գործիչ :
 Գնա՛ թըշնամի բանակն ու հոն ձեռքըդ առ
 Սիրարծարծիկ ամէն հընարք կանացի .
 Աշաչանքներդ թըրջէ՛ մեղրով , արցունքով .
 Հառաչներով խօսքերդ ջարդէ՛ , շրփոթէ՛ .
 Գեղեցկութիւն չըւառական՝ ցաւագին՝
 Ի՛ն կամշոտ կուրծքը քու կամքիդ հակել տուր .
 Պատկառանքով պատէ յանդուգըն եռանդդ :
 Ու ճըշմարտին վերարկուին մէջ փաթթէ սուտն :

Եթէ հընար է Կոփրեստո՛ւր որսա
 Նայուածքներով անուշ , գողտրիկ խօսքերով ,
 Այնպէս որ ան սիրահարուած՝ ա՛լ զըզայ
 Մարտն ըսկըսած ըլլալուն , զայն դադրեցնէ :
 Չըկըրցար զինքը՝ միւս մեծերն հրապուրէ՛ .
 Տար ետեւէդ տեղ մ'ուրկէ ոչ որ դառնայ , :
 Եւ մանրամասն իր ծըրագիրն յայտնելով
 Ի՛ն վերջ կ'ըսէ . " Հայրենիքի , հաւատքի
 Համար ամէն բան ներելի , օրէն է " :
 Կերպարանքին և հասակին ու սեռին
 Պարգեւներուն վրայ խոխտապանծ Արմիդան
 Կը սկըսի գործն , ու մինաւոր կը մեկնի
 Մըթընշաղին՝ ծածուկ ու նեղ անցքերէ .
 Եւ կանացի հիւսքով , զգեստով կը յուսայ
 Յաղթել անյաղթ և սպառազէն գունդերուն :
 Ամբոխին մէջ իր մեկնելուն վրայ դիտմամբ
 Կը տարտըղնեն լուրեր , ձայներ գանազան :
 Քիչ օրերէ վերջ օրիորդը կու գայ
 Հոն ուր Փրանկները վըրաննին զարկած են .
 Նորօրինակ գեղեցկութեան ցաթելուն՝
 Կը ծնի հըծծիւն մ' , աչքերը հոն կը գամուին ,
 Նըման գիշեր ատեն երկինքը փայլող
 Յանկարծածագ գիսաւորին կամ աստղին :
 Կը զիմեն խուռըն տեսնելու թէ ո՛վ է
 Օտարուհին ազուոր , և ո՛վ է զըրկողն :
 Չըտեսան ոչ Արգոս , Կիպրոս , ոչ Գելոս
 Կերպարանք մ'ա՛յնքան չնաշխարհիկ ու սիրուն .
 Մագերն ոսկի կ'ընդներշուլեն մերթ ձերմակ
 Քօղէն և մերթ կը շողողան հոլանի .
 Այսպէս երկինքն երբ կը պարզի՝ արփին մերթ
 Վըճիտ ամպէն կը ծըկըլտայ թափանցիկ ,
 Մերթ ելլելով դուրս՝ նըշոյլներն ոսկեվարս
 Կը սըփուէ շուրջ կըրկնապատիկ լուսաշող :
 Գանգուրաւետ ի բնէ վէտ վէտ ծամերուն
 Կը յօրինէ զեփեւոր նոր գանգուրներ .
 Ագահ աչուին է ինք իրեն մէջ ամիտի ,
 Իր և Սիրոյ անգին գանձերը ծածկած :
 Վարդի անուշ գոյնն այն չըքնաղ դէմքին մէջ
 Կը շրփոթի փըղոսկրին հետ խառնըւած .
 Բայց սիրոյ սիւքը շընչող իր բերնին վրայ
 Կ'արիւնի մի՛միայն կարմիրը վարդին :
 Իր մերկ ձիւները կը ցուցնէ քընքուշ ծոցն
 Ուր սիրոյ հուրը կը սընի , կ'արծարծի .
 Կ'երեւայ մաս մը դեռափթիթ ծիծերէն ,
 Միւս մասն ըզգեստը կը ծածկէ նախանձոտ .
 Բայց աչքերուն ծամբան եթէ կը փակէ ,

Կեցընել չի կըրնար տարփոտ մըտածումն
 Որ արտաքին գեղեցկութեամբ գո՛՛հ չեղած՝
 Մինչեւ ծածուկ տեղերը ներս կը խըրի :
 Զերդ ճառագայթն՝ որ բիւրեղէն կամ ջուրէն
 Ամբողջ կ'անցնի՝ առանց զանոնք բաժնելու ,
 Յանդուգըն միտքն այսպէս զգեստին մէջէ փակ
 կը թափանցէ խորն արգիլուած մասերուն .
 Հոն կը ձեմի ու կը գիտէ ակնապիշ
 Մի առ մի այն հրաշալիքներն իրական .
 Ու պատմելով յետոյ զանոնք փափաքին
 Անոր բոցերը կ'արծարծէ սիրովառ :

Պագշոտ ամբոխն Արմիդայի անցնելուն՝
 կը լափէ զայն աչքով , գովեստ կը տեղայ .
 Ինք կ'իմանայ , բայց չիմանալ կը կեղծէ ,
 կը ծիծաղի թէպէտեւ իր սրբտին մէջ
 եւ կ'երագէ յաղթանակներ և որսեր :
 Կանգ առնելով քիչ մ'առաջնորդ մը կ'ուզէ
 Որ զինք տանի Սպարապետին՝ Կոփրետին :
 Եւտտարիոս վաղեց՝ եղբայր հարազատ
 Բանակին վե՛հ զօրագըլուի իշխանին :
 Թիթեոն ինչպէս լոյսին , այնպէս դիմեց ան
 Աստուածային գեղեցկութեան փաղփիւնին .
 Ուզեց մտէն տեսնել աչուին լուսալիր
 Զոր պատկառանք մ'անուշ գետին կը հակէ :
 Փըրթաւ մեծ բոց մ'անկէ ու զինքը վառեց ,
 Նըման կրակի մօտ գըտնըւած լուցկիին .
 Եւ տարիքին ու տարիանքին հըրդեհէն
 Յանդուգըն՝ խրոխտ դարձած՝ ըսաւ Արմիդին .

“ Կի՛ն , թէ քեզ ա՛յդ անուամբ պատշաճ է
 կոչել ,
 Զի երկրաւոր բանի դու չես նըմանիր ,
 Եւ Ադամի դուտորերուն մէջ ոչ որի
 երկինք այդքան զըւարթ լոյս չէ պարգեւած ,
 Ի՛նչ է խընդիբըրդ և ուրկէ՛ կուգաս դուն .
 Ո՛ր՝ քո՛ւ կամ մեր բախտն՝ արդ քեզ հօս կը
 բերէ :

Գիտցուր ո՛վ ես , որ չըպակսիմ յարգանքիս
 Մէջ , և եթէ հարկ է երկիր պագնեմ՝ քեզ ” :
 “ Գովեստըդ շատ բարձրերն , ըսաւ , կը
 թըռչի .

Զի հասնիր ա՛յդքան վերերն ի՛մ արժանիքս .
 կը տեսնես ոչ թէ մահացու միայն բան
 Այլ հաճոյքի մեռած արդէն , կենդանի
 Լոկ ցաւերու . թըշուառութիւնս ըստիպեց
 Զիս հօս գալ , կոյս փխխրատական ու պան-
 դուխտ .

Վըստահութեամբ Կոփրետոսին կը դիմեմ
 Իր բարութեան համբաւէն սիրտ առնելով :
 Եթէ ունիս՝ ինչպէս կը թուի՝ մարդասէր
 եւ գըլթած սիրտ մը՝ Կոփրետին տար դու զիս ” :
 Եւ ան . “ Արդար է որ եղբայր մը տանի
 քեզ միւս եղբօրն ու բարեխօս ըլլայ քեզ :
 Զընաշխարհիկ կոյս , քու դիմուակ ի զուր չէ ,
 Զիս կը յարգէ , խօսքս կ'անցնի անոր քով :
 Ինչ որ կ'արժէ իր գաւազանն ու իմ սուրս ,
 Ուզածիդ պէս կըրնաս բոլորը ծախսել ” :

Լըռեց , ու զայն առաջնորդեց դէպ ի հօն
 Ուր ամբոխէն հեռու Կոփրետն երկիւղած
 Դիւցաղներուն հետ կը նըստէր առանձին :
 Նէ ծըռեցաւ մեծարանօք , և ապա
 Պատկառանքէն չըկըրցաւ բառ մը յօգել :
 Բայց այն շիկնումն ու այն իր վախը Կոփրետ
 կը փարատէ ու կը սփոփէ զանիկա .
 Այնպէս որ նէ զգայարանքները դիւթող
 Անուշ ձայնով մ'հուսկ կը պարզէ մըտքին նենգիչ

“ Անյաղթ իշխան , որու համբաւն հոյակապ
 կը թըռչի պերճ պաճուճանքով զարդարուն ,
 Որմէ մարտի մէջ յաղթըւած , նըւաճուած
 Ըլլալին փառք կ'սեպեն ազգերն , իշխաններն ,
 Ամենուրեք ծանօթ է քու քաջութիւնդ .
 Եւ ինչպէս նոյն իսկ թըշնամիդ կը սիրէ
 կը յարգէ զայն , այսպէս նաև թշնամուդդ
 Նոյնը խրախոյս կուտայ , հրաւեր կը կարգայ
 քեզ փընտոելու և օգնութիւնդ հայցելու :
 Եւ ես ծընած թէև տարբեր հաւատքով
 Զոր ընկձեցիր և արդ ջըչջել կը ջանաս ,
 Բայց կը յուսամ քեզմով գըտնել ծընողքիս
 Ազնիւ գահոյքն ու գաւազանն արքունի .
 Ուրիշ մը ձեռք կը խընդրէ իր ազգակցէն
 Մոլուցքին դէմ օտպրանիւս գըրոհի ”
 Ես՝ զի պնոնց մէջ կ'ըլթ ըսուած բան չըկայ՝
 Ոստիս երկնութն արիճնիս դէմ կը հայցեմ :
 քե՛զ կ'ազաչեմ , յոյ ըս գո՛ւ ես , դու լոկ պիս
 կըրնաս հանել բարձունքն դըրկէ գլորեցին .
 Պէտք է բազուկըդ ոչ նըւկդ վարժ ըլլայ
 Վեր կանգնելու՝ ինչպէս է վա՛ր գլորելու .
 Եւ ոստիսն յաղթելէն ո՛չինչ պակաս
 Յարգելի է քըթութեան փառքն ու պարծանքն .
 Ու թագն եթէ կըրցար շոպել շատերէն ,
 Հաւասար փառք պիտ' առ թէ քեզ թագս ինձ
 Հաւատակից չըլլալին՝ քեզ դըրդէ՛ ալ

Գուցէ համեստ աղաչանքներս մերժելու .
 Վօգտէ հաւատքն որ գրթութեանդ վրայ ունիմ .
 Իրաւունք չէ որ ան մընայ յուսախար .
 Վրկայ Աստուածն՝ Հայրն ամենուն՝ աւելի
 Արդար դատի մ'երբեք չեղար ձեռքնտու :
 Այլ զի ամէն բան տեղն ի տեղն իմանաս ,
 Մըտիկ ըրէ թըշուտութեանցրս վէպին .
 Միանգամայն և ուրիշին նենգերուն .

“ Աղջիկն եմ ես Արքեւլանի , որ չըքնաղ
 Դամասկոսի թագաւորեց . ծընած էր
 Անշուք տոհմէ . բայց գեղանին կարիկէն
 Զայն ամուսին ընտրեց , և իր տէրութեան
 Միանգամայն ուզեց կարգել պայազատ :
 Մայրըս գըրեթէ զիս ծընած չըծընած
 Մեռաւ . զի երբ ես արգանդէն կ'իլլէի
 Նոյն ատեն նէ կ'անշընչանար . և նոյն օրն
 Եղեռնաւոր անոր մահ , ինձ կեանք կու տար :
 Հազիւ անցած էր հինգ տարի այն օրէն
 Որ նէ վրայէն թօթուեց պատանքը մեռոտ ,
 Հայրս ալ մեռաւ . և կարելի է գընաց
 Ու միացաւ դարձեալ ներս հետ երկինքն ,
 Յանձնելով զիս ու տէրութիւնն իր եղբօր ,
 Զոր միշտ սիրեց խանգաղակաթ կռանդով .
 Եւ ապահով ըլլալու էր հայրս անոր
 Անկեղծութեան մասին՝ եթէ մահացու
 Կուրծքերուն մէջ բընակէր գուժ . լաւութիւն :
 Զիս ինամելու հոգն իր վըրան առած աս՝
 Այնքան փութկոտ ցուցուց ինքզինքն իմ բարեոյս ,
 Որ անխորհակ՝ աննենդ մարդու . որդեսեր
 Եւ բարեգութ հօր մը հըռչակն ունեցաւ .
 Գուցէ իր չար միտքն այն ատեն կը ծածկէր
 Կեղծուպատիր դիմակի տակ նենգօրէն .
 Կամ գուցէ իր իղձերն անկեղծ էին դեռ .
 Զի որոշեր էր զիս որդւոյն հետ կարգել :

“ Մեծցայ ես , նոյնպէս իր որդին . և երբեք
 Ասպետական բարք մ' , ազնիւ ձև մը չառաւ .
 Հաճոյք չազգեց իրեն չըքնաղն ու վըսեմն .
 Ոչ ալ բընաւ վեհագոյն բան մ' հասկըցաւ .
 Տըգեղ դէմքի տակ վատշըւէր ցած հոգի ,
 Գուռոզ սըրտին մէջ զօշաբաղ տենչանքներ .
 Հարժուճներով և վարքով կոշտ՝ լեպեշտի .
 Լոկ ախտերու մէջ ինք իրեն հաւասար :
 Արժանաւոր այդ մարդն էր ինձ որոշեր
 Իբր ամուսին իրնամակալըս բարի ,
 Եւ մասնակից անկողինիս ու թագիս .
 Եւ զայն յայտնեց ալ ինձի շատ անգամներ :

Լեզու , հընարք , հանձար բոլոր բանեցուց
 Իր փափաքած արդիւնքն յառաջ բերելու .
 Բայց չըկըրցաւ առնել խոստում մը բերնէս ,
 Միշտ պատասխանս էր լըռութիւն կամ մեր-
 ժում :

“ Մըռայլ դէմքով մը մեկնեցաւ վերջապէս .
 Ուր ամպարիշտ իր սիրան յըստակ կ'երեւար .
 Ինձ թըլեցաւ վէպն ապագայ վիշտերուս
 Կարգալ անոր ճակատին վրայ դրոշմըւած :
 Հոգեգէշեր և անսովոր երազներ
 Գիշերային . քունըս խռովել ըսկըսան .
 Սարսափ մ'ահեղ տըղաւորուած հոգւոյս մէջ՝
 Էր չուսուցութեանս յայտնի գուժկան բօթաբեր :
 Մօրս ուրուականն ինձի յաճախ կ'երեւար ,
 Պատկեր տըժգոյն և ողորմուկ շարժուձև .
 Որքան փոխուեր էր , աւանդ , սըքան տարբեր
 Իմ առաջուց տեսած իր մէկ նըկարէն :

“ Փախի՛ր , զաւակ , կ'ըսէր . քեզի կը սպառնայ
 “ Սարսափելի մահ մը , փախի՛ր փութապէս .
 “ Երկաթն ու թոյնը կը տեսնեմ ես ահա
 “ Զոր պատրաստեր է ուխտագրութ բըռնաւորն .
 “ Որպէս զի քու անուշ արեւըդ մարէ .. :
 Բայց ինչ օգուտ կանխել գիտնալը սըրտին
 Թէ մօտալուտ վըտանգն հասեր էր արդէն ,
 Երբոր վախէն անփորձ հասակըս մատղաշ
 Էր անձըրկեր մնացեր՝ չէր ելք մը գըտներ :
 Փախչիլ երթալ յօժարակամ աքսորի
 Եւ ելլել մերկ հայրենական երկրէս դուրս
 Հաւ ծանր էր ինձ . և աւելի կ'ընտրէի
 Փակել աչքերս հոն ուր բացեր էի նախ :
 Կը վախնայի՝ ողորմելիս՝ մահուընէ .
 Եւ՝ հաւատալու բան է՝ սիրտ ալ չէի ներ
 Փախչիլ . վախս ալ կը խիթայի յայտնելէ .
 Որ մի՛ գուցէ մահուանըս ժամն երագեն :
 Վ'անցընէի մըշտաչարչար կեանք մ'այսպէս
 Տագնապներու և ցաւերու մատնըւած .
 Դըժնէ երկաթն ամէն բոպէ մերկ վըզի՛ն
 Վրայ իյնալուն սպասող մարդու մը նըման :

“ Այս գիրքիս մէջ բախտն արդեօք ինձ
 ժըպտեցաւ
 Թէ կը պահէր զիս դառնագոյն օրերու .
 Արքունական պալատին մէկ պաշտօնեան՝
 Որուն մարզած էր մանկութիւնն արքայ հայրս ,
 Ինձի յայտնեց թէ իմ մահուանըս համար
 Բըռնաւորէն սահմանուած ժամը մօտ էր ,
 Եւ թէ ինքն այն հրեշին էր խօսք ալ տըւեր ,

Այն միևնոյն օրն ինծի թոյն զամբելու :
 Եւ աւելցուց յետոյ թէ սոսկ փախչելով
 կեանքիս ընթացքը կըրնայի երկարել
 եւ զի տեղէ մ'օգնութեան յոյս չունէի ,
 Պատրաստ ցուցուց ինքզինքն ինծի օգնելու .
 եւ շքնչեց սիրտս այնքան խրատոյս , արութիւն ,
 Որ չըկըրցաւ զըսպել զիս սանձը վախին .
 Որոշեցի գիշեր ատեն հետն երթալ
 Հայրենիքէս , հօրեղբօրմէս փախչելով :
 “ Գիշերն եկաւ արտասովոր մըթութեամբ
 եւ ըզմեզ իր ըստուերներուն մէջն առաւ .
 Աստիճակն՝ երկու օրիորդով մեկնեցայ ,
 Գրծիւմ բախտիս ինէ նտրուած ընկերներ .
 Բայց սակայն իմ արտասուածոր աշուրներս
 կը դառնային դէպ հայրենի պարխապներն .
 եւ մեկնելուս ատեն չէի կըշտանա՛ր
 Բընաւ բընիկ երկրիս վրայ նայելէն :
 Աչքն ու մտածումը նոյն ճամբան կ'ընէին ,
 եւ ոտքն առաջ կ'երթար առանց ուզելու
 նըման նաւին՝ զոր սիրելի ափունքէն
 Գող փոթորիկն յանկարծութեամբ կ'ապշտպէ :
 Գացինք գիշերն և հետեւեալ օրն ամբողջ
 Ուրիշ ոտքի հետքեր չեղող տեղերէ .
 եւ վերջապէս հասանք ամրոց մը որ էր
 իմ տէրութեանս սահմանին մօտ կառուցուած :
 Արոնտին էր ամրոցն , անո՛ր որ եղաւ
 Ինձ առաջնորդ և զիս վտանգէ ազատեց :
 Սակայն գրուածանն երբ իմացաւ իմ փախչիլս
 Իր մահահատ դարաններէն , կատողեցաւ ,
 եւ ձրգեց մեր վըրայ նոյն այն իր եղերն :
 Հրատարակեց մե՛զ երկուքնիս յանցաւոր
 Այն ոճիրին զոր ուզեց ինք վրաս գործել :
 Ըսաւ թ'Արոնտն ինէ կաշառք ուտելով
 Թոյն էր խառնեք ըմպելիքին մէջ անոր ,
 Որպէս զի ես իր մահէն վերջ ըլլալով
 Բողորովն ազատ , անսանձ՝ ինքնատէր ,
 Հետեւելով իմ վաւաշոտ տուիներուս
 երթայի բեր սիղեխի գիրկն իյնայի :
 Երկընքի շանթն , ո՛հ , զիս մոխիր դարձընէ՛
 Զգաստութիւն սուրբ՝ քեզ ուխտագրութ չե-
 ղած գեռ :
 “ Գրծպըհի էր ինծի տեսնել խուժուածին
 քաղցն ու ծարաւն անյագ անմեղ արիւնիս
 եւ ոսկիի . բայց իմ սըրտիկս արիւնեց
 Ուզելով իմ ամբիժ պատիւս ազարտել :
 Ժողովուրդին բարկութենէն վախնալով

Ամպարիշտն իր սուտերն այնպէս կը հիւսէ ,
 Որ ոտք ելած քաղաքն ինծի ի նըպաստ
 Զըզինուի՝ ստո՛յգ իրեն վըրայ կասկածոտ .
 եւ արդ նըստած է թէև իմ գահիս վրան
 եւ ճակտին վրայ կը փայլի պսակն արքունի ,
 Բայց վերջ չի տար աղէտքներուս , կորանքիս ,
 Գազանութիւնն իր այնքան զինք կը մըղէ .
 Ամրոցին մէջ Արոնտն այրել կը սպառնայ
 Եթէ չըլլայ ինք իր կամքով անձնատուր .
 Խեղճիս և իմ ընկերներուս միասին
 Պատերազմ՝ չէ . այլ տանջանք՝ մահ կը գուժէ :
 Կ'ըսէ թէ ա՛յսպէս ընելով կը կարծէ
 Լըւալ ջընջել նախատինքն իր երեսէն ,
 եւ արքունի գահին , արեան պատիւն ալ՝
 Զոր ես տեղէն խախտեցի՝ տե՛ղը հանել :
 Պատճառը վախն է որ չըլլայ թէ խըլուի
 Զեռքէն մահանն որուն ժառանգն ես եմ բուն :
 Զի անկումովս միայն կըրնայ իր գահին
 Աւերակներս ընել նեցուկ անդեղե :
 եւ քրէիքուր պիտ' իղձն հասնի վախճանին
 Զոր մըտքին մէջ դրեր է արգէն բընաւորն ,
 եւ պիտ' արեանս մէջ իր ցատուժը մարի
 Զոր չըկըրցան շիջուցանել արցունքներս՝
 Եթէ արգելք չըլլաս : Տէր , քե՛զ կը դիմեմ ,
 Կ'ապաւինիմ քեզ հէք աղջիկս , որբս , անմեղս .
 եւ իցի՛ւ ա՛յս արցունքն որով թըրջեցի
 Այդ քու ոտքերդ՝ թափել չըտար վերջն արիւնս :
 Այդ ոտքերուդ համար՝ որով կը կոխես
 Ամպարիշտներն ու գողոցներն . այդ ձեռքին
 Համար՝ որով արդարութեան կ'օգնես դուն ,
 Այն քու վըսեմ յաղթանակացըդ համար ,
 Այն սըրբազան տաճարներուն՝ որոնց դուն
 Տըւիր և արդ կը ջանաս տալ օգնութիւն ,
 Իղձըս՝ զոր դո՛ւ միայն կըրնաս՝ կատարէ :
 Քու գըթութիւնդ պահէ թագիս հետ կեանքս
 ալ .
 Բայց գըթութիւնը չի բաւեր . իրաւունքն ,
 Արդարութիւնն ալ պէտք է քեզ յորդորեն :
 “ Երկինքը քեզ շնորհեց , գըրեց ճակատիդ
 Արդարն ուզել . կարենալ ինչ որ ուզես .
 Կըրնաս փըրկել կեանքըս , երկիրս ըստանալ ,
 (Զի պիտ' ըլլայ քեզի երբ ձեռք ձրգեմ ես) :
 Այդ ահագին թիւէն տըրուի միայն ինձ
 Տասն հատ քու էն արիասիրտ քաջերէն .
 Բաւ են ասոնք զիս բոյնիս մէջ դընելու ,
 Քանի որ հետս են ժողովուրդ և իշխան :

Եւ մեծերէն մէկը որուն յանձնուած է գաղտնի դրան պահպանութիւնը՝ ինծի Ձայն խոստացաւ բանալ, ու մեզ գիշերանց Պալատ տանիլ. կը յորդորէ միայն զիս Որ օգնութիւն մը փրցընեմ քու ձեռքէդ. Չընչի՛ն թէ՛ս. աւելի սիրտ կ'առնէ ան քան թէ ուրիշ տեղէ մը մեծ գունդ մ'հասնէր. Գրօջն ու անունը լոկ այնքան կը յարդէ՝ :

Ըսաւ ասոնք ու լուս կեցաւ. կը սպասէ Պատասխանի, բայց այնպիսի կեցուածքով, Որ լըռութեան մէջ ձայն ունի, կ'աղաչէ : Վարանոտ սիրտը Կոփրետի կը ծրփայ կը տատանի և չի գիտեր ո՛ւր հակի : Կը վախնայ դուժ զըրժանքներէ՝ իրագէտ թէ անիկա որ Աստուծոյ չի հաւատար, Մարդըս հաւատք ընծայելու չէ սնոր. Բայց միւս կողմէն գըթած զգացում կ'ունենայ, Որ չի նընջեր ազնուական կուրծքի մէջ : Եւ իր բնածին գութը չէ լոկ որ կ'ուզէ Ձանիկա իր շնորհին ընել արժանի . Այլ և օգուտն ալ կայ . զի երբ նըստի նէ Դամասկոսի գահին վրայ իր ձեռքին տակ, Իրեն պիտի նըպաստուոր ըլլայ շատ, Պիտի բանայ ճամբայ, ընթացքը դիւրէ Իր ծըրագրին, և զէնք, զինուոր և ոսկի Պիտ՝ հայթայթէ Եգիպտոսի դէմ և ի՛ր Հետ դաշնակից կող թուր գունդերուն :

Մինչդեռ այսպէս տատամոտ՝ ա՛շքը գետին Մըտածումները կ'որոճայ Կոփրետոս, Կինն իր աչուին անոր վըրայ սեւեռած՝ Դէմքին գիծերն ուշադրութեամբ կը զիտէ . Եւ պատասխանը կարծուածէն աւելի Ուշանալուն՝ կը հառաչէ կը խիթայ : Վերջապէս ան խընդրած շընորհը մերժեց, Բայց և անուշ, քաղաքավար խօսքերով .

“ Եթէ սուրերը մեր զբաղած չըլլային Այն ձեռնարկին՝ զոր Աստուած ի՛նքն յանձնեց մեզ,

Լաւ կըրնայիր անոնց վըրայ հիմնել յոյսդ, Եւ օգնութիւն գըտնել, ոչ սոսկ գըթութիւն . Սակայն մինչև որ ազատ օդ չըջընչեն Այս իր հօտերն, այս պարիսպներն ընկճըւած, Իրաւունք չէ անօրել մեր զինուորներն Եւ դանդաղել ընթացքը մեր յաղթութեան : Խօսք կու տամ քեզ (և իբր ազնիւ գրաւական Ա՛ն իմ հաւատքըս և եղիւր ապահով)

Որ եթէ վատ լուծէն երբեք ազատենք Այս երկընքին սիրելի սուրբ պարիսպներն, Այն ատեն մենք կը ջանանք քեզ դարձընել Քու կորուսած գահըդ՝ գութէն յորդորուած . Արդ պիտի գութը զիս ընէր ամպարիշտ, Չըտալով նա՛խ Աստուծոյ ի՛ր իրաւունքն՝

Այս խօսքերուն ծոցացաւ Արմիգ, ու գամեց Աչուին գետին, և կեցաւ քիչ մը անշարժ . Յետոյ զանոնք ցօղագին վեր առնելով Եւ ողբական շարժուձևով ըսկըսաւ .

“ Վա՛խ թըշուառիս . երկինքն որո՛ւ սահմանեց

Երբեք կեանք մ՛այնքան զըժընդակ, անփոփոխ, Որ ուրիշին միտքն ու բնութիւնը փոխուի Ժանտաժուտ բախտըս չըփոխուած տակաւին : Ալ յոյս չըկայ, ի գուր կու լամ ու կ'ողբամ . Ալ մարդու սիրտն աղաչանքէ չ'ազդըւիր . Երեւի՞ է յուսալ որ ողբս՝ որ ըզքեզ Չըկակըղցուց՝ ժանտ բըռնաւորն ամոքէ . Չեմ ալ ուզեր բասրել քեզ իբր անողորմ, Ձի գուզնաքեայ օգնութիւն մ'ինձ կը մերժես . Այլ կը բասրեմ Երկինքն . Ի՛նքն է, ի՛նք պատճա՛ղն

Աղէտքներու՝ զի կ'ընէ գութդ անողոր : Ոչ գուն, տէ՛ր, ո՛չ ալ բարութիւնդ է այդպէս . Այլ ի՛մ բախտս է որ կը մերժէ օգնութիւն : Անողորմ բախտ, կղեռնաւոր զըժնէ բախտ, Այս ատելի կեանքն՝ ալ վերցուր, ըսպաննէ : Կարծես զըրկելըդ զիս փոքրիկ չարիք էր Քաղցրը ծնողքէս իրենց ծաղիկ հասակին . Կ'ուզես զըրկուած տեսնել զիս իմ թագէս ալ Եւ իբրև գոհ գերի երթալ դանակին : Եւ զի օրէնքն ըզգաստութեան և նախանձն Երկար բարակ չ'ուզեր որ հոս տընտընամ, Որո՛ւ դիմեմ, ո՛ւր ինքըզինքըս ծածկեմ, Բըռնաւորին դէմ ո՛ւր գըտնեմ ապաստան : Երկընքին տակ անանկ գոց տեղ մը չըկայ Ձոր չըբանայ ոսկին . արդ է՛ր կը յամեմ . Կը տեսնեմ մահն, և չի փախչիլն ի գուր է, Պիտի անոր առջին երթամ ա՛յս ձեռքով : ”

Լըռեց. ցատոյթ մ'արքայական և մեծանձն՝ Իր երեսին վըրայ բուրնկիլ թըլեցաւ . Եւ չըրջելով ոտքը մեկնիլ կը կեղծէ Արհամարոտ և տըխրագին շարժումով : Իր արցունքները՝ բարկութեան և ցաւի՝ Արցունքներ՝ յորդ կը հոսէին աչքերէն .

Եւ այն բըղխող շիթերն՝ արիւոյն շողերէն
 Կը թըւէին մարգըրիտներ ու բիւրեղ :
 Քընքուշ այտերն ողողուն այն ջինջ հիւթով
 Որ կ'իջնէր վար գգեստին ծայրերը մինչև :
 Կը թըւէին կարմիր ձերմակ ծաղկերն ,
 Որոնց վըրայ ցօղի տարափն է շաղեր՝
 Երբ առաջին նըշոյլներուն ցաթելուն՝
 Ջըւարթ սիւքին կը բանան փակ ծոցերնին .
 Կը նայի այգն անոնց վըրայ խանդակաթ ,
 Աւ կը սիրէ պըճնել ծամերն անոնցմով :
 Բայց վըճիտ հիւթն որ կաթելով անընդհատ
 Կը գարգարէ ձիւն ծոցն , այտերն անուշիկ ,
 Կ'արատարէ կրակ՝ որ սողալով ծածկօրէն
 Բիւր կուրծքերու մէջ հոն հըրդեճ կը հանէ :
 Ա՛վ հրաշալի Սէր , որ կայծեր կը փըրցնես
 Արցունքէն , սիրան ալ կը վառես ջուրին մէջ :
 Քու զօրութիւնըդ գերբնական է յաւէտ ,
 Բայց Արմիդի համար զուն քեզ կը գըլես :

Կը խըլէ կեղծ ցաւն աչքերէն շատերու
 Իրաւ արցունք . կը կակղէ կարծր սըրտերն :
 Նէրա վըրայ կը մեղքընայ ամէն մարդ ,
 Եւ ամէն մարդ ինքն իրեն ա՛յսպէս կ'ըսէ .

“ Եթէ Կոփրեա նէրա խընդիրքը չընէ ,
 Անշուշտ խըմեր է կատաղի վագրի կաթ ,
 Եւ զայն ծըներ է ահուելի ժայռ մ'ալպեան ,
 Կամ ծովուն մէջ փըշրող ալիքը փըրփրուն ,
 Անսիրտ , այդ գեղն յուզել սպառել կ'ըլլա՞յ
 մի' : ”

Բայց պատանեակն Եւստաքիոս՝ որուն մէջ
 Գուժի , սիրոյ բոցն աւելի է բորբոք ,
 Ուրիշը մինչ կը հըծծէ կամ կը լըռէ ,
 Առաջ անցած յանդըգնօրէն կը խօսի .

“ Ա՛վ հարապատ և տէր , առջի՛ սածիլ վրայ
 Միտքըդ չափէ գուրս յամառոտ է և պինդ՝
 Հասարակաց եթէ կամքին՝ որ կ'ըզձայ
 Եւ կ'աղաչէ՝ քիչ մը տեղիք տալ չուզէ :
 Ես չեմ ըսեր թէ իշխաններն՝ որոնք հոս
 Ունին ընկճեալ ժողովուրդին վըրայ հոգ՝
 Այս պաշարուած պարիսպներէն ետ քաշուին .
 Երեսի վրայ թողլով իրենց պաշտօններն .
 Այլ ինքնակամ զինուորներու մեր գունդէն՝
 Որ մասնաւոր բեռ մը չունի , և քիչ շատ
 Ուրիշներու հըրամայող օրէնքէն
 Ազատ ալ է , կըրնաս ընտրել տասն հոգի
 Արդարութեան վերամարտիկ պաշտպաններ .
 Մարդ մ'որ անմեղ կոյսի պաշտպան կը կենայ ,

Ըսել չէ թէ Աստուծոյ չի՛ ծառայեր .
 Եւ ըսպանուած բըռնաւորին աւարներն՝
 Երկընքին շատ հաճոյական ձօներ են .
 Արդ եթէ զիս չըքաշէ՝ ալ ձեռնարկին
 Այն ըստոյգ շահն՝ որ նէրամէ կը սպասուի ,
 Կը դըրդէ պա՛րտքը , զի ուխտած է մեր կարգն
 Օրինորդաց ըլլալ թիկունք և պաշտպան :
 Ա՛հ , քա՛ւ լիցի , Ֆրանսայի մէջ և ուր որ
 Ացնըւական բարքերն յարդի են՝ չըսուի
 Թէ արդար , սուրբ դատաստանի համար մենք
 Յոգնութիւնէ կամ վըտանգէ կը խորշինք :
 Ես սաղաւարտս ու զրահըս հո՛ս կը դընեմ ,
 Հոս կը քակեմ սուրս . և Աստուած չընէ ա՛լ
 Որ անարժան կիրպով գէնք . ձի գործածեմ ,
 Կամ թէ երբեք շորթեմ անուն ասպետի : ”

Այսպէս կ'ըսէ , և բոլոր կարգն իրեն հետ
 Հընչուն ձայնով միաբերան կը գօչէ
 Եւ առաջարկը օգտակար և բարի
 Համարելով Կոփրեաին շուրջը կ'առնէ
 Աւ կ'աղաչէ , կը թախանձէ , կը ստիպէ :

“ Տեղիք կու տամ , կ'ըսէ Կոփրեա այն ա-
 տին ,
 Յաղթընցայ ձեր համաշունչ խըմրումէն .
 Նէ խընդրած շնորհն ունենայ թող՝ թէ կ'ուզէք .
 Իմ խորհուրդովըս չէ սակայն՝ այլ ձերին :
 Բայց Կոփրեաին վըրայ ունիք եթէ զուր
 Քիչ մ'համարում՝ չափ դըրէք ձեր տենչերուն : ”

Այսչափ ըսաւ լոկ , անոնց ա՛ս ալ բաւ է
 Որ ընդունի անոր զիջումն ամէն ոք :
 Ի՞նչ չեն կըրնար չըքնաղ կընող արցունքներն
 Ու սիրակաթ լեզուի խօսքերն անուշակ .
 Շըղթայ մ'ոսկի կ'ելլէ կտրմրուկ շըրթներէն
 Եւ հոգիները կը կապէ իր կամքին :
 Կը կանչէ զայն Եւստաքիոս և կ'ըսէ .

“ Ա՛լ կըտրէ ցաւըդ , գեղանի օրինորդ .
 Պիտ՝ ունենաս մենէ փուժով օգնութիւն
 Քու տագնապիդ պահանջածին համեմատ ” :
 Արմիդ պարզեց մնայլ նըշոյլներն այն ա-
 տին

Եւ երեւցաւ այն աստիճան ծիծաղիտ ,
 Որ իր գեղին սիրահարցոց երկինքն իսկ ,
 Գողարիկ քօղովը սըրբելով աչուըններն :
 Յետոյ անոնց անուշ , սիրուն խօսքերով
 Բարձր շնորհին համար եղաւ շնորհակալ .
 Ըսաւ թէ միշտ իր սըրտին մէջ քանդակուած
 Եւ աշխարհի յաւէտ յայտնի պիտ' ըլլայ .

Եւ ինչ որ չի կրնար լեզուն բացատրել ,
 Լուս պերճ բարբառը պարզեց իր շարժուածքով .
 Եւ այնպէս լաւ ծածկեց այն կեղծ ու պատիր
 Գիմակին տակ մըտածումներն իր սրբտին
 Որ ուրիշի բընաւ կասկած չըտըւաւ .
 Արդ տեսնելով որ ժըպտեցաւ բախտն այլ ևս
 Խարդաւանող իր նենգին մեծ ըսկըզբին ,
 Իր մըտածումը տակաւին չընգհատուած՝
 Կորոշէ գլուխ հանել իր գործն ապիրատ .
 Չըբնազ գէմքով , շարժուածեով քաղցրանուշ՝
 Ընել ինչ որ չէին կըրցած Մեղէա ,
 Կիրկէ իրենց դիւթանքներով , և ձայնով
 Պարկներու , գեղզկներով իր գողտրիկ՝
 Բընացընել մըտքերն էն լուրջ և արթուն :
 Կը բանեցնէ ամէն հընարք՝ որպէս զի
 Իր ցանցին մէջ նոր սիրահար մը որսայ .
 Ոչ ամենուն հետ , և ոչ միշտ կը պահէ
 Միւնոյն գէմքը , շարժումներն ու կերպերն ,
 Այլ կը փոխէ ժամանակին համեմատ :
 Մերթ ամծծլեած ակնարկն իր մէջ կ'ամփոփէ ,
 Մերթ կը շըրջէ զայն թափառոտ և յայրատ ,
 Եւ խարագանն ու սանձը ձեռքը առած
 Աս կը մըղէ սիրելու , ան կը ստնձէ :
 Երբ տեսնէ մէկն որ իր սէրէն ետ քաշէ
 Սիրան , ու զըսպէ մըտածումներն՝ անվըստահ ,
 Բընքուշ ժըպիտ մը ցուցնելով՝ կը շըրջէ
 Ասոր վըրայ աչքերը ջինջ ու զըւարթ .
 Մըտարկելով այսպէս տեսներն հեղզ ' Երկչոտ ,
 Երկմիտ՝ տարտամ յոյսին խրախոյս կը շընչէ ,
 Եւ տարփանքները վառելով սիրահուր՝
 Կը հալէ սառը երկիւղէն կուտակուած :
 Խակ երբ ուրիշ մ'առաջնորդուած զաչացու
 Յոխորտ պետէն՝ յանդըգնօրէն չափն անցնի ,
 Աչուըններէն աղուոր , քաղցրիկ խօսքերէն
 Կը զըրկէ զայն , կ'ազդէ երկիւղ՝ մեծարանք :
 Սակայն նըշոյլ մը գըթուլթեան կը փայլի
 Այնու հանգերձ իր բարկացած գէմքին վրայ .
 Որով գէմինը վախնայ խակ , չի կըտրեր
 Յոյսը , և որչափ ալ նէ խրոխտ երեւայ ,
 Միւն աւելի կը պակշոտի կաթոգին :
 Երբեմըն քիչ մ'ատեն մէկդի կը քաշուի ,
 Եւ ցաւագին ձեւ մը կու տայ իր գէմքին
 Ու կեցուածքին . և կը հանէ ստէպ արցունքն
 Աչքերուն վրայ և յետոյ ներս կը մըղէ :
 Եւ կը ստիպէ՝ այս նենգաւոր հնարքներով՝
 Արտասուելու միամիտ բիւր հոգիներ .

Սիրոյ սլաքները գըթուլթեան կըրահով
 Կը ջըրդեղէ՝ որ կուռ գէնքէն մեռնի սիրտն .
 Յետոյ կարծես այն մտածումները վանած
 Եւ նոր յոյսեր արթընցած իր սրբտին մէջ .
 Սեղիկներուն կ'ուղղէ իր ոտքն ու խօսքերն ,
 Եւ ցընծուլթեամբ կը զարգարէ իր երեսն .
 Եւ փայլակել կու տայ զերդ ջուխտ մ'արեգակ՝
 Յաւին տըխուր և դէզագէզ ամպին վրայ
 Չոր նախ անոնց սրբտին չորս գին էր կուտեր՝
 Աըճիտ նայուածքն ու իր ժըպիտն երկնային :
 Այսպէս անուշ խօսքով , անուշ ժըպիտով
 Կը գինուցնէ զգայարանքները անոնց ,
 Անոնց կուրծքէն գըթուլթէ հոգին կը քեցէ ,
 Այն անասհաման հեշտանքներուն դեռ անվարժ :
 Ո՛հ անգուլթ Սէր , որ միապէս կը սպաննեն
 Մեղըն ու օշինդըրը զոր մեղի կը բաշխես .
 Եւ միապէս ամէն ատեն մահարեր
 Կու գան քենէ սպեղանիներն ու ցաւերն :
 Այնքան ներհակ տրամագրուլթեանց , սառոյցի
 Եւ կըրակի , արտասուքի՝ ժըպիտի ,
 Վախի՝ յուսոյ մէջտեղը այն խարուհին
 Կը խաղցընէ զանոնք մատի վրայ առած .
 Ու մէկն եթէ համարձակի զողոջուն՝
 Տըկար ձայնով իր քաշածներն ակնարկել ,
 Կարծես անվարժ գեռ սիրոյ մէջ՝ կը կեղծէ
 Խօսքերուն մէջ հոգին յայտնի չըտեսնել :
 Կամ բըռնելով պարկեշտօրէն աչուին վար
 Կը զարդարուի համեստուլթեան շիկնումով .
 Այնպէս որ թարմ՝ ձիւն շուշանները քընքուշ
 Անուշ գէմքին վարդերուն տակ կը ծածկէ ,
 Այդպէս առտուն կանուխիկի զով ժամերուն
 Կը տեսնուի արշալոյսն իր փըթթելուն :
 Յասման կարմիրը միասին ելլելով
 Շիկնումին հետ՝ կը խառնուին իրարու :
 Բայց երբ մէկուն շարժումներէն կըռահէ
 Որ կը փորձէ յայտնել իր բոց բաղձանքներն ,
 Երբեմըն խոյս կու տայ , երբեմըն առիթ
 Որ խօսի ան , և նոյն ատեն կը ստնձէ .
 Այսպէս բոլոր օրն ընդունայն պատրանքով
 Կը յոգնեցնէ , յոյսն ալ կըտրել կու տայ հուսկ .
 Ան կը մընայ որսորդին պէս որ քըշած
 Կենդանւոյն հետքն իրիկուան գէմ կորսընցուց :
 Այս հնարքներով կըրցաւ գերել շըղթայել
 Գաղտագողի նէ բիւրաւոր հոգիներ .
 Այս գէնքերով գանոնք խըլեց մանաւանդ
 Եւ բըռնուլթեամբ ըրաւ Սիրոյ ծառաներ :

Արդ ինչ զարմանք որ սէգ Աբիւլն ու Հերակլ
եւ Թեոէոս եղան Սիրոյ գերիներ,

Երբ Քրիստոսի Համար կապո՞ղն անգամ սուր՝
Կը պըրկըւի երթեմն անոր կապերով:
Թարգմ. Հ. ԱՐՍԷՆ ՂԱԶԻԿԵԱՆ



Հայ նախարարութիւնները

(Շար.)

ԱԳՐԱՏՈՒՆԻՔ . — Ոստան՝ Դարիւնք
(Պայագիտ), յետոյ Բագարան, յետոյ
Երազգաւորս, յետոյ Անի: Երկիր՝
Սպեր, յետոյ Կոզ, յետոյ Արշարունիք, Շիրակ:

Այս նախարարութիւնը ամենէն նշանաւոր-
ներէն էր թէ՛ իր սեպհական բարձր պաշտօնով
իբր թագակապ «Արշակունի» հարստութեան
թագաւորներուն, թէ՛ իբր հիմնադիր Հայաս-
տան ու մերձակայ երկու երկիրներ (Վրաստան,
Աղուանք) թագաւորող հարստութեանց, եւ թէ
առ հասարակ իր մէջէն ընծայած աւագ անձնա-
ւորութիւններով՝ իբր մեծ դերակատար մեր
ազգի մէջ, ինչպէս նաեւ Պարսիկ արքունիքի
մօտ:

Բիւզանդի բառերով, Բագրատունիները
« թագաւորքն՝ թագակապքն լեալ էին ՚ի բնմէ
ազգին թագաւորութեանն արշակունւոյ » (Թա-
գաւոր հոս հոմանիչ է թագակապի, թագ բե-
րող իմաստով, աւոր=աւուր, պարսկերէն ա-
ւուրտէն բայէն), եւ այդ թագակապ մակդիրին
հետ միասին կը կրէին նաեւ Ասպետ մակդիրը՝
որ այս նախարարութեան նահապետին միայն
յատուկ է, այնպէս որ շատ անգամ լոկ « Աս-
պետն » ըսելով կը շատանան մեր պատմիչները
նշանակելու համար Բագրատունիներու նահա-
պետը:

Պատճառ չկայ հաւատք ընծայելու Խորե-
նացիի աւանդածին թէ Բագրատունիները սպա-
րապետութեան պաշտօնն ալ ունեցած ըլլան,
իբր թէ Արտաշէս Բ., Խոսրով Գ. անոնց նահա-

պետին հաւատալով « զամենայն զօրս Հայոց ».
վասն զի Բիւզանդի բացորոշ, ամենայտակ
վկայութիւնն ունինք, պարագայական խառն
մանրամասնութիւններով թէ « ՚ի բուն ՚ի նախ-
նեացն կարգաց » « ՚ի վերայ իշխանութեանն
բովանդակ՝ ՚ի վերայ ամենայն զօրաց զօրավա-
րութեանն բազմութեանն Հայոց մեծաց » պաշ-
տօնը կը պատկանէր Մամիկոնեան ցեղին « Բա-
րիանուն՝ իրաքաջ ՚ի մեծի նահապետութեան
պատերազմի »: Մամիկոնեան տոհմը կը կոչուի
« ազգ սպարապետութեան Հայոց »:

Բիւզանդ Մամիկոնեան տոհմը կը կոչէ
« ազգ սպարապետութեան Հայոց »: Եւ այս
պաշտօնը այնքան անլիքնելի, հոստատ իրա-
ւունքը նկատուած էր իրենց, որ երբ Խոսրով
Բ.ի օրով Մամիկոնեան Վաչէ մեծ զօրավարը
ինկաւ Պարսից հետ սաստիկ պատերազմի մը
մէջ, Վաչէի որդին՝ փոքր մանուկն Արտաւազդ
« ՚ի հայրենի բարձ գահուն մատուցանէին . . .
ասաջի թագաւորին զհօրն պատիւն (պատիւ=
պսակ) որմէ Եղիշէի մէջ « պատուավուր »ը=
պատուաւոր) ՚ի գլուխն գնէին, եւ զսպարապե-
տութեանն նորուն տեղի »: Եւ որովհետեւ մա-
նուկ մը արդեամբ սպարապետութեան գործ
չկրնար տեսնել, իբր խնամակալ եւ առժամեայ
զօրավար կարգուեցան Արշաւիր Կամսարակունն
ու Սիւնեաց Անդոկ իշխանը, եւ այս երկուքը
մանաւանդ քան ուրիշ որ եւ է երկու իշխան-
ներ, սա բնորոշ հանգամանքով « զինքա փե-
սայք էին տանն Մամիկոնեան տոհմին »: Այս-
պիսի բացառիկ պարագաներու մէջ միայն կըր-

նար առկախ մնալ Մամիկոնեանց մէջ որդւոց որդի սպարապետութեան յաջորդութիւնը , զոր օրինակ դարձեալ երբ թագաւորը հաւատալով քսութեան մը թէ Մամիկոնեան սպարապետը իրեն կը դաւաճանէ եւ իր տեղ թագաւորել կը կը խորհի՝ կը բառնար անկէ այդ պաշտօնը (ինչպէս եղաւ Վարազդատի օրով կարճ ժամանակի մը համար) , կամ երբ , ճգնաժամի մը ատեն , հարկ կը համարուէր օգնական՝ նիզակակից տալ ուրիշ կարող իշխաններ : Ծիշդ այս կերպով կը յիշուի Բագարատ Բազրատունի « նիզակակից զօրավարին Հայոց » (Բիւզ. Գ. գ) եւ առանց տարակոյսի , երբ նոյն Բագարատը կը կոչուի « մեծ իշխանն սպարապետութեան » (Բիւզ. Գ. ք) Մամիկոնեանց ժառանգական պաշտօնին իրենցմէ բարձուը չի նշանակեր առ , այլ պարզապէս բացառիկ պարագայի մը մէջ (Արտաւազդի անչափահասութիւնը) առժամեայ տեղակալութիւն մը : Այսքան սահակասելի վկայութեան դէմ ուղղակի բողոքել կը խորոյի նոյն իսկ Խորենացի , որ խնամով կը հեռացնէ կը տանի Բագրատունիներու կարծեցեալ սպարապետութիւնը Բիւզանդի պատմութեան ընդգրկած չըջանէն զուրս գէպի անդը (Արտաշէս Բ.ի օրերը) ու գէպն այսր (Խոսրով Գ.ի օրերը) : Բայց չըքաշուիր Սահակ Բագրատունին սպարապետութեան տիրողսով ճոխացուցած ատեն , Մամիկոնեան նահապետը խոնարհեցնել « զինակիր »ի մը աստիճանին (* Խորենացի Գ. իբ. իե) : Սպա-

(*) Տեղն է յիշելու որ Խորենացի ուրիշ նախարարի ալ պարզեւթ է Մամիկոնեանց այս սպարապետութեան տիրողսը , զոր օրինակ երբ Ազատանգեղոսի մէջ առանց տոհմանունի լոկ Արտաւազդ անունով տեսած Տրդատի ըսպարապետը Խորենացի կ'ընդլայնէ Արտաւազդ Մանդակաւնի , « ազատ » տոհմ մը որ նախարարական պաշտօններու է նոյն իսկ կեանքի մէջ աննշան , անյիշատակ մնացած է : Ընդհակառակն , Բիւզանդէ դիտենք Թէ Տրդատի որդւոյն Խոսրով Բ.ի օրով սպարապետն էր « Վաչէ որդի Արտաւազդայ ի Մամիկոնէն տոհմէն , զորավար ամենայն Հայոց մեծաց » ուստի Տրդատի օրով սպարապետ Արտաւազդը այս Վաչէի հայր Արտաւազդ Մամիկոնեանը պէտք է եղած ըլլայ : Արտաւազդ , Վաչէ մեծ հօրմէ Թոռին անցնող անուններ էին Մամիկոնեանց մէջ : Ազատանգեղոս երկու անգամներ « իշխանն սպարապետութեան » կը յիշէ առանց անուն տալու , ճիշդ ինչպէս կը յիշէ « իշխանն Թագակապ իշխանութեանն » ինչ որ նշան է Թէ նոյն ժանօժ ընտանիքին մէջ կը մնար պաշտօնը :

րապետութիւնը Բագրատունիներու անուան հետ կապելու այս յամառ ջանքէն աւելի չկայ բան մը որ Խորենացիի չարագրութեան — ինչպէս կը ներկայանայ մեզի այժմ — ժամանակը մատնանչէ իբր վեցերորդ դարուն վերջերը կամ եօթերորդի սկիզբները , երբ նախարարեան դասին մէջ գերակշռութիւնն անցեր էր Բագրատունիներուն , երբ չկար Մամիկոնեան մը կամ ուրիշ որ եւ է նախարար՝ Վրկան մարզպան Տէր Արմաւատ մեծափառ Բագրատունի իշխանին հետ համեմատելի , երբ այնքան կը տկարանային Մամիկոնեանք որ եօթերորդ դարուն առաջին կէսին մէջ հայ նախարարներուն Արարաց լուծէն ապրտամբելու խորհուրդէն քակուողը կ'ըլլար Վարդանի ցեղէն՝ Մամիկոնեան տոհմէն . նահապետ մը՝ Մուշեղ « զի էին նորա չորս որդիք ի պատանդի առ Իսմայելացոցն » (Սերէոս Գ. ԼԼ) — չըմեղանք մը որ իրեն ալ 'ի նպաստ կրնար բերել երբեմն Վասակ Սիւնեաց իշխանը Վարդանանց միաբանութիւնէն քակուելուն համար :

Բագրատունիներու ծագման մասին երկու ներհակ աւանդութիւններու կը հանդիպինք . առաջինը Սերէոսի մօտ (Գլուխ Ա. *) որ սուտ Ազատանգեղոսի յոյն բնագրէն առնելով ընդի Հայ կը ներկայացնէ զանոնք Հայկի որդի Արտմենակի ցեղէն Փառնաւազեան Բագրատի մը անունով Բագրատունի կոչուած : Երկրորդը կը գտնենք Խորենացիի մօտ որ հրէական ծագում կուտայ անոնց՝ կարգ մը զրոյցներու եւ փաստերու վրայ յենլով : Խորենացիին ծանօթ էր առաջինը , եւ սնոր աղբւրն ալ , որուն արհամարհոտ ակնարկութիւն մը կ'ընէ « անոճ բանք » եւ « կակազանք » կոչելով գրութիւնը , տեսակ

(*) Թէպէտ շատ բանաբնիներ Սերէոսի Ա. գլուխը անհարազատ կը համարին և ոչ բուն Սերէոսի գրութիւնը , սակայն շատ մը ասութիւններ , և աշխարհագրական բացատրութիւններ հասարակաց ըլլալուն Թէ Ա. գլուխին և Թէ Գ. գլուխին մէջ , տարակոյս չմտար Թէ նոյն գրչէն են երկուքն ալ : Թուենք հոս մէկ բանին « Դրոշմել վիպասանութիւն » , « իշխատակել առասպելս » , « առասպելս վիպասանելով » , « փախտական գնաց » , « ոչ կարաց զղճ ունել » , « զօրութեամբ հարկանէ » , « յերկիր կործանեալ » , « զվայրն առապար » , « ապտամբեալ ի բաց կացին » , « եղև պատերազմ մեծ » , « նեղ վայր » , « չունաց գնաց » , « Բահլ Շահաստան » , « երկիրն Հայոց մինչև ցեւառն մեծ կապկոհ » , « Զարասպ » , և այլն :

մը ինքնավստահ յոխորտութեամբ իր հակաորի գերազանց արհեստին վրայ, թէպէտ այդ արհամարհանքը արգելք չեղաւ իրեն մեծապէս օգտուելու Սերէոսի այդ տկար նախադիմէն Հայ պատմութեան սկիզբներուն: Սերէոսի այս Ազուխը գուրկ է պատմական որ եւ է արժէքէ, եւ լի է ամենախոշոր սխալներով ինչպէս Ասորեստանցեաց թագաւորներուն տիրելը Հայաստանի վրայ «մինչեւ ցմեռանելն Սենեքարիմայ» ապա ապստամբին «յԱսորեաց թագաւորացն ծառայութենէ» (մինչդեռ ստոյգ աղբւրներէ գիտենք թէ ճիշդ հակառակն է իրողութիւնը) Փառնաւազեան Բագարատի ծննդաբանութիւնը՝ «Բագարատ ծնաւ զԲիւրատ, եւ Բիւրատ ծնաւ զԱսպատ (Ասպատ մակդիրը յատուկ անունի վերածուած), Բագարատունիներու սերնդին Անգեղատուն գաւառը իրենց կալուած ունենալը «եւ որդիքն Բագարատայ ժառանգեցին զժառանգութիւնս իւրեանց՝ ի կողմանս արեւմտից, այսինքն է Անգեղատուն, վասն զի կոչեցաւ Բագարատ եւ Անգեղ, զոր ՚ի ժամանակին յայնմիկ ազգ բարբոսացն աստուած կոչեցին» որով կը կցէ Բագարատն ու Անգեղատուն գաւառին անձնաւորիալ անունը անձնարին խառնակումով մը, մինչդեռ Բիւզանդէ եւ ուրիշ պատմիչներէ գիտենք թէ Բագարատունիները Հայաստանի հիւսիսը Սպեր գաւառէն էին, եւ հարաւային-արեւմուտքը՝ Ծոփքի (որուն մասն էր Անգեղատուն) մէջ Բագարատունի գաւառատէր բնաւ յիշատակուած չէ՝ ո՛չ Ասորեստանցեաց արձանագիրներու մէջ, ո՛չ ուրիշ տեղ, եւ բոլորովին տարբեր նախարարութիւններու անունը կուտայ Բիւզանդ երբ կը յիշէ այդ կողմերու նախարարները, ինչպէս մեծի Ծոփաց իշխանը, փոքր Ծոփաց Շահունի իշխանը, Անձիաի իշխանը, եւն:

Խորենացիի հաւաստումը թէ Բագարատունիները հրէական ծագում ունին երկու սրենքու վրայ կը կենայ. մին՝ նախարարական տոհմերու մէջ կամ նկատուածը զրոյցներ, միւսը՝ Բագարատունիներու մէջ գործածական անուններու երախական նկարագիրը: Այս վերջինը աներկբայօրէն ուղիղ է, թէպէտ ստուգաբանութիւնը թերակատար ձգած է Խորենացի: «Բայց ծանի՛ր զՍմբատդ անուն, զոր յաճախ Բագարատունիք ՚ի վերայ պատանեաց կոչեն, ճշմարիտ Շամբաթ է

ըստ նախնի իւրեանց խօսիցն՝ որ է երբայեցի»։ Իսկ Շամբաթ է Շարբաթ, ինչպէս է Պարսկերէնի մէջ եւս Շանբատ (նոր Շանբա) Սարբաթի տեղ, ինչպէս Սանսկրիտ Սիտտանտա եղած է Սինտինտ, եւ Արամէական Սաղգիկ եղած է պարսկերէնի մէջ Չանդիկ(1): Եւ երբ այս եւ Բագարատունի ուրիշ անուններու երբայական ըլլալը ճանչցուի, զժուարութիւն չի մնար հաւատալու Խորենացիի աւանդած զրոյցներուն շաբաթը պահելու, թշխատութեան, պատկերներ անարգելու, զոհի միս ուտելու, ուրիշ նախարարութիւններէ կին առնելու արգելքի եւնի մասին, ինչպէս նաեւ Բագարատունիներուն մէկ զօրաւոր եւ իմաստուն նահապետին՝ իր միամիտ ծառայութեանը եւ անձնատուր ձեռնտուութեանը համար Արշակունի հարստութեան հիմնադրին շնորհակալութիւնը ստանալուն եւ թագադիր կարգուելուն մասին:

Յովսեփոսէ գիտենք թէ Հրեաներ Պարթեւաց թագաւորներու կողմէ սատրապ կարգուած են Բաբելաստանի նման կարեւոր գաւառի, թէ ամենահին ժամանակներէ ի վեր հրէական կարեւոր գաղութներ բռնաբար տարուած հաստատուած են Բաբելաստան, Մարաստան, Միջագետք եւ Հայաստան: Հայաստանի մէջ, Բիւզանդ կը պատմէ իր սովորական չաչազանցող ոճով, բազում նշանաւոր քաղաքներ կային, ինչպէս Երուանդաշատ, Չարիշատ, Չարեհաւան, Վան, Նախճուան որոնք քանի մը պատիկ աւելի Հրեայ բնակիչ ունէին քան Հայ՝ գատուով գելի տարուածներուն թիւէն: «Չայս ամենայն բազմութիւն Հրէից ամալ էր յերկրէն Պաղեստինացեաց մեծի թագաւորին Հայոց Տրգարանայ» եւ ինչպէս ուրիշ տեղեր, Հայաստանի մէջ ալ անօրինակ կերպով կ'աճէին ու կը բարգաւաճէին, եւ զարմանք չէ որ կարեւոր գիրք գրաւելով երկրին մէջ, վեհապետին — մանաւանդ նորահաստատ հարստութեան մը հիմնադրին — ճարպիկութեամբ կարեւոր ծառայութիւն մատուցանելով եւ հաճելի ըլլալով՝ բարձր պաշտօն մը ձեռք բերած ըլլան՝ ինչպէս Բագարատունեանք: Կը մնայ լուծել Բագարատ ան-

(1) See Literary History of Persia, Prof. E. G. Browne, 1902, էջ 160:

ուան մէջի բազ արմատին ոչ-երրայական , այլ հնտ-եւրոպական ըլլալուն առեղծուածը , զի բազ (baga) աստուած կը նշանակէ պարսկերէն , եւ Բագարատ հաւանօրէն Աստուածատուր (Թուրքերէն Ալլահվէլէտի, Թուրքմէններու լեզուով Թնկրօղլու), բայց առ այս կ'ուրաւէ մըտադրութիւն հրաւիրել սա կէտին թէ շատ անգամ տոհմանուն եւ ազգի անուն կը ստանան ընտանիքներ եւ ազգեր իրենց շրջակայ անձերէ կամ ազգերէ, եւ ինչպէս որ Ալլահվէլէտի անունէն Հայու մը Թուրք ըլլալը չկրնար ապացուցուիլ, այնպէս ալ լոկ Բագրատունի տոհմանունը չի զօրեր հերքելու Բագրատունիներուն այլուստ վկայուած հրէական ծագումը :

ՄԱՄԻԿՈՆԵՍՆԻՔ . — Բուն կրկիր Տայոց գաւառ (ուր ունէին Էրախանի բերդը), յետոյ Տարօն (ուր արդէն Գ. դարէն ունէին իրենց կայուած Ողական անուանի բերդը՝ Եփրատի եզերքը), յետոյ Արարատի մէջ այլեւայլ տեղեր՝ գլխաւորապէս Արագածոտն , նաեւ Գուքարքի մէջ Տաշրաց գաւառ (Լօսի) :

Մամիկոնեանք աւագ նախարարութիւն էին, ինչպէս պէտք է սպասել իրենց ժառանգականօրէն սպարապետութեան կարեւոր պաշտօնն ունենալէն : Այս պաշտօնը , ամէն հասանականութեամբ , իրենց տրուեցաւ սկզբնաբար Հայ Արշակունի հարստութեան հիմնադրէն Տրդատ-Արտաշէսէ , որ Պարսկաստանի Արշակունիներուն հաստատած կարգ-կանոնին վրայ ձեւելով կազմակերպեց հայ նախարարութիւնը, եւ պաշտօններ սահմանեց , ինչպէս Սուրէնը (Surena) Պարսկաստանի մէջ թագակապ էր ժառանգական իրաւունքով, նոյնպէս ալ Մամիկոնեան մը սպարապետ էր Հայաստանի մէջ : Այս պաշտօնի բերմամբ , ինչպէս նաեւ այս ցեղին անգամնւրուն հիանալի յատկութիւններով, խիստ մեծ է Մամիկոնեանց զբաւած տեղը հայ պատմութեան մէջ : Արժանահաւատ ժամանակակից պատմիչներու վկայութեան համեմատ , հանրածանօթ ճշմարտութիւն էր թէ ամէն առթիւ հայրենիքի օգտին , պաշտպանութեան նուիրուելու առաջաւորութիւնը ցուցուցած են , եւ մեծամեծ վտանգներու ու մահերու մատնուած՝ մինչ ուրիշները զանոնք նեղը մղելով յետոյ հեռուն պահած են ինքզինքնին, թէ եւ ոչ մէկ նշանաւոր գործ գլուխ ելած է առանց Մամիկոնեանի

մը առաջնորդութեան , թէ միշտ անձնամտաց ազնուամտութեամբ՝ հայրենիքի բարիքը նախընտրած են քան իրենցը , եւն : Թէ՛ Բիւզանդ եւ թէ՛ Ղազար Փարպեցի բաւական ածական չեն կրնար գտնել Մամիկոնեանց յատկութիւնները թուելու համար , եւ վերջինը կ'աւելցընէ թէ ասոնք ամենուն ծանօթ էին « վասն զի տեսեալ էր ամենեցուն եւ լիով 'ի գրոց(1) ճանաչէին . . . տեղեկացեալ ճանաչէին ամենեքեան » : Ստուգիւ , եթէ Ե. դարու Վարդանի փառքը մեծահոշակ հնչած է , ու Վահանինը ոչ նուազ ընտելացած ամենուն ականջին , Մամիկոնեան տոհմը տասնեակներով կը համրէ անոնց արքական ընդդիմադրութեան , հայրենիքի անձնանուէր պաշտպանութեան փառակիցներ : Ինչ որ Վարդան ըրաւ 451ին , դարձեալ համանուն Մամիկոնեան ուրիշ Վահան մը ձեռնարկեց ընել 591ին՝ Պարսից Խոսրով թագաւորի օրով՝ Պարսիկներէ ապստամբելու նշանը տալով . Է. դարուն մէջ՝ Արարաց դէմ նորէն Մամիկոնեան մըն է (Տիրան) որ նախարարները կը հրաւիրէ միաբանիլ , եւ երբ ասոնք անսխալ կը մնան , իր սեպհական փոքր ուժով զէն ի ձեռին կը զիմագրաւէ ու կը մեռնի : Ը. դարուն վերստին Մամիկոնեան մը (Մուշեղ) Արար ստիկաններու դէմ զլուխ կը վերցնէ , ու միւս նախարարները իր շուրջ կը հաւաքէ : Նոյն դարուն մէջ Մամիկոնեան Դաւիթ եւ Գրիգոր իշխաններն են որ երբ համոզանքը չզօրեր՝ Բագրատունին միացընելու իրենց ապստամբելու ձեռնարկին , բռնութեան կը դիմեն ու կը կորացնեն զանի : Պատահած է նոյն իսկ որ Հայաստանի գահը թափուր մնացած պարագային , տեղապահի կամ մանուկ արքայի խնամակալի գրեթէ թագաւորական պաշտօնը վարած է Մամիկոնեան մը , ինչպէս ըրաւ Մանուէլ Մամիկոնեան Գ. դարուն մէջ , եւ հաւանօրէն Մամիկոնեան մը (Արտաւազդ) Գ. դարուն մէջ (260էն 280) վասն զի Արշակունի մը չէր կրնար ըլլալ, ոչ ալ թագաւոր՝ Պարսից բարեկամ այն Արտաւազդը զոր արտաքին պատմիչներ Հայոց թագաւոր կ'ա-

(1) Հոս «ի գրոց» ըսելով Ղազար, անշուշտ կ'ակնարկէ Բիւզանդ եւ Ազածանգեղոս , (որոնց առաջինը մանաւանդ Մամիկոնեանց փառաբանութիւնը անպակաս կ'ընէ) բայց ոչ խորենացին , որ Ե. դարու պատմիչներու հասարակաց եղող Մամիկոնեանց գովասանութենէն անմասն է :

ւանգն այդ ժամանակամիջոցին համար երբ Հաստատանի բուն թագաւորը Տրդատ վտարանդի էր իր երկրէն: Տրդատի մրցակից այդպիսի թագաւոր չեն ճանչնար մեր պատմիչները: Իսկ Տրդատի դայեակ Արտաւազդ (չոր կորնեացի Մանգակունի կը կոչէ) մեր կարծեօք Մամիկոնեան էր:

Արշակունեաց հարստութեան բարձումէն յետոյ երբ Պարսիկները մարզպաններու ձեռքով կը կառավարէին Հայաստանը, Վահան Մամիկոնեան՝ այս բացառիկ տոհմին բացառապէս օժտեալ անգամը՝ յաջողեցաւ Պարսիկ մարզպանի տեղ ինքը ստանալ մարզպանութիւնը, որմէ յետոյ կը կոչուէր « Տէրն Մամիկոնէից՝ Զօրավարն Հայոց եւ Մարզպանն » (տես Ղազար Փարպեցի, Թուղթ): Անցողակի ըսենք որ այս Վահանն է որուն յստակատեսութիւնը Հայոց քաղաքական կացութիւնը կարծես դարերու համար բանաձեւեց սքանչելապէս սա պարբերութեան մէջ « զԱրեաց (նորերս՝ Թրքաց) ուժն եւ ստամբակութիւնն քով զիտեմ, եւ զՀոռոմոց (նորերս՝ Եւրոպացոց) թուլութիւնն եւ զխաբէութիւնն: » Վահանի իմաստուն եւ աշխարհաչէն կառավարութիւնը Հայաստանի երբ գրեթէ արքայանման իշխանութիւն եւ փառք կը վայելէր, մեծ տպաւորութիւն գործած ըլլալու էր որ Մամիկոնեանց արտոգոսներէն ամենէն տեւականը իրենց տոհմին մէջ մնաց այդ մարզպան արտոգոսը, որովհետեւ կը տեսնենք ԺԳ. դարու արձանագիրներու մէջ թէ Մամիկոնեան տոհմայինք ինքզինքնուն համար իբր հոմանիչ կը գործածեն Մամիկոնեան եւ մարզպան, այսպէս Յօճանավանքի արձանագիրներուն մէջ « Խորիշահ՝ դուստր մարզպանայ եւ Մամկանայ ». նոյն արիկինը դարձեալ կը կոչուի « Խորիշահ յազգէ Մամիկոնեանց ». Աստուածընկալ վանքի արձանագրին մէջ « Խորիշահ դուստր Մարզպանայ ». նոյնպէս Դսեղ գիւղի ձորին մէջ (Լօռի) ուր իրենց տոհմական ազօթատուն ու դերեզմանատուն չինեցին Բարձրաքաչ Ս. Գրիգորի ձերմակ վանքը՝ գերեզմանատան մէջ խաչարձանի վրայ կը կարդացուի « Գրիգոր Մամիկոնեան՝ որդի Սարգիս Մարզպանին(1)»: Նոյն Գրիգորը կը կոչուի « Գրիգոր իշխանն որդի Մարզ-

պանին » կիրակոս պատմիչէ: Բայց ամենէն հետաքրքրականն այն է որ Մամիկոնեանց այդ Բարձրաքաչ Ս. Գրիգորի վանքին պատին վրայ քանդակուած կը մնայ երկգլխանի թելտարած արծիւ՝ ճանկին մէջ բռնած գառ մը: Այդ միւսնոյն քանդակը կայ Դսեղ գիւղի (Լօռի) եկեղեցիի պատին վրայ: Ատ՝ Մամիկոնեաններու շրջի նշանն է: Աս կը հաստատէ եւ կը բացատրէ Բիւզանդի սա նկարագիրը Մամիկոնեանց « Ազանազգիք՝ ազանազրօջք, արծուենշանք՝ վարժնակսնիչք »: Գարագաշեան, չհասկնալով « ազանաչրօջ »ը (1), պզտիկ վարսնուտէ՛ մը ետքը փոխած է « ազանաչրօջ »ի (ինչպէս ուրիշ տեղ մըն ալ Բիւզանդի « Բագարառ իշխան ասպարապետութեան »ը փոխած է « ասպետութեան »ի), եւ հետեւեցուցած է թէ Մամիկոնեանց զրօշներն ազանիի, վարուժանի եւ արծիւի նշաններ կը կրէին: Բայց վերագրեալ քանդակեալ պատկերները բնաւ տարակոյս չեն ձգեիր: Ազանի գոյութիւն չունի անոնց մէջ, եւ ոչ ալ Բիւզանդի բնագրին մէջ: Բուն բառն է Ազանազրօջ, ինչպէս կը ցուցնէ նաեւ քովիկը գտնուող ազանազգի մակդիրը: Անշուշտ Մամիկոնեանները ազանիներու ազգէն չէին: Այս երկգլխանի արծիւի նշանը, ազան յորշորջումը զրօշի ու տոհմին բնութեան, կը տանին ուղղակի Մամիկոնեանց ծագման խնդրոյն: Ազան վերաբերութեամբ ազգի եւ ցեղի՝ ուրիշ բան չկրնար ըլլալ բայց եթէ Ալան, այն Ալիթացի ցեղը որոնց հետ գործ ունեցաւ Տրդատ-Արտաչէս Հայոց թագաւորը (գահակալեց 65ին), որու կը պատկանէր Հայոց թագուհի Տիկինն Սաթիւնիկ, եւ որու դէմ անձամբ դնաց պատերազմելու Հոռվմայեցոց Տակիտոս կայսրը 275ին: Բիւզանդ (Գ. Ը) կը յիշէ Պարսկաց զօրավար մը Ազանայոզան (արմատ՝ Ազան, համեմատել Ռուս միզան) « որ Պահլաւն էր », նշանակելով այսպէս թէ այդ Ազանազգին պարթեւ մըն էր, եւ նոր հետազօտութիւններէ դիտենք թէ Պարթեւները Ալիթական ցեղ մըն էին, ինչպէս Ալանները, կամ աւելի բացայայտ՝ Թիւրքմէններ էին(2):

(1) Բիւզանդի բանաբաղը ու խանգարիչը Մեսրոպ պատմիչ՝ այս բառը կ'աղաւորէ « Աղեղնաչրօջ »ի:
 (2) Գահեանք, Պարթեւ անունի սաթիւք մը, վազեմի օրերու մէջ կը բնակէին Կասպից ծովի արեւելակողմը Էմբէք գետի և Պալբան լեռներու մէջ գաւառ մը որ մինչև

(1) Արախս, 1897 էջ 48-49:

Երկգլխանի արծիւի նշանը նոյնպէս եւրոպական ազգերը ճանչցան եւ գործածեցին առնելով Սելջուկեան Թուրքերէ, որոնց նշանն էր, բայց ասոնց պատմութեան տեսարանը մտնելէն շատ յառաջ, Բիւզանդի թանկազին վկայութեան համեմատ՝ ան՝ Մամիկոնեանց նշանն էր, զոր Թրքաստանէ բերած էին իրենց հետ(1)։ Նոյն իսկ Մամիկոնեան անունին արմատը Մամկոն (ոչ Մամիկոն, որ լայնունն է անոր, ինչպէս յայտնի է Մամիկոնեանց մէջ գործածուած Մամ, Կոն, Մամակ անուններէն) թրքական անուն մըն է, զի Կիրակոս պատմիչ կը նշանակէ Ժ. Գարուն մէջ Թաթարաց խան մը Մամգուն անունով որ նոյն է Մամկոնի հետ։ Պատմականօրէն թէ՛ Բիւզանդ, թէ՛ Սերէոս, եւ թէ՛ Խորենացի՝ թէպէտ փոքր ինչ տարբեր մանրամասնութիւններով՝ կը համաձայնին պատմելու մէջ թէ Մամիկոնեանները « ձենաց » երկրէն Հայաստան եկւորներ են, թէ իրենց նախնիք թագաւոր եղած են այդ երկրին մէջ, եւ թէ ընտանիքին մէջ խռովութիւն, գրգռութիւն ինկած, արիւն թափած ըլլալուն համար՝ բարի հանգիստ գրտնելու դիտումով եկած ապաստանած են Հայաստան։ Իրօք, այսպիսի խռովութիւններ թաթարաց թագաւորական ընտանիքներու մէջ կը պատահին, մանաւանդ մեռեալ թագաւորի մը յաջորդութիւնը որոշելու առթիւ, ինչպէս եղաւ Թաթարաց Հուլաղու էյանի օրով։ Եւ քաջ յայտնի է թէ մեր պատմիչները «ձենաց երկիր»

ցայսօր իրենց անունով կը կոչուի Դեհիստան։ Եւ այս երկիրը ի վաղուց անտի Թուրքմէններու երկիր եղած է։ (Տես Ռօլինսոնի՝ Պարթեւաց պատմ. Սքրայն և Ռօս կեդրոնական Ասիա)։

(1) Աւելի կանուխ Հատեանց նշանն էր երկգլխանի արծիւը զոր Պողոս Բարեբոյի և Էջիւբի աւերակաց մէջ կը տեսնենք։ Ասի և Հատեանց գործածած ծայրը վեր գարծած մուճակները ցոյց կուտան թէ Հատեանք ալ վաղնջական ատենները շատ տարածուած Ուրալ-Ալտայեան ցեղին կը պատկանէին։

ըսելով չէին իմանար մեզի ծանօթ այժմու Չինաստանը, այլ Խորենացիի բառերով « ամենայն հիւսիսական ազգաց ասաջին » Սկիւթացւոց երկիրը։ Եւ գիտենք թէ նախնիք Սկիւթացի անունը կուտային այն ցեղերուն որոնք յետոյ ծանօթ զարձան Թուրք կամ Թուրքմէն անունով։ Սամուէլ պատմիչ ալ Սկիւթացիք ըսելով Սելջուկեան Թուրքերը կ'իմանայ։ Թէ Թուրքերը կը պատկանէին հիներէն Սկիւթական կոչուած մեծ ցեղին, ուրիշ նոր փաստով մըն ալ կրնայ հաստատուիլ։ Ծանօթ է թէ Պարսկաստանի թագաւորները՝ Խորով, Կաւստ եւ իրենց նախորդները՝ յաճախ պատերազմ կ'ունենային իրենց հիւսիսային սահմանները ասպատակող Սկիւթացւոց դէմ, որոնց թագաւորը կը կոչուէր Խաքան եւ թագուհին՝ Խաթուն(1)։ Ասոնց զօրաց հրամանատարը կը կոչուէր Ճիտրուխ (տես Սերէոս Գ. ժը ուր «Ճիտրուխ» գրչագրի սխալը պէտք է ուղղել «Ճիտրուխ»ի, ինչպէս նոյն գրչագրին « Բիւրամ »ը, « Բագարամ »ը պէտք է ուղղուին « Բիւրատ »ի, « Բագարատ »ի մեկ տառերու ծանօթ շփոթութիւն)։ Արդ Ճիտրուխ նոյն է Skeptoukhi հետ, որ, Ստրաբոնի համեմատ (Գլ. ԺԱ.) Սկիւթացւոց մէջ թագաւորներուն ստորագաս իշխաններու կամ հրամանատարներու անունն էր։

Կ'եզրակացնենք ուրեմն թէ Մամիկոնեանք իրենց բնորոշ դրօշով(2), անունով, իրենց ցեղին աւանդութեամբ, եւ պատմական ծագումով թրքաստանէն, կեդրոնական Ասիայէն եկած հաստատուած են Հայաստան։

(Շարունակելի) Գ. ՓԱՌՆԱԿ

(1) Տես Նեոքրեֆի Տաքարի, էջ 252։
 (2) Փախարեյի է որ այս մանկագին հնուճիւնը Մամիկոնեանց դրօշի նշանը որ Գսեղ գիւղի եկեղեցիին պատին վրայ, ինչպէս նաև Բարձրաքաջ Ս. Գրիգորի վանքին պատին վրայ կայ, դեռ չխամարուած կամ չհեղծուած՝ խնամով լուսանկարուի։



ԼՈՐԴ ՏԵՆԻՍԸՆ

Դ Օ Ր Ա

TO YAYA

Ագարակի մէջ ապրում են մէկտեղ
Մերուկ Ալանը , Վիլեամն ու Դորան :
Վիլեամը՝ որդին , իսկ Դորան՝ եղբոր
Աղջիկը միակ : Յաճախ է նայել
Մերունին նոցա եւ յաճախ խորհել
Ինքը իւր համար . « Կ'ուզէի նոցա
Մարդ ու կին անել : » Դորան էլ այժմ
Ըզգում է միակ տենչը հորեղբոր
Ամէն բանի մէջ եւ սրտի խորքից
Վիլեամին ձրգտում : Սակայն պատանին
Որովհետեւ միշտ տեսել է նորան
Նոյն յարկի տակին , մտքովն իսկ անգամ
Չէ էլ անցըրել առնել Դորային :

Բայց հասաւ մի օր , երբ ծեր Ալանը
Կանչեց իւր որդուն եւ ասաց նորան .
« Որդի՛ս , շատ ուշ եմ ինքքս պըսակուել ,
Սակայն ուզում եմ թողնելքս տեսնել
Թառած ծնկներին՝ քանի չեմ մեռել .
Եւ բոլոր յոյսըս մի ամուսնուծեան
Մէջ եմ դըրել ես : Եւ այդ պատճառով
Այժմ աւելի դիտիր Դորային .
Նայելու արժան արարած է նա ,
Եւ իւր տարիքից շա՛տ տնտես , խոհեմ :
Եղբօրս աղջիկն է : Իւր հայրը եւ ես
Մի անգամ կըծու խօսքեր ասացինք
Իրար երեսի , թողեց հեռացաւ
Եւ օտար երկրում վախճանը գրտաւ :
Սակայն դէպ իրեն տաճած իմ սիրոյս
Փոխարէն նորա աղջկան՝ Դորային
Խընամք տարայ ես : Քեզ կին առ նորան :
Վաղո՛ւց է , վաղո՛ւց , երկար տարիներ ,
Գիշեր ու ցերեկ , այդ ամուսնուծեան
Մասին եմ խորհում » :

Վիլեամը սակայն
Խօսքը կարճ կապեց . « Ձեմ կարող երբէք
Դորային առնել : Արեւըս վըկայ ,
Ասում եմ , Դորան ինձ կին չի լինիլ : »

Մերը բարկացաւ , ձեռքերը ծալեց
Եւ ասաց որդուն . « Ձե՛ս ուզում , տըղա՛ս ,
Ա՛յդ ես պատասխան տալիս ինձ հիմա :
Մեր ժամանակը հօր խօսքը սակայն
Օրէնք էր , գիտե՛ս . ուստի ուզում եմ
Որ այդպէս լինի հիմա ինձ համար :
Լաւ նայիր , տե՛ս , հա . լաւ խորհիր , Վիլեամ ,
Մի ամիս ամբողջ ժամանակ կը տամ
Խորհելու համար . խորհիր եւ կամքիս
Համաձայն ինձ կամ պատասխան կը տաս
Կամ ինձ ըստեղծող Աստուածը վըկայ
Կ'առնես բարկ ու բուրկդ եւ երբէք շըւաքդ
Գուռըս չի տեսնիլ : » Սակայն Վիլեամը
Գըժուածի նման պատասխան տըւաւ :
Կըծեց շըթները , թողեց հեռացաւ :
Որքան աւելի էր նայում նէրան ,
Այնքան աւելի էր նէրան առում .
Եւ իւր վարմունքը խիստ , դաժան դարձաւ .
Բայց Դորան հըլու տանում էր բոլորն :
Ամիսը դեռ իսկ չէր էր լըրացել ,
Որ իւր հայրական տընից հեռացաւ ,
Մըշակ վարձուեցաւ դաշտային գործում .
Եւ մասամբ սիրուց , մասամբ զայրոյթից
Գընալ-գալ արաւ եւ ամուսնացաւ
Մի երկրագործի աղջըկայ՝ Մարի
Մօրիսունի հետ :

Եւ երբ զանգակի
Ձայնը ծերուկի ականջին հասաւ ,
Կանչեց Ալանը եղբօրն աղջըկանն .
« Գիտե՛ս , աղջիկս , ծերն ասաց նորան ,
Քեզ շատ եմ սիրում . բայց թէ որ երբէք
Խօսքի բըռնուես նորա հետ , որ իմ
Որդի էր կոչուում : Կամ թէ մի բառ իսկ
Դու փոխանակես , նորա հետ , որին
Իւր կինն է կոչում , իմ տունն այլեւըս
Քեզ տուն չի լինիլ : Կամքըս օրէնք է » :
Խոնարհ էր Դորան , խոստացաւ եւ այդ ,
Բայց մըտածում էր . « Անհընար բան է .
Հօրեղբօրս միտքը կը փոխուի շըւտով ,
Այդպէս չի մընալ » : Եւ օրերն անցան
Օրերի վերայ , շըւտով Վիլեամը

Որդի ունեցաւ . կեանքի նեղութիւնն
 էլ հասաւ շուտով : Եւ նա ամէն օր
 Խորտակուած սրտով անցնում էր իւր հօր
 Գրուան առաջից , սակայն իւր հայրը
 երբէք օգնութեան չը հասաւ նորան :
 Բայց Գորան միշտ էլ , որքան կարող էր ,
 Մի բան տնտեսած , — Թէեւ չնչին բան , —
 Ուրի ի ձեռքով՝ գաղտնի ամենքից
 նոցա էր ղրկում , որ նոյն իսկ նոքա
 Զիմանան բընաւ ո՞վ է ուղարկողն .
 Մինչեւ որ ջերմը բռնեց Վիլեամին
 Հընձի ժամանակ եւ տարաւ նորան :

Եւ եկաւ Գորան Մարեամի տունը :
 Մարեամը նստած արցունք էր Թափում
 Իւր որդու գլխին եւ դառն մտքեր
 Անցնում իւր մտքով Գորայի մասին :
 Սօտեցաւ Գորան եւ ասաց . « Գիտե՞ս ,
 Մինչեւ այժմ ես հընազանդ եղայ
 Հօրեղբօրս կամքին , բայց մեղք գործեցի .
 Եւ այդ պատճառով Վիլեամի գլխին
 եկած փորձանքը դառն կսկիծ է
 Դարձել ինձ համար ամենից առաջ :
 Բայց այժմ , Մարօ , ի սէր նորա որ
 Մեզնից հեռացաւ , ի սէր քո որին
 նա իւր կին ընտրեց եւ ի սէր այս խեղճ
 Որբ մընացածի , ես եկայ քեզ մօտ :
 Դու շատ լաւ գիտես , այս հինգ տարուայ մէջ
 Հունձը բաւական առատ չէ եղել .
 Թող առնեմ փոքրին , դընեմ հօրեղբօրս
 Աչքի առաջին , հնձուող արտի մէջ ,
 Երբ այժմ նորա սիրտը ուրախ է
 Արտերի առատ հընձի պատճառով .
 Կարող է տեսնել նա այս խեղճ փոքրին
 Եւ օրհնել նորան , ի սէր նորա որ
 Մեզնից հեռացաւ :

Եւ առաւ Գորան

Վիլեամի որդուն եւ բռնեց արտը
 Տանող ճանապարհին . նստեց չը ցանած
 Մի բլրի վերայ , ուր որ բազմաթիւ
 Պուտեր էր բուսած : Եւ ահա հեռուից
 Գալիս է դաշտի միջով հօրեղբայրն ,
 Սակայն չէ տեսնում նստած Գորային :
 Եւ հնձուորներից ոչ մէկը նորան
 Ձէ համարձակուում , ասել Թէ այնտեղ
 Նստած է Գորան , փոքրիկ որբի հետ :
 Եւ Գորան շանք է Թափում ելնելու
 Իւր նստած տեղից եւ առաջ գնալ
 Դէպի հօրեղբայրն , բայց սիրտը նըրաւ՝
 Մընում է տեղը . եւ հնձուորները

Հնձում են արտերն , եւ արեգակը
 Թեքում է , գընում , ու բընութիւնն ամբողջ
 Պատում է խաւար քողով գիշերուայ :

Բայց երբ առաւօտն նորից լուսացաւ ,
 Ելաւ նա տնից , դարձեալ մի անգամ ,
 Առաւ փոքրիկին եւ նստեց հետը
 Բլլրակի գլխին . քաղեց եւ փընջեց
 Զորս կողմը բուսած բոլոր ծաղիկներն
 Եւ պըսակ հիւսեց ու մանկան գլխի
 Շուրջը բոլորեց , հօրեղբօր աչքին
 Նորան աւելի հաճոյ դարձնելու :
 Եւ երբ հօրեղբայրն գալով անցնում էր
 Գաշտերի միջով դէպի իւր արտերն ,
 Նըկատեց այնտեղ նըստած Գորային ,
 Թողեց հնձուորներն իրենց հունձն անեն ,
 Իսկ ինքը եկաւ եւ ասաց նորան .
 « Ո՞ւր էիր երէկ : Ո՞ւմն է երեխան :
 Եւ ի՞նչ ես շինում դու այստեղ նըստած » :
 Եւ Գորան գետին ձըգեց աչքերը
 Եւ կամաց նորան պատասխան տըրաւ .
 « Վիլեամի որբն է » : « Մի՞թէ ես քեզ չեմ ,
 Ասաց Ալանը , քեզ չեմ արգիլել » :
 Եւ Գորան նորից ասաց հօրեղբօրն .
 « Վարուհի ինձ հետ դու ինչպէս կամենաս ,
 Բայց առ երեխան եւ օրհնիր նորան՝
 Ի սէր նորա որ մեզնից հեռացաւ » :
 « Շատ լաւ եմ տեսնում , ասաց Ալանը ,
 Թէ մի խաղ է դա , որ դու եւ այն կինն
 Սարքել էք մէկտեղ : Մի՞թէ իմ պարտքըս
 Ես չեմ հասկանում եւ դու պէտք է ինձ
 Խըրատ տաս հիմա : Դու շատ լաւ գիտես ,
 Խօսքըս՝ օրէնք էր . չը նայած դորան
 Ուզում ես ասածս անարգած լինե՞լ :
 Շատ բարի , — կ'առնեմ ես այդ երեխան ,
 Բայց դու այլ եւրս՝ աչքիս չերեւաս » :

Եւ այս ասելով առաւ փոքրիկին
 Որ բոլոր ուժով կանչում էր , լալիս .
 Եւ ծաղիկներից փնջած պըսակը
 Ընկաւ Գորայի ոտքերի առաջ :
 Զոքեց , գըլուխը ձեռքի մէջ առաւ :
 Եւ դեռ դաշտերի միջով գալիս էր
 Հասնում ականջին փոքրիկի ձայնը ,
 Որ կամաց-կամաց քանի գընում էր
 Այնքան աւելի հեռուից էր լըսում :
 Կախեց գըլուխը եւ կըրկին յիշեց
 Այդ տունը եկած օրը առաջին ,
 Եւ իւր ունեցած խոհերը բոլոր
 Եկան ու անցան մըտքովը նորից

Իրար յետեւից : Գրուին առաւել
Գետին խոնարհեց , լաց եղաւ ծածուկ :
Եւ հնծուորները հնծում են արտերն ,
Եւ արեգակը թեքուում է գրնում ,
Ու բընուծիւնն ամբողջ պատուում է խաւար
Բողով գիշերուայ :

Եւ ելաւ Դորան

Գնաց Մարեամի տունը մէն-մենակ ,
Եւ կանգնեց դըռան շէմքի առաջին :
Տեսաւ Մարեամը , որ իւր զաւակը
Դորայի հետ չէ : Փառք տըւեց Աստծուն ,
Որ իրեն՝ այրուն՝ անտես չէ անում :
Եւ ասաց Դորան . « Զօրեղբայրս առաւ
Երեխային . բայց , թոյլ տուր ինձ , Մարօ ,
Ապրեմ , աշխատեմ քեզ հետ միասին .
Ասում է , որ ինձ այլեւքս երբէք
Տեսնել չէ ուզում » : Մարեամը նորան
Պատասխան տըւաւ . « Երբէք այդպէս բան
Լինել չէ կարող , որ դու իմ ցաւքս
Առնես քեզ վերայ . այժմ , կարծում եմ ,
Թէ երեխայիս չեմ թողնիլ նորան ,
Որ իմ խեղճ որբիս խստասիրտ դարձնէ ,
Եւ նա իւր մօրը անարգէ մի օր .
Եւ այդ պատճառով կ'երթանք միասին ,
Ես երեխայիս կ'առնեմ կը բերեմ
Եւ քեզ համար էլ կ'աղաչեմ նորան՝
Նորից ընդունէ . բայց թէ որ կըրկին
Քեզ առնել չ'ուզէ , ապա միասին
Կ'ապրենք մի տան մէջ , կ'աշխատենք մէկտեղ
Վիլեամի որբի համար , մինչեւ որ
Նա հասակ կ'առնէ եւ մեզ կը պահէ : »

Եւ այս ասելով , գրկեցին իրար
Ձերմ համբուրուեցան եւ ելան տընից :
Ազարակ հասան : Դուռը փակուած էր
Մղակով միայն . նայեցին , տեսան
Երեխան նստած ծնկներին պապի ,
Որ նորան գիրկը առած սեղմում էր
Բազուկների մէջ , կամացուկ զարկում
Փոքրիկ թաթերին , թեթեւ ապտակում
Իւր թըշիկներին , ինչպէս որ մէկը
Սիրելիս լինի . եւ երեխան էլ
Ձրգում էր թաթերն ու լեզու կտրած
Բլբլում անդադար , քաշում քաշքըշում
Ժամացոյցից կախ Ալանի ոսկի
Կընիքի փոկը , որ փայլ էր տալիս
Կըրակի առաջ : Ներս մըտան նոքա :
Եւ երբ երեխան նըկատեց մօրը ,
Լաց ու աղմուկով մօրն ուզեց գընալ .

Ալանը ծնկից ցած դըրեց մանկանն :
Եւ Մարեամն ասաց . « Ա՛ , Հայր , — եթէ որ
Իրաւունք կը տաք ձեզ այդպէս կանչել , —
Երբէք չեմ եկել ձեզ մօտ մուրալու
Ոչ ինձ համար եւ ոչ էլ Վիլեամի ,
Եւ ոչ էլ այս խեղճ փոքրիկի համար .
Բայց , այժմ , տեսէ՛ք , եկել եմ միայն
Դորայի համար . յետ առէք նորան .
Սիրում է նա ձեզ , այն էլ չափազանց :
Հայր , երբ Վիլեամը մեռնում էր՝ մեռաւ
Ամենքի հետ հաշտ եւ երբ որ նորան
Հարցընում էի , նա ինձ ասում էր ,
Թէ երբէ՛ք , երբէք նա չէ զըղջացել
Որ ինձ կին առաւ , — եւ համբերատար
Կին էի , իրաւ . — բայց , հայր , շատ անգամ
Ասում էր նա ինձ՝ ինքն էր անարդար ,
Որ իւր հօր խօսքը կոտորել էր այնպէս .
« Թող Աստուած օրհնէ նորան , ասում էր ,
Եւ երանի թէ , երբէք չիմանայ
Թէ ինչ նեղուծեան օրեր եմ քաշել » :
Ասաց ու դէմքը շըրջեց ու մեռաւ , —
Ի՛նչ անբաղդ կին եմ : Բայց , Հայր , այժմ թող
Առնեմ ես որդուս . վախենամ թէ նա
Ձեզ շատ նեղուծիւն , չարչարանք չըտայ ,
Եւ թէ չը լինի իւր հօր յիշատակն
Անարգել մի օր սովորէ երբէք .
Առէք Դորային . եւ թողէք մընայ
Ամեն , ամեն բան առաջուայ նըման : »

Այսպէս էր ասում Մարեամն , իսկ Դորան
Իւր դէմքն էր ծածկում նորա թիկունքում ,
Եւ խոր լըռուծիւն տիրեց սենեակում :
Եւ յանկարծ ծերը հեկեկաց մորմոք ,
Հեծկտաց ծանըր . « Ես եմ անարդարն . —
Անարդարն ես եմ . ես ինքս եմ , ինքքս
Որդուս ըսպանել . ինքս եմ ըսպանել , —
Բայց սիրում էի . սիրում եմ նորան , —
Ա՛ , իմ թանգագին , իմ անգին որդիս , —
Ա՛խ , Տէր իմ Աստուած , ների՛ր ինձ ների՛ր :
Ես եմ անարդարն : — Եկէք զաւակներս ,
Համբուրեցէք ինձ : »

Մարեամն ու Դորան .

Պատեցին իրենց թեւերը ծերի
Պարանոցի շուրջն եւ համբուրեցին
Անվերջ ու անվերջ : Եւ ամբողջապէս
Մարդը իւր խղճի խայթով էր խոցուած .
Թաքցըրած սէրը դարձել էր նորան
Հարիւրապատիկ : Երեք ամբողջ ժամ
Հեծկտում էր նա Վիլեամի որդու

Վերայ գլխակոր, մտքերը ամբողջ
Վիլեամով տարուած :

Եւ չորսը մէկտեղ
Նոյն տան յարկի տակ ապրեցին երկար .
Եւ երբ տարիներն սահեցին, անցան,

Մարեամբ ուրիշ ամուսին առաւ :
Իսկ Դորան՝ մարդու չը գընաց երբէք
Եւ մինչ իւր մահը այդպէս էլ մընաց :
Թարգմ. ՏԻՐԱՅՐ ՎԱՐԴԱՊԵՏ
1907 Յգոստոս 1 .
Լօնդոն



Նոր Զուղայեցի Հայերուն

ԱՌԵՒՏՈՒՐԸ ԺԷ. ԴԱՐՈՒՆ



Մենակին ժամանակներէ հետէ,
Հայերն ունեցած են առեւտրական
ընդարձակ յարաբերութիւններ . Աստ-
րեատանցիներն ու Փիւնիկեցիներն ա-
նոնցմէ ապրանք կ'ընդունէին, ձի եւ շորի կը
հայթայթէր Հայաստան Տիւրքոսի(1) . Իր գետե-
րով՝ յարաբերութեան մէջ էր Կասպից ծովուն,
Պարսից ծոցին եւ Եւքսինեան Պոնտոսին հետ :
Բակտրիայէն, հայ վաճառականները կ'երթային
Հնդկաստան, Սոգդիանայի ճամբով մինչեւ Ճե-
նաց երկիրը :

Հայկազանց եւ Արշակունեաց ժամանակ,
Հայաստանի վաճառաչան քաղաքներն էին Վան,
Արմաւիր, Արարատայ մայրաքաղաքը, որու մա-
սին կը խօսի Պտղոմէոս . Արտաշատ, զոր գրա-
ւելով Գերմանիկոս կոչուեցաւ հայկական, Դուին
ուր կը լեցուէին Վրաց եւ Պարսից ապրանքը,
Արծնի աւանը որու վաճառականները նշանաւոր
էին :

Յետոյ, Միջին դարուն, հայկական Կիլի-
կիան կարեւոր առեւտրական յարաբերութիւն-

ներ ունեցաւ Վենետիկի հանրապետութեան
հետ: Սակայն պէտք է համարել մինչեւ ժ.է. դա-
րու սկիզբը հանդիսասես ըլլալու համար Հայոց
առեւտրական մեծ շարժման, երբ Մեծն Շահ
Աբբաս հայ հողագործներէն վաճառականներ չի-
նեց . եւ այդ վաճառականներն եղան աշխարհի
ամենէն նշանաւոր առեւտուրի մարդիկը(1) :

Շահ Աբբաս Ա. նուաճեց Մեծ Հայքը, Ա-
րարատայ գաւառը, Երեւան, Նախիջևան (1585),
սակայն ստիպուած էր շարունակ կոտել թուր-
քերուն հետ այդ երկիրներուն համար Իմանա-
լով որ Սուլթան Սելիմ իրեն դէմ մեծ բանակ
մը կ'ուղարկէր, որոշեց բոլորովին աւերել եր-
կիրը . որպէս զի թուրքերը չկարենան երկար
ատեն մնալ իր սահմանազրուխներուն վրայ եւ
շարունակել կռիւը . Նախիջևանի, Երեւանի,
Ջուղայի, Կարսի շրջականերուն եւ Կարինի
բնակիչներն առաւ ու այր, կին, տղայ, ծեր
ամենքը տարաւ Պարսկաստան, իր ետեւ այրե-
լով բոլոր գիւղերը եւ բան մը չձգելով թուր-
քերուն :

Շահ Աբբաս բնակեցուց Հայերը Պարսկաս-
տանի զանազան մասերուն մէջ: 27,000 ընտա-
նիք հաստատուեցան Ղիլանի գաւառին մէջ ուր
չերամ կը մշակուի Այս 27,000 ընտանիքէն հա-

(1) Եւ ի տանէ Թորոմայ ձիովք եւ ձեծելովք եւ
շորովք լցին զվաճառս քո : Եզեկիէլ Իէ. 14 :

(1) Tournefort, Voyage du Levant, tome II. 311.

զիւ 3000 կը մնար 1650ին , այնքան Ղիլանի կլիման մահաբեր է(1) :

Շահ Աբբաս Ջուղայեցիները տարաւ Սպահանի մօտ դէպ ի հարաւ Ջենդերուն գետակին միւս կողմը . Հայք իրենց այս նոր բնակավայրը կոչեցին Նոր Ջուղայ ի յիշատակ իրենց ծննդավայրին . յետոյ , Դաւրիզէն , Երեւանէն ուրիշ Հայեր ալ եկան , այնպէս որ շատ չանցաւ Նոր Ջուղայ ունեցաւ 3000 բնակիչ :

Երեւանցիները բնակեցան Սպահանի մէջ , ամրոցին մօտ ուր շատ մշակելի հողեր կային :

Ուրիշներ, այլեւայլ քաղաքներէ , հաստատուեցան քաղաքէն դուրս Սերաքենա կոչուած մեծ արուարձանի մը մէջ :

Պարսկաստան , թէեւ Ֆրանսայէն չորս անգամ աւելի մեծ է , սակայն ունի տասը տասներկու մլրլիոն բնակիչ միայն . իր կեդրոնական մասին մէջ ծածկուած է մեծ մասով անապատին աւազներովն ու աղի լիճերով . բնակելի երկիրներ կը գտնուին միայն արեւելքէն եւ արեւմուտքէն որոնք երկարելով գէպ ի հիւսիսային արեւմուտք կ'իս պայտի մը նման , կը միանան Ատրպատականի մէջ որու մայրաքաղաքն է Թաւրիզ :

ԺՁ. դարու վերջերը Պարսկաստան կարի աղքատացած էր . Թուրքերու արշաւանքը աւերած էր Ատրպատականը , եւ Շահ Աբբաս քանդած էր Մեծ Հայքը որպէս զի Թուրքերը հեռանան իր սահմանագլուխներէն . ներքին խռովութիւնները ու անգաղար զինուորագրութիւնները սպառած էին երկրին միւս մասերը :

Ոսկին եւ արծաթը հազուագիւտ էին Պարսկաստանի մէջ . Շահ Աբբաս փորձած էր շահագործել Գերուանի ոսկիի հանքերը , միայն թէ ծախքը հասոյթէն աւելի լինելով՝ հրաժարած էր այդ ծրագրին իրագործումէն(2) :

Այս միջոցներուն (1604) է որ Կղեմանտ Ը. պապը Շահ Աբբասի մօտ ուղարկեց երեք Կարմեան միաբաններ որպէս զի Շահը համոզեն Թուրքին դէմ կոխը չղաղբեցունելու . որովհետեւ պապութիւնը սկսած էր վրդովիլ Օսմանցիներուն

(1) Պարսկական առակը կ'ըսէ . « Գողցաւ , մարդը քանիսն որ Ղիլան կ'ուղարկեն զինքը » :

(2) Անշան գործի մը մասին խօսելով՝ Պարսիկները կ'ըսէին . « Գերուանի հանքին կը նմանի , տասը կը ծախսէ ինը կը վաստկի » :

դէպ ի յարեւմուտս անգաղար շարժումէն : Շահ Աբբաս այս կղերականներուն(1) հետ իր խօսակցութեանց մէջ անոնցմէ իմացաւ որ թթենի շատ քիչ կը գտնուէր Եւրոպա եւ մետաքսը կը վաճառուէր խիստ սուղ :

Ղիլանի ճահճային գաւառը , որ կը տարածուի Կասպից ծովին հարաւարեւմտեան ափին , կ'արտադրէր ամէն տարի մեծաքանակ մետաքս . Շահ Աբբաս մտածեց այդ մետաքսը ծախել տալ Եւրոպայի մէջ եւ այդ կերպով զրամ մտցունել իր երկիրը . ուստի ձեռնարկեց յարաբերութեան մասնել եւրոպական պետութեանց հետ :

1610ին դէպ ի Ֆրանսա մեկնեցաւ առաջին պարսկական դեսպանութիւնը որու պրիւսն էր Կապուսինեան միաբանութենէն Հայր Ժիւստ . Հ. Ժիւստ հասաւ Պարիս Հենրիկոս Դ. ի մահուանէն երեք ամիս յետոյ , եւ արքունիքն իրեն իմացուց թէ հարկ էր որ Պարսից Շահը ուրիշ դեսպանութիւն մը ուղարկէր նոր Թագաւորին , ինչ որ չկատարուեցաւ :

Քանի մը տարի յետոյ Շահ Աբբաս Եւրոպա ուղարկեց վաճառականներ անոնց տալով մետաքսի հակեր հասկնալու համար գինը . Պորտուգեցի Օգոստինեան միաբան մը Սպանիա պիտի դառնար , Շահն անոր պաշտօն յանձնեց հետը առնիլ Պարսիկ դեսպան մը եւ վաճառական մը , անոնց յանձնելով մեծաքանակ մետաքս . Սպանիա հասնելուն , կղերականը համոզեց դեսպանն որպէս զի Սպանիոյ Թագաւորին նուէր տայ բոլոր մետաքսը , հակառակ Պարսիկ վաճառականին բողոքներուն , որը անմիջապէս ձգեց , Պարսկաստան դարձաւ Լանդըտոկի եւ Պրովանսի ճանապարհով . իսկ Սպանիոյ Թագաւորը պայրանալով որ Պարսից Շահը զինքը կ'նջ տեղ կը դնէ , թագուհոյն ուղարկեց բոլոր մետաքսը առանց որ եւ է փոխարինութեան . իսկ դեսպանը , զարձին ի Սպահան , փորը ձեղքուեցաւ արքայական հրապարակին վրայ : Օգոստինեան կղերականը միայն օգտուեցաւ այս ամենէն ու Պարսից Շահին մետաքսին փոխարէն ստացաւ Կեւտայի եպիսկոպոսութիւնը :

Քիչ յետոյ , Շահ Աբբաս նորէն փորձ մը ըրաւ . Վենետիկ ուղարկեց Սպահանցի հարուստ

(1) Կարմեան հայրերն է ուրիշ Եւրոպացի կղերականներ մտցուցած են ծնեբնկի , կանկառի , եղերդի մշակութիւնը Պարսկաստան (Տավերնիէ) :

վաճառականի մը որպիսի, անոր յանձնելով մտա-
քանակ մետաքս : Երիտասարդ Պարսիկը, Վե-
նետիկ հասնելուն չէս, սկսաւ ցոփ կեանք մը
վարել պոռնիկներու հետ, ու ծախուց զիմանա-
լու համար, ստիպուեցաւ մետաքսին մէկ մասը
վաճառել :

Ծերակոյտը, այս անհատին յիմարական
զեղխութենէն խոտոված, թուղթ գրեց արեւել-
եան նաւաճանդիտաները եւ Հալէպէն իմոցաւ. որ
մետաքսը Պարսից Շահին կը պատկանի, ուստի
պրակեց մնացած ապրանքը եւ զրեց Շահ Արքա-
սին. Շահ Արքաս պաշտօն յանձնեց Անսունիոյ
Իրոյոյ (նօճա Ալթրն) անունով Վենետիկ հաս-
տատուած Միջագետցի Հայու մը որ Հնդկաս-
տանէն կը դառնար, վաճառել այդ մետաքսը
(1621) :

Պարսից ցեղը մեծ վաճառականութեան ըն-
դունակ չէր, այս քանի մը անյաջող փորձերը
բաւական էին ապացուցանելու. անոնք ամէն
բան կը մոռնային Սրեւմա տքի մէջ եւ կը մտնէին
Շահին ինչքը. առեւտուրի համար ուրիշ յատ-
կութիւններ հարկաւոր էր : Շահ Արքաս աչքը
դարձուց Զուղայեցի Հայոց վրայ. զանոնք իրենց
երկրէն խլած, զրկած էր այն հողերէն զորս
իրենց նախահարը դարերով մշակած էին, եւ
անոնք, օտար հողին վրայ, սկսած էին նորէն
աշխատել, տքնիլ, նոր օճախ մը կազմել իրենց
խելքով. խնայողութեամբ եւ սակաւագումու-
թեամբ. ասկէ զատ, Հայերը քրիստոնեայ էին
եւ լաւագոյն եւս կրնային յաջողիլ Երոպացի
քրիստոնեայ ժողովուրդներուն մէջ :

Շահ Արքաս Զուղայի եւ Սերաբենայի (ը՛՛-
պանանէ զորս արուարձան մը ուր բնակեցու-
ցած էր նոյնպէս Հայեր) Հայերու մէջէն զատեց
եւ տուաւ անոնց զրամ ու մետաքսի հակեր.
մետաքսը անոնց յանձնեց որոշ գնով մը զոր
պէտք էր որ վճարէին զարձին, իրենց համար
պահելով մնացեալ շահը :

Այս Հայերը հողագործ կամ արձեւատու
էին ամենքն ի սկզբան, բայց, շնորհիւ իրենց
նախաձեռնարկ եւ զբաղող ոգոյն « Գիշ ժամա-
նակի մէջ եղան, կ'ըսէ Տալեանիէ, այնքան
վարժ որ չկայ առեւտուր մը որ չընեն » :

Շատ չանցած ձիւղեր հաստատեցին Երո-
պայի բոլոր մեծ կեդրոններուն մէջ, ի մասնա-
ւորի Լիվորնոյ եւ Վենետիկ ուր ունեցան իսկ
գաղթականութիւն եւ եկեղեցի. կ'երթային
Պարսիս ուր կը գնէին պերճանքի առարկաներ,
Ամստերդամ եւ Անգղիա. Լոնտրա կը տանէին
ոչ միայն արեւելեան ապրանք, այլ նոյնպէս
վենետիկեան հայելիներ. 1641ին, Բարա Սա-
չատուր վենետիկէն Լոնտրա կը տանէր 3 արն-
տուկ հայելի, 7 սնտուկ ապակի եւ 14 սնտուկ
կեղծ մարգարիտ :

Պարսկաստան վերադարձին, զրամէ զատ
իրենց հետ կը բերէին ամէն տեսակ ապրանք որ
կրնային օգտակար ըլլալ արեւելեան երկիրներու
մէջ, Պարսկաստան, Հնդկաստան ուր կ'երթա-
յին եւ մինչեւ ի Տոնկին, Ճաւա, Փիլիպպան
կղզիները. ինչպէս Վենետիկի եւ Նիւրեմբերգի

ապակեղէններ եւ ուրիշ ապրանք, կեղծ մար-
գարիտ, հայելի, ակնոց, համբիշ, բուստ, սաթ,
ժամացոյց, մոծաքանակ նուրմտական եւ անդ-
ղիական ասուրներ, ոսկեթել եւ արծաթաթել
զիպակներ :

Ի սկզբան անագին շահ կ'ընէին, իւրա-
քանչիւր կարաւան Պարսկաստան կը բերէր
200, 300 արծաթ սկուտէ աւելի, որը անմիջա-
պէս պարսկական դրամի կը վերածուէր. կեղծ
մարգարիտները, զորս երկու շաբթը 2, 3 Փր.ի
կը գնէին, 30, 40 Փր.ի կը վաճառէին Պարս-
կաստան :

Կարաւանները կ'երթային Ապանանէն Դաւ-
րիչ, անկէ կ'անցնէին Տաճկաստան զէպ ի Հա-
լէպ. Զմիւռնիա, կամ Պրուսա, իսկ անոնք որ
զէպ ի հրեւիս կ'երթային՝ կ'անցնէին Շամախի
եւ Նոսաւա, Կասպից ծովուն վրայ : Ետսա-
ւայի մէջ նաու կը բեռնեն Պարսկաստանէն
եւ Մոզոլէն եկած մետաքսն եւ ուրիշ ապրանքը
ու կը տանին Աստրախան. այն տեղէն ցամա-
քով կը փոխադրեն Մոսկուա եւ Արքանգէլ որը
Մոսկուայի վերջին նաւաճանդիտան է հիւսիսա-
յին ովկիանոսին վրայ. Հոն Անգլիացիք եւ Հո-
լանտացիք մեծ առեւտուր կ'ընեն. հոն կը բեռ-
նուեն Մոսկովմ երթալու ապրանքը եւ անկից
Էլզնէտի նեղուցով կը տանին Հոլանտա եւ
Անգլիա » (Տուրնեֆոր) :

Տաճկաստանի մէջ պարսկական կարաւան-
ները խարան կը վճարէին Կարին, Աֆիոն Կա-
րահիսար. ճանապարհին հետզհետէ կը մեծնային
խաւարծիլի, սակամոնի, ափիոնի, քաղքանի,
գագի խժի, Երզնկոյ կաշիներու եւ էնկիւրիի
քիֆթիկի՝ հակերով. Այս կարաւանները Զմիւռ-
նիա կը հասնէին փետրուար, յունիս եւ հոկ-
տեմբեր ամիսներուն. հայ վաճառականները կը
նախընտրէին իրենց ապրանքը վաճառել Ֆրանս-
սացիներուն որ ամբողջ գինը կը վճարէին դրա-
մով, քան թէ Հոլանտացիներուն եւ Անգլիա-
ցիներուն որոնք գինին կէսը ասուրով կը հա-
տուցանէին :

Կարաւաններու դարձը կը լինէր Կոստանդ-
նուպոլսոյ, Զմիւռնիոյ եւ Հալէպի ճանապար-
հով. այդ տեղերէն կը մեկնէին կանանաւորա-
պէս կարաւաններ զէպ ի Պարսկաստան : Երբ
հարկ ըլլար Սեւ ծովէն անցնիլ, երբեք նաւ
չէին նստեր Տրապիզոն, այլ կ'երթային քիչ մը
աւելի հեռուն, Ունիա, կամ Սամսոն, որովհե-
տե Տրապիզոնի մէջ իւրաքանչիւր ջորույ բեռի
համար 4 գահեկան պէտք էր տալ, մինչդեռ
միւս տեղերը մէկուկէս գահեկան միայն :

* * *

Ժէ. դարու ճանապարհորդները, Տուրնե-
ֆոր, Տավերնիէ հետաքրքրական տեղեկութիւն-
ներ կուտան Զուղայեցի Հայերու ճանապար-
հորդու եղանակին վրայ :

Իրենց հեռաւոր ճանապարհորդութեանց
մեկնած ատենին, հետեւին կ'առնէին անկո-
ղին, կերակուր եփելու ամսոններ, ուտելիք,

պարսիմատ, ապուխտ, իւղ, ալիւր, գինի, օղի, չոր միրգ . եւ իրենց պաշարները այնչափ լաւ գիտէին խնայել որ վերադարձին կ'աւելնար յաճախ եւ կտ կը բերէին . մանաւանդ որ իրենց գոյքին փոխադրութիւնը ձրի էր . որովհետեւ եթէ վեց ուղտ վարձէին իրենց ապրանքին համար, եօթներորդ մը ձրի կը ստանային : Իրենց հետ կ'առնէին ուռկան եւ եթէ կարուանը կենդրուան ընէր գետակի մը ափը, կը սկսէին ձուկ որսալ . Տօրնըֆոր կը պատմէ որ յաճախ անոնց հետ պատուական ձուկ կերած է :

« Այս Հայերը, ըլլայ իրենց համար, ըլլայ Ձուղայի վաճառականներու համար աշխատին, անխոնջ են ուղեւորութեանց մէջ եւ կ'արհամարհեն եղանակներու խտտութիւնները : Ծաւերը սեռանք, նոյն իսկ ամենէն հարուստները որ սուքով կ'անցնէին գետերէն, մինչև պարանոցը ջրին մէջ, ինկած ձիերը վեր հանելու եւ իրենց ու բարեկամներու հակերը ազատելու համար, քանզի Տաճիկ ձիապաններուն հոգը չէ որ ապրանքները կորսուին : Այս ազնիւ մարդիկը քնաւ չեն փոխեր իրենց վարուելու կերպերը . միշտ նոյնը խոյս կուտան ազմկայոյզ օտարականներէն, մինչ կը յարգեն անոնք որ խաղաղ են . սիրով կուտան բնակութիւն անոնց եւ հաց կը կերցունեն : Երբոր իրենցմէ մին կը դարձանէինք, ամբողջ կարուանը շնորհակալութիւն կը յայտնէր մեզ : Երբոր իմանան որ կարուան մը պիտի անցնի, մէկ երկու օրուան ճանապարհ ընդ առաջ կ'երթան իրենց հայրենակիցներուն գինիով եւ խմորով : ոչ միայն գինի կը հրամցունեն Փրանսացիներուն, այլ եւ կը ստիպեն իսկ զանոնք որ իրենց կենացը իմեն : » (Տօրնըֆոր) :

Եւրոպայի եւ Ասիոյ մէջ ճանապարհորդութեանցը մէջ գրեթէ ոչինչ կը ծախսէին իրենց սննդեան համար . Եւրոպա եկած ատենին, իրենց հետ կ'առնէին զափրան, պղպեղ, հնդիկ ընկոյզ, մուշկ եւ այլ համեմներ, որոնցմով կը վճարէին դիւզերուն մէջ հացը, կարագը, կաթը, պանիրը, ձուն :

Իսկ Ասիոյ մէջ իրենց ուտելիքին փոխարէն կուտային Վենետիկի, Նուրեմբերգի, Փրանսայի մանր առարկաներ . Հայելի, մատի, ապարանջան, կեղծ մարգրիտ, մկրաա, զանակ, գնդասեղ, ասեղ, որոնք արեւելքեաց համար աւելի գնահատելի էին քան դրամը :

Քիստ յարած իրենց նախահարց կրօնին, ամէն տեղ ծով եւ պահք կը պահէին, ու ոչ յոգնութիւն եւ ոչ հիւանդութիւնք արգելք կ'ըլլային հայ եկեղեցոյ հրամանները կատարելու :

Երբոր կը հասնէին քաղաք մը ուր պէտք էր ժամանակ մը մնային, հինգ վեց հոգի միացած կը բռնէին պարսպ սենեակ մը զոր կը կահաւորէին իրենց գոյքով :

Շահ Աքբա Երեւանի եւ Ձուղայի Հայերը բնակեցուց Սպահանի մօտ Ձենդերու գետակի միւս կողմը ուր հիմնեցին Նոր Ձուղան . իսկ Բարձր Հայքի եւ Ստրպատականի Հայերը բնու-

կեցան Սպահանի Շէյխ-Սարինա (հին մզկիթին ճարտարագետ Շէյխ Եուսուֆ Բեննայի անունով) թաղին մէջ . բայց այս վերջինք, ապերատ մարդիկ, վաթսուն տարի յետոյ վտարուեցան ի Ձուղա, որովհետեւ Մահմետականք գիշեր ցերեկ կ'երթային արբնալ ասոնց տուները ու անկարգութիւններն անպակաս էին :

Նոր Ձուղայ կէս ժամով հետու էր Սպահանէն, մէջտեղը կար Ձենդերուի գետակը որու վրայ ձգուած էր Ալլաւիբաի Հայուն շինել տուած հոյակապ կամուրջը 34 կամարներով . Չարբաղի պողոտան կը միացունէր Սպահանը Ձուղային, ճամբուն երկու կողմը անկուած էին դարաւոր սօսիներ որոնց ոսքը վճիտ ջրի առուակներ կը հոսէին, աստ անդ կազմելով անհունաւոր մանր առուակներ, կարկաշտահոտ ջրը վէժներ ու շարուստներ : Ձենդերուի միւս կողմը Չարբաղի ծառուղին կը յանգէր Հէզարջերիզ (հազար արտավար) արքայական պարտէզները որմէ կողմնակի ճանապարհ մը կը տանէր Ձուղայ :

Ձուղայ գրեթէ կէս փարսանի երկայնութիւն ունէր ու անոր կէսը լայնութիւն . երկու գլխաւոր փողոցներ կ'երկարէին գրեթէ մէկ ծայրէն միւսը . փողոցներու երկու կողմերը աստուներ ջրալից, որոնց եզերքը անկուած սօսիները (չինար) քաղցր սոււեր մը կ'աճէին անցորդին վրայ . կար չուկայ խանութներով, բաղանիքներով եւ երկու փոքր կարուանսերա ով : Ձուղայ տասնեւմէկ եկեղեցի ունէր, մինաստան, եւ պիտիոպոսարան եւ կուստնաց վանք : Երբ Հայերը յաջողեցան առեւտուրի մէջ, սկսան Ձուղայի մէջ շինել փառաւոր տուներ եւ ապարանք ինչպէս սեռած էին Եւրոպայի մեծ քաղաքներուն մէջ . ու ասիական այս հետաւոր գիւղին մէջ մարդ զարմանքով կը լսէր աշխարհի գրեթէ բոլոր յեղուները . այս նախկին մշակներու կիները կը հագնէին Անգղիոյ եւ Հոլանտայի ամենէն ճոխ կերպասները, ոսկեթել եւ արծաթաթել դիպակներ, ու փողոցներուն մէջ տարօրինակ տեսարան մըն էր տեսնել մանուկները հագնուած այլազան երկիրներու գոյնզգոյն տարազներով :

Մեծին Շահ Աքբասի եւ իր որդւոյն Շահ Սեֆի Ա ի օրով Հայերը մեծամեծ հարստութեանց տիրացան : Յօճա Պետրոս, իր մահուանը 40,000 թուաման (360,000 Փր.) կանխիկ դրամ ձեռք ժառանգութիւն, ի բայ առեալ իր տուները, աշակերտ, այգիները, գոհարեղէնները, ոսկիէ եւ արծաթէ սպասները, կարասիները :

Պարսից Շահը յաճախ կուգար Հայերու տունը . Մնդեան տօնին օրը անպատճառ Շահը կ'ընթրէր Ձուղայի հայ իշխանին, կաշեկնորին տունը . այդպիսի ընթրիքներուն, կերակուրները Շահին կը մատուցուէին ոսկեղէն պնակներու մէջ եւ ճաշէն յետոյ անոր հինգ-վեց հազար Փր. արժէքով ընծայ մը կ'ընէին(1) :

(1) Շահ Սեֆի կ'երթար երբեմն ընտանեւոր ճաշել իսօճա Սուլթանանի տունը . անգամ մը այնչափ կերուէ, խմից որ յիւանդացաւ . նախանձորդները լուր տարածեցին թէ արքան Թուրանորուած էր . սուտ էր . Շահը հետեւեալ օրը առողջացաւ, բայց իսօճա Սուլթանան վախնալով ինքզինքը Թուրանորեց :

Որչափ այս մարդիկը խնայող, սակաւապետ, շահասէր էին իրենց ճանապարհորդութեանց մէջ, այնքան առատաձեռն, վեհանձն, բարեսէր էին իրենց կրկրին մէջ: Եւրոպայէն վերադարձին, Հայաստանէն անցնելով, հայ կարաւաններն իրենց ճանապարհէն կը շեղէին ու կ'երթային ուխտի հայ վանքերը: Այրի վանք՝ Ս. Գեղարցը համբուրելու, Էջմիածին, հոն կրկի զածութեամբ կ'ազօթէին, ողորմութիւն կը ընծայէին եւ եկեղեցիներուն կ'ընծայէին ինչ որ գտած էին զեղեցիկ Իտալիոյ, Ֆրանսայի, Հոլանտայի մէջ, ինչպէս գորգ, սփեթել եւ արծաթաթել զիտակներ, եկեղեցական սպասներ եւ զգեստներ:

Որպէս զի Հայերը զան Ջուղայ, Մեծն Շահ Արքաս եւ Շահ Սեֆի Ա. ամէն տեսակ զիւրութիւններ առնին անոնց, հողեր բաշխեցին, սուրբէ պատ կացուցին զիրենք եւ խըստիւ կը պատժէին մահմետականները եթէ զոչն անիրաւութիւն մը ընէին Հայերուն:

Կալենդեր կը կոչուէր Նոր Ջուղայի հայ կառավարիչը, ազգին կողմէն կ'ընտրուէր, իր հայրենակցաց ըրող խնդիրներով կը վրադէր, դատաստան կը տեսնէր, սուրբ կը հաւաքէր: Շահ Արքասի կենդանութեան, Նոր Ջուղայեցիք 9000 Քր. սուրբ միայն կը վճարէին: Իր յաջորդին օրով տարին 16,000 Քր.ի կը աւելնէր: Եւ յետոյ 2000 պիստոյ որոնք յատկացուեցան մայր թագուհոյն կոչիկին, ըստ Արեւելքի սովորութեան ուր սուրբերը մասնաւոր բանի մը անուանով կը գանձուէին:

Ջուղայի առաջին Կալենդեր եղաւ Խոճա Նազար, որ հին Ջուղայէն ելլող գլխաւոր Հայերէն մին էր: Ինձ հարստութեան հասաւ վաճառականութեամբ. խիստ ողորմած էր, իր ծննդավայրին, հին Ջուղայի մէջ երկու մեծ կարաւաններայ շինել տուաւ. Երասխի երկու կողմի:

Խոճա Պետրոս, որ մեռած ատեն մէկ միլիոն Քր.ի կանխիկ դրամ ձգեց, շատ յարգուած էր իրրեւ ողորմած եւ մարգասէր. Ջուղայի մայր եկեղեցին եւ եպիսկոպոսարանը կառուցանել տուաւ, քաղաքին գեղեցիկ հրապարակն ու կրպակները շինել տուաւ. իր որդին ուզելով Կալենդեր լինել իր կարգին, ընդունայն իր ամբողջ հարստութիւնը վաճանց. Խոճա Սաֆրաս, առաջին Կալենդեր Խոճա Նազարի որդին, որ Շահ Արքաս Բ.ի սիրելին էր, ընտրուեցաւ. յազթուած եւ բոլորովին անանկացած՝ հին ատեն լիքներ գանձելու յոյսով անցաւ Սուրատ, անկէ Գոլկոնդ ու թշուառ մեռաւ ի Պեգու:

Ջուղայ չկրցաւ սակայն երկար մնալ բարգաւաճ. Շահ Արքասի յաջորդները նոյնքան սիրով չնայեցան Հայերուն. նոր ու ծանր սուրբեր դուրեցան անոնց վրայ. Հայերու հարստութիւնը կապտելու եւ զանոնք մահմետականու-

թեան ստիպելու համար, Իմամ Ջաֆէր Էսաստրիկ նոր օրէնքներ հաստատեց որ իրրեւ թէ Աստուծո՛ւմ եւ Մարգարէն ներշնչուած էին: Ըստ այս օրէնքին, երբ քրիստոնեայ մը մահմետական կը լինէր, ոչ միայն իր հօր միակ ժառանգորդը կը դառնար, այլ եւ իրեն կ'իյնար նոյնպէս իր ամենէն հեռաւոր ազգականներուն ժառանգութիւնը: Շահը յաճախ հարուստ հայ ազգիկները բոնի կը կարգէր մահմետականներու հետ:

Այս շար ազգաներուն առջեւ անտեսու համար Հայերը իրենց ազգիկները ծածուկ կը պահէին մինչեւ ինչ տասր ասրեկան ու այդ հասակին կ'ամուսնացնէին զանոնք. անս պատճառը վաղահաս ամուսնութեանց որոնց մասին Եւրոպացի ճանապարհորդներն ի Հայաստան կ'անգոսնեն Հայերը:

Իրենց օրգւոց ժառանգութիւնն ապահովելու համար, սուս վաճառում կը կատարէին բարեկամի մը, մահմետական դատաւորին առջեւ, յետոյ նոյն բարեկամը կը ծախէր ինչքը նոյն մարդուն օրգւոց ու այս ամենը կը կատարուէր ըստ օրինի:

Հայերու այս անուտրական շարժման հետեւանքներն անագին եղան. Տուրքֆոր յափըշտակութեամբ կը խօսի այս մասին. « Միթէ կարելի՞ է տեսնել աւելի գեղեցիկ հաստատութիւն մը, կը գրէ. որքան գործարաններու ծնունդ առաւ Եւրոպայի եւ Ասիոյ մէջ: Մեծն Շահ Արքաս ամբողջ երկրի երեսը փոխեց. Արեւմուտք ծանօթացաւ Արեւելքի ապրանքին եւ Արեւմուտքի արտադրութիւնը նոր զարդ եղան Արեւելքին: »

Հայ անուտրականները ոչ միայն Պարսկաստանը հարստացուցին, ուր սակի եւ արծաթ մինչեւ իրենց ժամանակ այնքան հազուադէպ առատօրէն թափեցան կարաւաններու վերադարձով, այլ եւ եղան արեւմտեան գաղափարներու տարածիչներն Արեւելքի մէջ:

Այդ հին ժամանակներու մէջ, երբ ո՛չ երկաթուղին, ո՛չ հեռագիրը, ո՛չ հեռաձայնը գոյտ թիւն ունէր, այդ Հայերը կը կցէին Եւրոպայի Մայրապոյն Արեւելքին, եւ ուղտերու քամակով Ասիոյ խույ անկիւնները կը տանէին լուրերը մեծամեծ գիւտերու եւ անցքերու որոնք տեղի կ'ունենային այն ժամանակի ազգերուն մէջ:

Անոնք սորվեցուցին Պարսից կտաներու վրայ տպելու արուեստը. Եւրոպայէն իրենց հետ բերին կաղապարներ եւ ջրաներկներ կտաններուն վրայ խէփ ջրով ծաղիկներ կամ նոյն իսկ պատկերներ տպագրելու համար:

Պարսկաստանի մէջ առաջին տպարան հաստատուն եղած է Յակոբջան անուանով Հայ մը:

Տաղանդաւոր մէկն էր, Շահը զինքը ներշնչեց իր (ատողձագործներու պէտ) կարգեց, այդ պաշտօնը առաջին անգամն էր Հայ մը կը ստանձնէր, ու Յակոբջան արժանացած էր այդ պաշտօնին՝ իր բարձր արժանիքով ու իրրեւ մեքենագէտ ունեցած ընդարձակ ծանօթութիւններով:

Եւրոպա ճանապարհորդութենէ դարձին, Սպահանի մէջ հաստատուեց տպարան 1641ին եւ ինքն իսկ շինեց գիրերու կաղապարները. տպագրեց Պողոսի Թուղթերը, ապաշխարութեան եօթը Սաղմոսները եւ աղօթքի գրքեր. ամբողջ Աստուածաշունչը տպելու վրայ էր, երբ հարկ եղաւ ամէն բան քակել, աւել, վասն զի տպագրութեան արեւետը գրչագրողներու հացը բերններնէն կ'անէր. ասկէ զատ, այս առաջին տպագրութիւնը շատ անգոյն ու թերի էր:

Պարսկաստանէն դուրս Հայերը հիմնեցին գաղթականութիւններ, որ, թէեւ ի սկզբան առեւտրական, եղան հետզհետէ մտաւորական կեդրոններ եւ նոր մղում տուին գրականութեան ու իրենց հայրենակցաց ընդհանուր զարգացման:

Ամասերգամի մէջ, ԺԶ. դարուն, Հայերն ունէին մեծ վաճառանոցներ ուր կը հաղորդակցէին Իտալիոյ, Լոնդրայի, Մարսիլիոյ, Լիհատանի, Պարսից, Հնդկաց հեռ, եւ կը զբաղէին թանկագին քարերու, կերպասի եւ արեւելեան բերքերու առեւտրով. յետոյ, Յովհաննէս Միւնա անունով կալիֆիացի Հայ մը Ամասերգամի մէջ հիմնեց հայկական եկեղեցի 1745ին(1):

Վիննակի մէջ, ուր կուգային Հայերը Սաչակրաց օրերէն, ԺԷ. դարու կիսուն կար Սարհազի օրգի Գասպարի եւ Երեւանցի Համազասպեան Տէր Թաղևոս քահանայի տպարանը. Սեբաստայի Միսթար Աբբան 1701ին հաստատուեց Միսթարիաններու վանքը՝ որոնք եղած են հայկական վերածնութեան մեծ արժարժիչներէն: Ռուսաստանի մէջ եւ Հնդկաստան, Հայերն եղան կարապետներն ու յառաջապահները եւրոպական երկու մեծ պետութեանց որք ունին այսօր մեծ հողեր Ասիոյ մէջ. առանց հաշուելու հայ զօրապետներու յաղթանակներն ու նուաճումները Կովկասի, Հայաստանի եւ Կասպեան երկիրներու մէջ, ԺԷ. դարուն Մեծն Պետրոսի արքունիքը շատ գոհ եղաւ վաճառական Հայոց մէջ գտնելով ռուսական ազդեցութեան եւ առեւտուրի տարածիչներ:

Հնդկաստանի մէջ Ջուղայեցի Հայերը ունեցան շատ ծաղկած գաղթականութիւններ, զպրօցներ, եկեղեցիներ, տպարան, լրագիր. Հնդկ վեհապետներու մօտ ունեցած իրենց ազդեցութեամբ ստացան առանձնաշնորհումներ որոնց շնորհիւ անգղիական ընկերութիւններ կըցան հաստատուել Գանդէսի հովտին մէջ:

Յրանսայի մէջ, տորոնի անունն անբաժան է Հայու մը անունէն որուն Աւինտոն քաղաքն եւ Վոկլիւզի գաւառը արձան կանգնած են Նոտր-Դամ դէ Դոմի ժայռին վրայ (1846): Յով-

հաննէս Ալթուենան (Jean Althen(1), իր կեանքը վտանգի դնելով քանի որ այդ առնկին օտար երկիր տանելու փորձը մահուամբ կը պատժուէր Տաճկաստանի մէջ, գաւազանի մը մէջ պահած, տորոնի սերմ մտցուց Ֆրանսա. Լուդովիկոս Փե.էն ընդունուեցաւ, եւ նկատելով որ Աւինտոնի եւ Փոքր Ասիոյ կլիմաներն ու հողերը նոյնն են, փորձեց տորոնի մշակութիւնն Աւինտոնի շրջակայքը. Այս մշակութիւնն եղաւ Վոկլիւզի գաւառին հարստութեան մեծ աղբիւր, թէեւ Ալթուեն ապրեցաւ եւ մեռաւ աղքատ (1774) ու իր միակ աղջիկն ալ հիւանդանոցի մը չորս պատերուն մէջ աւանդեց հողին:

1660ին Չաքար Սարհազ անունով նշանաւոր Հայ վաճառական մը ռուսներն արքունիքին ուշադրութիւնը կը հրահրէր իր վրայ Ազեքսանդր Միխայիլովիչի ընծայելով ազամանդներով, մարգարիտներով եւ ուրիշ թանկագին քարերով ընդելուզուած գահ մը. Մեծ Դուքար հետաքրքրուելով իր եւ իր ազգի մասին, Սարհազ պատասխանեց. «Շահը բարի է, առեւտուր կ'ընենք իր երկրին մէջ առանց վճարելու մաքս եւ տուրք, բայց Շահը մահմետական է եւ մենք քրիստոնեայ, աւելի գոհ պիտի լինէինք եթէ ծառայէինք քրիստոնեայ Մեծ թագաւորին:»

Ահա ինչ որ մէկ քանի բանորով կ'ամփոփէ Հայերու պատմութիւնը. միշտ ընդհանուր մեծ գաղափարներու հետեւելով, ուրիշներուն ծառայած են յաճախ ի վնաս իրենց իսկ շահերուն: Քրիստոնէական դարէն առաջ, Հայ յիշը Ասիոյ ժողովուրդներուն մէջ կը տարածէ Եգիպտական քաղաքակրթութիւնը, յետոյ Մարացն ու Մակեդոնացոցը, ապա, հռովմէականը: Քրիստոնէութիւն ընդունած առաջին ժողովուրդ՝ մահու չափ կը յարի քրիստոնէական իրէպլին զոր կ'ուսուցանէ Վրաց, Փոքր Ասիա. այլ եւս իր կրօնքը բոլորովին կը բաժանէ զինքն իր ցեղակից եղբայրներէն, Պարսիկներէն, Բիւզանդական իշխանութեան ժամանակ, իսաչակրաց միջոցին, յետոյ Հնդկաստան եւ այլուր, քրիստոնեայ ազգերու կողմը կը բռնէ որոնք կ'օգտուին իրմէ ու յետոյ զինքը կը թողուն իր ամենէն սխալմ թշնամեաց ձեռքը:

Իր դերը չէ աւարտած. ճկուն, խելացի, առիական այն ցեղն է որ ամենէն լաւ կ'իւրացնէ արեւմտեան գաղափարները. թող ի վուր արիւն անեն իրմէ. նա միշտ կ'ապրի, միշտ աւելի յամառօծ ապրելու: Պէտք է որ ան կաւտորէ իր դերը, Արեւելքի քաղաքակրթութեան դերը:

ԴՈԿՏ. ՅՈՎՀ. ԱՐԹԻՆԵԱՆ

(1) Althenie անունը տուաւ Petit բուսաբանը՝ ի յիշատակ Յովհաննէս Ալթուենանի Ֆրանսայի հարաւային կողմը ճահիճներու մէջ գտնուող Թել Թել, մազմուկներէ կազմուած միաբլթակ մանր առնկի մը: Althen-les-paluds. նոյնպէս Ալթուենի անունով, գիւղ մըն է Վոկլիւզի գաւառին մէջ Գարպանտորատ 10 կիլոմետր հեռի:

(1) Այս եկեղեցին, զոր Հովանդացիք կը կոչեն «Պարսկաց եկեղեցի», կը գտնուի ցարդ Ամասերգամ իր հայկական արձանագրութիւններով, 22, Krom-Boomsloot փողոց. Էջմիածնի կողմանէ ծախուելով այժմ կամուրջի մայրապետներու ձեւերն աղջկանց զպրօց է:

Ծանօթ. — Այս յօդուածը դրուած է ի սկզբան ֆրանսերէն իբրև բանաստեղծիւն ու հրատարակուած Նանսիի աշխարհագրական Société de Géographie de l'Est ընկերութեան հանդէսին մէջ :



Մ Ի Ա Թ Ե Ի Հ Ո Գ Ի

Երբեմն կ'ուզեմ թըռչիլ դէպ ի վեր
Կապոյտին մէջը իբրը նոր ոգի,
Մոռանալ աշխարհն եւ իր թիւր ցաւ'ը
Որոնց ամէն ինչ դարձեր է գերի :

Կ'ուզեմ գետնաքարշ ըստոր նախանձին
Փոխարէն ղըրկել հըրճուանքը անմեղ,
Զագիր ու գըծուծ պայտուժը եսին
Կործանել հոնկէ շանթերով ահեղ :

Հոն, վե՛րը թըռչիլ եւ աստուածային
Կ'ուզեմ պատգամ տալ սիրոյ եւ զոհի,
Անխառն վայելքի ղըրկել ջինջ ոգին
Որ արցունքները փոխարկէ ժըպտի :

Բայց, ափսո՛ս, հոգիս լոկ մէկ թել ունի,
Զի բաժնըւած է իր մէջ երկուքի,
Իր մուծ բանտին մէջ մէկ մասն հոս կ'ապրի,
Միւսը դէպ ի վե՛ր թըռչիլ կը ձգտի :

Ու ես կը տանջուիմ թափիս մէջ անզօր
ձիշդ այնպէս երբոր արծիւն միաթել
Ուզէ սըլանալ դէպ անհունին խոր
Բայց կը տանջուի թելէն վիրաւոր :

Գ Ի Շ Ե Բ Ը Ե Է Մ Ը Թ Ի Ն

Շ . . . -ի յիշատակին

Գիշերն է մըթին . ամպերը յըղի՛
Բոցալից շանթեր կը ցանեն չորս դին
Գիշերն է մըռայլ . ծովը կատաղի
Անսանձ կը ծեծէ ժայռերն ահագին :

Գիշերն է մըթին . Գըրգուռ ու նէմրուծ
Խորունկ բուններնին թօժափած հըզօր,
Կը գոռան ուժգին ամպերու տակ մուծ՝
Բարկուծեան բոցեր ցանելով բոլոր :

Գիշերն է խաւար, եւ մարդիկ գազան
Խըրտջած դուրս կ'ելլեն որջերէն անձիւ .
Մուծին դաշնակից, ծարաւի արեան,
Հըսկայ զոհ կ'ուզեն, աւե՛ր անհաշիւ :

Գիշերն է մըռայլ . գիւղը ամայի
Կը ծըխայ անդուլ բոցովն արիւնի .
Գիշերն է խաւար . գոչիւններ վայրի
Կը սըվուեն քանդուժ եւ մահ կատաղի :

Գիշերն է մըռայլ, փոթորիկն հըսկայ .

Կը գոռան ամպեր, կը մըռնչէ հեղեղ,
Բըռնուծեան սուրն ալ կ'իճափէ անխընայ
Զորս կողմն աւերած եւ արիւն անմեղ :

Գիշերն է մըռայլ, գիշերն անողորմ . . .
Շուշան Շողերը չունի թել թիկունք :
Վոհմակը Գուրդի անզուսպ իբրը հողմ
Կ'սուրայ ետեւէն : Կուլայ՝ մահ-արցունք :

Գիշերն է մըռայլ, ծովը կատաղի,
Երկինք եւ երկիր կ'ոռնան բարկանայթ .
Մըտերիմ կ'ձայնեն ալիքներն աղի,
« Մեղ մօտ ե՛կ, Շողե՛ր, հոստեղ է ազա՛տ . . . »

Գիշերն է մըթին, Սիփանայ սարէն
Զայրոյթի շանթեր կ'իջնեն անընդհատ .
Ալիքներն ուժգին ալիք կը քանդեն,
Շողերի արեւն կուլան յուսահատ . . .

Մ Ա Ն Ո Ի Ե Լ Մ Ի Բ Ա Ք Ե Ա Ն



Հ Ա Յ Վ Ա Վ Ա Ն Ե Ր Ե Վ Ո Յ Թ Ն Ե Ր Փ Ա Ր Ի Զ Ի Մ Է Զ

Փարիզի Հայկական Միութիւնը Փետր. Ծին տուա Սալ Հոչի մէջ նուագահանդէս-պարահանդէս մը : Նուագահանդէսին կը մասնակցէին Տիկին Սըկոն-Վէպէր՝ մեծանուն օղբերգուհին, Բոնսերվաթուարի աշակերաներէն՝ Օր. Սեպրոն-Նորպինս՝ ապագայ ասաղ մը, եւ պարիթան Լէոն Փոնգիօ, Պ. Տիրան Ալիքսանեան, Տիկին Սվազեան, ամուսինը ծանօթ ազգային գործիչ Միհրան Սվազեանի եւ որ ի յայտ բերաւ ստիբանօի զմայլելի ձայն մը եւ զգայուն երգեցողութիւն, Պ. Կրիթիլեա՝ Օտէոնէն՝ որ արտասանեց Յովն. Թումանեանի « Լուսաւորչայ կանթեղ »-ին եւ Աւետիք Իսահակեանի « Որսկան ազբէր »-ին ֆրանսերէն թարգմանութիւնը, Պ. Մաքսուտեան, որ արտասանեց Պ. Զօպանեանի « Սիրա մարդկային » քերթուածը, Պ. Ա. Շահ-Մուրատեան, որ իր հոյակապ ձայնով երդեց Կոմիտաս վարդապետի ձայնագրած « Գնաց գալուն, եկաւ աչուն » պաշտելի ժողովրդական երգը, ինչպէս եւ Սիկիւրի կտոր մը :

Փարիզի Հայ Աշխատաւորաց Միութիւնը Փետր. 19ին Սալ Լըմուանի մէջ տուա սիրուն նուագահանդէս-թումպոյա մը . Շիրվանդատէ արտասանեց շատ ծափահարուած բանաստեղծիւն մը, նիւթ ունենայով՝ Ռուսն ու Հայու թիւնը : Նուագահանդէսին մասնակցեցան հայ եւ օտար արուեստասէրներ եւ արուեստագէտներ :

Փարիզի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը Մարտ Ծին Սալ տէ-գ-Ակրիբիլթէօրի մէջ տուա նուագահանդէս-պարահանդէս մը :

նուազահանդէսին կը մասնակցէին Պ. Ալեքսան-
եան, Օր. Կլաւտիա Մաքսանս՝ Օտէննէն, եւ
խումբ մը հայ եւ ֆրանսացի արուեստասէրներ:
Փորձիչ Հայ Ուսանողական Միութիւնը
Մարտ 27ին ժողովարար սրահին մէջ տուաւ զուտ
հայկական փրոկրամով երեկոյթ մը: Կանի մը
ուսանողներ մէկ քանի արուեստասէրներու հետ
խաղային Պարոնեանի Արեւելեան Ասամնարոյ-
թին առաջին սրարուածը գրեթէ ամբողջու-
թեամբ եւ Պէշիկթաշլեանի երեք Գաջերը. հիւ-
գեցին՝ զեկավարութեամբ Պ. Ա. Շահ-Մուրատ-
եանի՝ 6-7 հայ ժողովրդական երգեր, արտա-
սանեցին Յովհաննէս Թումանեանի, Պետրոս
Դուրեանի բանաստեղծութիւններ, Պարոնեանի
« Թուրնիւրն եւ Աւանակը », ու « Ալփասլան » ի
« Ինչու չեմ ամուսնանար »ը: Պ. Չօպանեան
արտասանեց բանաստեղծութիւն մը, նիւթ ունե-
նալով « Պոսյա մը հայ գրականութեան եւ գե-
ղարուեստի շուրջ »: Զանաց ցոյց տալ ազգի մը
համար գրականութեան ու գեղարուեստի կական
կարեւորութիւնը, բնորոշել անոր եւ զիրքը զոր
հայ ցեղը կը գրաւէ տիեզերական գրականու-
թեան ու գեղարուեստին մէջ, եւ զգացնել պէտքը
զոր ունի հայ ժողովուրդը՝ իր մասոր ու գե-
ղարուեստական զարգացմանը մղում տալու: Կը
հրատարակենք ստորեւ այս բանաստեղծեան
վերջաբանը:

Տիկիներ, Պարոններ,

Հայ ցեղը իր ճակատագիրը գեւ չէ լրացու-
ցած: Այդ աշխարհը, որ, հազար փորձանքի
եւ աղէտքի մէջէն միշտ կը մնայ կենդանի,
ապացուցած է, յաճախ, որ կարող է արտադ-
րել հերոսներ եւ տաղանդներ: Այս ցեղին մէջ
կայ կորով, եւ կայ գեղարուեստական կարո-
ղութիւն: Կարելի է ըսել թէ այդ ցեղը ունի
գրեթէ բոլոր տարրերը որ պէտք են մեծ ազգ
մը կազմելու համար. ներքին ու արտաքին կարգ
մը ձախորդ պայմաններ թող չեն տուած որ
ցարդ մեր ցեղն ըլլայ իսկապէս « մեծ ազգ »:
Հին, բայց չէ ծերացած Հայ ցեղը: Մշտական
վերանորոգումներու կարող է ան: Չենք գիտեր
ինչ որ ապագան կը վերապահէ անոր, բայց կա-
րելի է, եւ մենք պէտք է այդպէս հաւատանք,
որ ապագային մէջ ան իր ուժերուն չափը տայ
աւելի լայն, հզօր եւ ազատ կերպով քան ինչ
որ ըրած է ցարդ. թերեւս իրեն է վիճակուած՝
օր մը՝ Մերձաւոր Արեւելքի ամենէն արուես-
տապէտ, ամենէն ազատախոհ ու քաղաքակրթ-
թիւ տարրը ըլլալ: Ինչ որ արդէն իսկ եղած է
ցարդ՝ բաւական յարգելի չտփով:

Չի բաւեր սակայն որ հաւատանք ստոր
եւ ցանկանք զայդ. պէտք է ամենքս աշխատինք
մեր ուժերուն տեսակին ու չափին համեմատ՝ որ
այդ ցանկալի հեռադատկերն իրականանայ:

Դուք մանաւանդ, հայ ուսանողներ, դուք
որ այս հայ գրական երեկոյթը կազմակերպելով՝
ստպացուցիք ձեր սէրն ու անձնութիւնը դէպ

ի ձեր ազգը, ձեր լեզուն ու գեղարուեստը,
դուք որ վաղուան Հայութիւնը պիտի ըլլաք,
դուք պարտականութիւն ունիք աւելի հեռուն
երթալու քան ինչ որ Զանացին ու կրցան ձեր
նախորդները: Շատ աւելի քան երջանիկ,
ազատ ու հզօր ազգերու զաւակները, դուք
պարտաւոր էք աշխատել, որովհետեւ զաւակ-
ներն էք դժբաղդ ու բաղձաչարչար, հալար
պէտք ու հազար ցաւ ունեցող ժողովրդի մը:
Ինչ ալ ըլլայ ճիւղը որուն նուիրուած էք, ինչ
ալ ըլլայ ընկերական կամ իմաստասիրական
վարդապետութիւնը որուն յարած էք, ձեր սըր-
տին մէջ բարձրագահ պէտք է միշտ տիրէ սէրը
այս թշուառ ազգին եւ զայն ազատութեան,
մեծութեան ու փառքի բարձրացնելու ցանկու-
թիւնը: Ազգասիրութիւնը միշտ եղած է՝ նոյն
իսկ հզօր ազգերուն համար՝ մեծութեան ու
փառքի ստեղծիչ ուժ, բարոյական առաքինու-
թեանց աղբիւր, հանձարը բեղմնաւորող ու զօ-
րացնող ներշնչարան, բայց մանաւանդ ստրուկ
ու հալածուած ազգերուն համար, ան անհրա-
ժեշտ, հիմնական ու նուիրական զգացումն է՝
զոր ունենալ եւ զարգացնել անխուսափելի պար-
տականութիւն է ամէն ազնիւ, վեհանձն ու ար-
ժանապատուութեան զգացում տածող անհատի
համար: Ինչ ասպարէզի ալ որ նուիրուէք, միշտ
հետաքրքրուեցէք ձեր ազգի ճակատագրով, սի-
րեցէք ձեր գեղեցիկ լեզուն, սիրեցէք հայ գրա-
կանութիւնը, հայ գեղարուեստը, եւ անոնց
զարգացմանը նախանձախնայի եղէք:

Հայ ժողովուրդը ունի տուած՝ հին ու նոր
ատեններուն մէջ՝ տաղանդներ, բայց իսկական
« հասարակութիւն » (public) մը կարելի չէ ըսել
թէ կայ Հայոց մէջ. կան անհատներ, խումբեր՝
իսկապէս գրասէր, գեղարուեստասէր. չորս
միլեոն Հայութեան մէջ ասոնք՝ տեսակ մը
փոքրիկ ովասիաներ են. եթէ այդպէս չըլլար,
Պարոնեանի պէս հեղինակ մը՝ օրինակի համար՝
ոմնքան մատչելի, զուարճալի, ամենուն համար
հասկանալի, օգտակար եւ տիրուելի, պէտք
չէր որ աղքատ ու կարօտ մեռնէր. իր զաւակ-
ները, որ մնացին խեղճ (ու եթէ չըլլար սքան-
չելի Պէրպլեբանը, վարժապետ մը, որ զանոնք
իր պաշտպանութեան տակ առաւ, անօթի մե-
ռած կ'ըլլային), այդ զաւակները պէտք էր իրենց
հօրը տաղանդին շնորհիւ՝ ապրելու շատ ապա-
հով միջոցներ ժառանգած ըլլային: Այո՛, չկայ
հայ իսկապէս գրասէր « հասարակութիւն » մը.
դուք, վաղուան Հայութիւնը, պիտի կազմէք
զայն:

Իսկ ձենէ անոնք, բարեկամներս, որ գրա-
կան կամ գեղարուեստական ձիքը ունին, զայն
զարգացնելով հանդերձ ընդհանուր գրականու-
թեան ու գեղարուեստի դասերով, թող մաս-
նաւորապէս ուշադիր ըլլան եւ աջակցին հայ-
կակա՛ն հին ու նոր ինքնուրոյն գեղարուեստի
բոլոր տարրերուն երեւան ելլելուն, որպէս զի
օր մը մեր յաջորդներուն ծանօթ ըլլայ իսկին
ամէն ինչ որ հայ տաղանդը արտադրած է իր
ուրոյն ստեղծագործութեամբ. ու թող Զանան

որ մեր պրականութիւնն ու դեղարուեստը այսուհետեւ այդ դուռ հայ տարրերով աւելի ճոխ ու ինքնատիպ դառնայ :

Ամենքս, ամենքս, Տիկիներն ու Պարոններ, մենք որ այստեղ հաւաքուած ենք, ու մեր բոլոր եղբայրները որ այսարհիս ամէն կողմը ցըրուած են կամ հայրենիքին մէջ կը տքնին, ամենքս՝ միացած սիրովը Ազգին, ցանկութեամբը մեծութեան եւ ազատութեան, պէտք է այսատինք՝ ամէն ոք իր կրցած ձեւով՝ բայց իր բոլոր ուժերովը, որպէս զի մեր տաղանդաւոր բայց զժբազդ ժողովուրդը հասնի աւելի երջանիկ ու իր զարգացման համար նպաստաւոր պայմաններու, եւ վաղուան Հայութիւնը կարենայ լիակատարօրէն տալ չափը հայ մտաւոր ուժերուն, եւ մեր գրականութեան եւ գեղարուեստի ծաղիկը, հեռզնտէ՛ աւելի ինքնատիպ, չքեղ, երփնածոխ ու բուրմնաւէտ, յազմական կանգնի մարդկային Հանճարին մեծ պարտէզին մէջ :

Ա. Չ.



ԿՈՉ ՄԸ

Կովկասի Հայոց ազգագրական ընկերութիւնը մեզ ուղարկած է չափեկան կոչ մը զոր կը հրատարակենք ստորեւ . այդ ընկերութիւնն ու իր օրկանը՝ Պ. Լալայեանի ձեռնհաս ու եռանդուն անօրէնութեամբ հրատարակուող Ազգագրական Հանդէսը՝ մեր ազգային մտաւոր կեանքին ամենէն սիրելի ու մխթարական երեւոյթներէն են . Հայ ազգագրական-հնագիտական թանգարանի մը հիմնարկութեան նախաձեռնութիւնը զոր կը ստանձնէ այդ ընկերութիւնը, մեծապէս կարեւոր է, եւ ամէն Հայ պէտք է աջակցի այդ ազգօրուտ ծրագրին իրականացման :

Հայոց Ազգագրական Ընկերութիւնը ի նկատ առնելով այն ահագին նշանակութիւնը՝ որ ազգագրական-հնագիտական թանգարանը ունի թէ՛ մի ազգի ինքնուրոյն զարգացումը եւ թէ՛ ընդհանրապէս մարդկութեան էվոլյուցիան բնորոշելու համար .

Ի նկատ առնելով՝ որ համալսարնային քաղաքակրթութեան շնորհիւ հայի առանձնայատուկ կեանքը, նրա ազգային զգեստները, պարապմունքի գործիքները, նիստ ու կացը, սովորութիւնները մեծ արագութեամբ փոփոխութեան են ենթարկուած .

Ի նկատ առնելով, մշակուող հողի սակա-

ւութեան պատճառով դարերից ի վեր անեղծ մնացած դամբանները այժմ հերկուած են, եւ այս պատճառով նրանք կա՛մ կորցնուած են այն նշանները, որով հնագէտները հնարաւորութիւն ունեն որոշելու եւ պեղելու, հետեւապէս եւ մնալու են գետնի տակ անյայտ, կա՛մ բացուած են եւ նրանց մէջ եղած հնագիտական իրերը ընկնելով փուղացիների ձեռքը՝ ոչնչանուած են, կորցնուած իրենց փտական արժէքը՝

Որոշեց նախապատրաստութիւններ տեսնել մի ԱԶԳԱԳՐԱԿԱՆ-ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ հիմնելու :

Այս նպատակով հրատարակեց մի « Ծրագիր Հայոց Ազգագրական Թանգարանի համար նիւթեր հաւաքելու », պատրաստեց տպագրուած եւ ժապաւնիտուած մատենաներ՝ պեղուած, զընուած եւ նուէր ստացուած իրերը ցուցակարգելու համար եւ ուղարկելով ընկերութեանս ճիւղերին՝ յանձնարարեց հիմնել թանգարանական պահեստարանները եւ հաւաքել ազգագրական-հնագիտական իրեր : Մի այսպիսի պահեստարան եւս այստեղ, Թիֆլիսում, հիմնելով, Ընկերութեանս Խորհուրդը յոյս ունի որ, որ մօտիկ ապագայում, երբ բաւականաչափ իրեր հաւաքուած կը լինին, Ազգագրական Ընկերութեան կենտրոնի եւ ճիւղերի ներկայացուցիչների ընդհանուր ժողով կը պումարի՝ որոշելու թէ՛ ո՛ր պէտք է հիմնել այդ թանգարանը, ուր եւ անմիջապէս կը տեղափոխուեն այդ բոլոր տեղերում հաւաքուած իրերը :

Միեւնոյն ժամանակ Խորհուրդը ի նկատ առնելով ընդհանրապէս մարդաբանական գիտութիւններին եւ մասնաւորապէս կովկասագիտութեան վերաբերեալ գրքերի անհրաժեշտութիւնը Կովկասի ուսումնասիրութեամբ պարսպօղների համար՝ իւր ներկայ տարուայ յունուարի 4-ի նիստում որոշեց բանալ Թիֆլիսում ՄՐԳՄԱՐԱՆԱԿԱՆ-ԿՈՎԿԱՍՍԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԳՐԱՆ՝ օգտուելով այն հանգամանքից, որ Խորհրդի անդամ Ե. Լալայեան, այդ գիտութիւնների վերաբերութեամբ բաւական հարուստ իւր գրադարանը (մօտ 5000 բ. արժողութեան) գրել է Ընկերութեանս տրամադրութեան տակ :

Յայտնելով Հայոց Ազգագրական Ընկերութեան այս որոշումները՝ խնդրում ենք յարգելի հատարակութեան ամակցութիւնը :

- Նախագահ՝ Աղեքսանդր Մելիք-Ազարեան
- Փո-նախագահ՝ Տ. Հայկանոյշ Մարտիրոսեան
- Դանձապահ՝ Առաքել Սարուխանեան
- Անդամներ՝ Տ. Նասայիս Նունուֆարեան, Եփրեմ Մասարեան, Մնացական Խունուրեց, Յովսէփ Տեր Դաւթեան, Գրիգորիոս Տեր Սարգսեան

Անդամ-Քարտուղար՝ Երուսեղ Լալայեան
Հասցէ. Arakel Sarouchanian, Tiflis (Caucase).



ԵՒՐՈՊԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Polybiblion թերթին մէջ ծանօթ պատմագէտ եւ արեւելագէտ Պատն Բառա ար Վօ հրատարակած է հետեւեալ յօդուածը Les Trouvères arméniens հասարին մասին .

« Հայ բանաստեղծութիւնը , մեր Ֆրանսական մտաւոր սովորութեանց համեմատ , տխուր , ծանր , քիչ մը հանդիսաւոր կ'երևայ . բայց խորունկ է ան , եւ անկեղծ , եւ լաւ կ'արտայայտէ հոգին ժողովրդի մը որ աւելի հնութիւն ունի քան երջանկութիւնը — Ան հաւաքածու մը որ կը պարունակէ կատրոններ տասնեւութ բանաստեղծներու , որոնց հնագոյնները ժ. Գ. դարէն են , եւ նորագոյնը՝ Ջիվանի՝ իր ղեղին մեր օրով պատահած աղէտքները ողբացած է : Այդ կատրոնները քնարերգական են . սիրոյ երգեր , խոկումներ , ողբեր , խաղեր , քանի մը կրօնական տաղերու . եւ բնութիւնը , ծագիկներն ու պարտէզները դրուատող երգերու հետ : Ատոնց ընդհանուր նկարագիրը քիչ մը միօրինակ է , կրօնական զգացումը կը տիրապետէ , երևնալով ազգային երգերուն մէջ ու տոգորելով նոյն խի սիրային քերթուածները : Պատկերները՝ այս վերջիններուն մէջ՝ յաճախ կը կրկնուին ու մեր ճաշակին համար քիչ մը ծայրայեղ են . սիրուած կինը արեւէն պակաս գեղեցիկ չէ , եւ զգացումը զոր կը ներշնչէ՝ քիչ անգամ յափշտակութենէն վար կը մնայ : Այդ բանաստեղծութեանց մէջ կը նշմարուի ազդեցութիւնը պարսիկ բանաստեղծութեան , ուր պատկերները ա՛յնքան վայլուն են եւ զգացումները ա՛յնքան խանդոտ . բայց՝ պարսիկ բանաստեղծներուն մօտ՝ աւելի նուրբ երանդներ կան հրայրքի մէջ , եւ մանրամասնութիւններ աւելի սիրուն , արտայայտութեան մէջ՝ աւելի ալլաղան :

Իւրաքանչիւր բանաստեղծի գործէն քաղուած կտորներու սկիզբը դրուած է հեղինակին կենսագրութիւնը , ինչ որ պատմական ճշմարիտ արժէք մը կուտայ այդ դրքին : Այդ կենսագրութիւնները եւ կատրոններուն թարգմանութիւնը պարտական ենք Պ. Ա. Չօպանեանին , որ Արեւելքով հետաքրքրուող Փարիզցիներուն քաջածանօթ է , եւ բարձր յարգանքի արժանի՝ այն եռանդին համար զոր զոյց կուտայ ամէն բանի մէջ որ կարող է իր ղեղին տառապանքները նուազեցնել կամ պատիւը բարձրացնել :



“ՕՐՀՆԵԱԼ ԵՍ ԴՈՒ Ի ԿԱՆԱՅՍ . . .”

Մարիա՛մ , այս անկողնին վրայ երբ նքսիս
Ու ես առջեւդ գորգին վրայ ծընրադիր
Համբուրեմ խաժ երակներն
Այդ ձեռներուդ որոնցմէ յոյս կը ծորի ,
Մարիա՛մ , սաք շրթունքներուս սակ կը զգամ
Էակ մ'որ լուռ , արիւնդ ումայ ումայ կը խըմէ :
Այն գիշերէն՝ երբ մագերդ այդ բարձրդ վրայ
Անխուրժօրէն լեցուցած՝
Մոցդ հանգիսին բացիր , եւ բուռն հանգիսէն
Քրթիցի մ'առաս քունքերդ վար հոսեցաւ ,
Եւ կուտարիւնդ մեռաւ
Արգանդիդ մեջ ու այլերուդ երկնային ,
Այն գիշերէն քարքիչներէն կոպերուդ
Մեղր կարեց . դու եղար
Հեզահամբոյր , լըռակեաց
Լուսափետուր եզ աղունեակ մը եղար՝
Որ արեւուն սակ կը ծկրած կ'երագէ
Շինուքեան վրայ նոր բոյնին . . .
Եր դիտեմ արդ հաղցրիկ հիւժումն այտերուդ ,
Եւ բաց շապկիդ մէջէ ծիծերդ՝ որոնց մէջ
Կը բաժնուի կեանքդ եւ դու
Բաժնուելով մայր կ'ըլլաս :
Մե՛ն մի զարկին մէջ երակիդ ես կը զգամ
Տրոփուներ նայն իմ սրբիս ,
Եւ բողբոջումը արիւնքս ժողիկից՝
Որուն բուրումը կ'արբեցնէ զիս եւ հեզ
Եւ սե՛ն է մեր երկուքին :
. . . Օրհնեա՛լ ըլլաս , Մարիա՛մ .
Դու որ անհուն գորովով
Կողերդ ինձի կուտաս եւ ո՛սկրդ ուրիւ
Ոսկրի մ'հա՛ւար կը կոտրես .
Դու որ կ'ըլլաս ամենէն
Մախուր ակօսն ակօսներէն բեղնուոր ,
Ու ամենէն չկնաղ քաղարբ՝ բոլոր
Թագարներէն շուշանի ,
Օրհնեա՛լ ըլլաս յաւիտեան .
Դու որ՝ ըզգօն՝ կը կրես
— Եւսկորին մէջ ինչպէս մարգրիս մը ազնիւ —
Ասուածասիպ Մարդը խորն այդ արգանդիդ՝
Օրհնեա՛լ ըլլաս , Մարիա՛մ :

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ



Ք Ր ՈՆ Ի Կ



րկու զէպք՝ այս վերջին ժամանակներուն մէջ՝ ինծի ամենախոր ցաւ պատճառեցին . մին՝ Արփիարեանի սպանութիւնն էր , միւսը՝ Փարիզի թուրք-Իրոջակեան Գոնկրէն :

* * *

Արփիարեանի սպանութիւնը ամենէն անձոնի եւ ամենէն զգուելի անակնկալն էր որ կրնար պատահիլ : Ես յաճախ քննադատած եմ Արփիարեանը , եւ իր թերութիւններուն մասին ըսածներէս բառ մը չունիմ փոխելու , որովհետեւ ամուր համոզման արդիւնք էին անոնք . բայց երբէք չեմ խորհած որ իր թերութիւնները, ինչքան ալ խոշոր ըլլային , զինքը՝ նոյն իսկ տեսականորէն՝ արժանի կայուցանէին այսպիսի վախճանի մը : Երկու անգամ արգէն յեղափոխական ձեռքը իջած էր իր վրայ ջնջելու համար , եւ բարեբաղդարար չէր յաջողած . այդ երկու մահա՛որձերուն զէմ ալ բողոքած եմ, եւ այն միամիտ սպանութիւնն սննէի թէ ոչ մէկը պիտի մտածէր վերանորոգել այդ քառմուկի , անիմաստ եւ անվեհանձն ժեսթը : Մեր յեղափոխական պատմութեան ամենէն տղեղ ու ամօթալէց արարքներէն մին պիտի մնայ այդ սպանութիւնը :

Հայաստանութեան չարիքին վրայ որոշապէս յայտնած էի մտածումս Անանիոսի վերջին քրոնիկին մէջ : Հրէշային բան մըն է այն դերութիւնը որով մեր յեղափոխական կեանքին մէջ կը վճռուի ու կը գործադրուի այս կամ այն անհատին սպանութիւնը՝ « Նպատակը միջոցը կ'արդարացնէ » անազնիւ եւ անճիչ սկզբունքին վրայ հիմնուելով : Եթէ սպաննուած Հայերը ըլլային բոլորն ալ՝ լրտեսներ , իսկական մատնիչներ , ոչ ոք մտքէն պիտի անցընէր բողոքել ատոր դէմ : Բայց ո՞վ է որ պիտի հաստատէ թէ այս վերջին տասնհինգ տարուան մէջ յեղափոխական գնտակին տակ ինկած Հայերը մատնիչ ու լրտես էին ամենքն ալ : Մեծ մասամբ՝ սարսափ տարածելով յեղափոխութեան ուժն ու վարկը բարձրացնելու նպատակով կատարուած են այդ սպանութիւնները , — բարբարո՛ս յղացում , զոր ես երբէք չեմ ընդգրկած եւ որուն զէմ միշտ բողոքած եմ : Ծրանսական յեղափոխութեան՝ որմէ չափազանց ազդուած են մեր յեղափոխականները , լաւագոյն չըջանը Թէոօսի չըջանը չէ , ընդհակառակն՝ այդ չըջանը պատճառ եղաւ որ այդ հոյակապ յեղափոխութիւնը՝ քառասային արիւնոտ մրրիկի մը մէջ մոլորելով ու սուզուելով՝ չտար այն բովանդակ

արդիւնքը զոր պիտի տար՝ եթէ պաղարեւն եւ նուազ արիւնկզակ զեկավարութեան մը տակ շարունակուած ըլլար :

Ահոսին այն է , — եւ ասիկա՛ նոյն իսկ այժմ կարելի չէ չկրկնել — որ այդ ձեռով ըսպանութեանց ատայինք մեր մէջ՝ կատարուեցաւ նոյն ինքն չաւանութեամբ եւ հովանաւորութեամբ Արփիարեանին : Տիգրան Գարակէօզեանն ոչ լրտես էր ոչ մատնիչ , սպաննուեցաւ միամիտ որովհետեւ չէր ուզած Հնչակեան քոմիթէին յանձնել իրմէ պահանջուած գումարը : Արփիարեանն ոչ միայն հովանաւորած էր այդ սպանութիւնը , այլ եւ գիտնալով հանդերձ որ անոր հետեւանքով դանձուած գումարը Զէյթուն հասնել իսկ չէր կրցած Նապարթէկի կեդրոնը , այլ կեդրոնի օրկան Հեչակին մէջ Աստուծոյ մասը յողումով ջատագովեց եւ արդարացուց այդ սպանութիւնը : Եւ այդպիսի արդարացումներու վրայ հիմնուած սպանութիւններ անկից ի վեր բազմաթիւ եղան՝ մեր բոլոր յեղ. կուսակցութեանց կողմէ : Աւելին կայ , ամիս մը առաջ իր սպանումէն , Արփիարեան հետեւեալը կը գրէր Շիրակի մէջ՝ Դաշնակցութեան հրամանով սպաննուած Վարդօի մասին . « Գերմալդկային արդարագատութիւնն էր որ մտթ վիշեր մը Ռուսներէ փողոցներուն մէջ 1896ին թափուած արիւնին վրիժառու պատուհասը անօրինեց , նախապէս՝ բարոյական պատճաղութեամբ մը . — պատուի ոչնչացում : »

Ինչո՞ւ երկնային արդարութեան մատը՝ անգամ մը եւս՝ կը փնտռէր Արփիարեան այդ նոր սպանութեան մէջ . . . եթէ Վարդօ իբր Պանքայի ցոյցին կազմակերպիչներէն մին՝ Պոլսոյ ջարդին անուղղակի շարժառիթ դարձած ըլլալով՝ արժանի էր « Աստուծոյ մատէն » պատուհասուելու , ուրեմն հիմայ՝ այդ Արփիարեան տրամաբանութեամբ պէտք է արդարացնի՞ նոյն ինքն Արփիարեանի սպանումը՝ քանի որ Արփիարեան զլիաւոր կազմակերպիչներէն մին եղաւ Պապը-Ալիի ցոյցին որ չէ թէ 10,000 այլ 200,000 Հայու կոտորման զրգիչը դարձաւ . . .

Անցողակի բեմ ո՞ր Վարդօ սպանութիւնն ալ ես դատապարտելի կը գտնեմ : Իրոջակի վերջին թիւով հրատարակուած Ահաբեկիչ մարմնին վճիռը այդ սպանութեան որոշման իբր պատճառ ցոյց կուտայ Վարդօյի 12,112 Ֆր. յեղափոխական դանձուն պատկանող գումարը իւրացուցած ըլլալը : Վարդօ շատ մեծ թերութիւններ ունէր . իր թերթը գիտակից անուանարկումի զգուելի օրկան մը դարձած էր , եւ մասնաւորապէս ինձ նկատմամբ ամենասանազնիւ դիրք բռնած էր ատեն մը , բայց նոյն Վարդօն հայ յեղափոխութեան մէջ քսան տարիէ ի վեր կարեւոր դեր կատարած գործիչներէն մին եղած էր , այս վերջին տասը տարիներուն մէջ Դաշնակցութեան մատուցած էր որոշ ծառայութիւններ , նոյն իսկ անուանարկումի արարքները կը կատարէր ան Դաշնակցութեան քննադատները սեղսնելով այդ կուսակցութեան ծառայութիւն մատուցանելու նպատակաւ . Պանքայի ցոյցին կազմակերպու-

խնդրոյն, ապիկար վարիչ ու մասնիչ՝ բնաւ երբէք նոյն բանը չէ, եւ ինծի համար անհասկանալի կը մնայ թէ ինչո՞ւ Վեր. Հնչ. կուսակցութիւնը տարիներով Իշխանակցականներուն դէմ ճիշդ այդ Արփիարեանը մասնիչ համարող ամբաստանութեան մասին բողոքած ըլլալով հանդերձ՝ ինքն իսկ սկսաւ ապիկար վարիչ Արփիարեանը հեռացնելէ քիչ յետոյ՝ զայն նաեւ մասնիչ նկատել: Վեր. Հնչակեան օրկաններուն մէջ, Պ. Պարթեւեան հարիւր սնգամ « ապացուցուած մասնիչ » կոչած է Արփիարեանը, սակայն չեմ տեսած որ իր ունեցած ապացոյցը հրապարակած ըլլար երբէք:

Ո՞վ է Արփիարեանը սպաննողը, եւ ինչո՞ւ կատարուեցաւ այդ սպանութիւնը, չեմ գիտեր: Բայց սա որոշ է ինծի համար որ եթէ հայ ձեռք մը՝ առանց գողտու. կրցաւ չքայցնել մարդ մը որ՝ հակառակ իր բոլոր թերութիւններուն՝ մեր նոր գրականութեան սիւներէն մէկն էր, աստիկա հնարաւոր կրցած է ըլլալ չնորհիւ այդ հազար սնգամ յեղեղուած « մասնիչ » բառին զոր Հայոց յեղափոխական բոլոր կուսակցութիւնները կը նետէին այդ մարդուն զլիւտն, եւ որ եթէ ոչ մէկուն կողմէն որոշապէս ապացուցուած չէր, ոչ մէկուն կողմէն ջախջախիչ ու վերջնական յատկութեամբ մը հերքուած ալ չէր: Այդ « գրոյցը » տարածուած, հայ ժողովրդին մեծամասնութեան մտքին մէջ տեղադրուած, եւ Արփիարեանի մասին առնուազն շիւ ու կասկածելի մարդու մը տպաւորութիւնը հաստատած էր. իր հղերական վախճանէն առաջ, Արփիարեան կը գտնուէր բարոյական բաւական սիւնը զիրքի մը մէջ, ոչ Իրօշակեանները, ոչ ինչ Հնչակեանները, ոչ Վեր. երկու հատուածները, ոչ իսկ Պ. Տամատեանը, ոչ իսկ Մուրադը, ոչ իսկ Հայկական Բարեկործ. Ընդհ. Միութիւնը՝ Նոյն իր քթին տակ հիմնուած՝ մտքերնուն անցուցին (ու որոշապէս չէին ուզեր մտքերնուն անցնել) գործակցութեան հրաւիրել այդ գործիչը, որուն՝ իրենցմէ սմանք, զայն իր ազբատութեան եւ անուանարկմանը մէջ անպաշտպան ձգելէ յետոյ, հիմայ կը վերագրեն ոչ միայն այն յատկութիւնները զոր ունէր եւ զոր նոր տեսած ըլլալ կը թուին, այլ եւ այնպիսի յատկութիւններ որոնցմէ յայտնապէս զտրիկ էր: Եւ սակայն, ինչ թերութիւններ ալ որ ունենար Արփիարեան, իր մասնիչ չըլլալը ապացուցանել զիրքին բան էր՝ ըստ իս, եւ ապշեցուցիչ ու ցաւալի բան մին էր որ աստիկա ոչ ինքը ըրած ըլլայ ոչ իր մօտիկ բարեկամները: Երբ վերջնապէս յայտնի եղաւ որ Իշխանակցութիւնը տրամադիր չէր պատուոյ ատեանի մը գումարման, Արփիարեան պէտք էր անէր Իրօշակի յաւելուածը ինչպէս եւ ինչ Հնչակեանի զինքը գաւաճան հոչակող հրատարակութիւնները, եւ անոնց ինչքան անհիմն ըլլալը հաստատէր յօգուածներու շարքով մը կամ պրօչելով մը, ամբողջ հայ հասարակութիւնը գատաւոր բռնելով: Նոյնպէս, փոխանակ զինքը մասնիչ անուանող Վեր. Հնչակեանները գրամաշորթ յորջորջելու անուղղակի եւ անուղղա-

միտ ինքնապաշտպանութեան, պէտք էր օր մը այդ պարօններուն օձիքէն բռնէր եւ հրապարակաւ բացատրութիւն պահանջէր այն պատճառներուն վրայ որով իր երէկուան ընկերները կը յանդիմնէին այդպիսի ամբաստանութիւն մը արձակել իրեն: Արփիարեան ասիկա չըրաւ: Զինքը գաւաճան հոչակող Իրօշակեանները Մեծ Հաստատնը Հայերէ պարպելու համար Ռուսիայէն վարձու ամ ազգասպաններ հոչակեց, եւ զինքը մասնիչ անուանող Վեր. Հնչակեանները գրամաշորթ եւ աւազակ յայտարարեց: Արփիարեանի մահուընէն երկու ամսու չափ առաջ, Պ. Պարթեւեան Ազգին մէջ, հեռուեալ հարցումը կ'ուզէր Արփիարեանին. « Մեզի ըսին թէ 1900ին, Լոնտոնի մէջ՝ երբ կուսակցութեան զլիւտն որ վարիչներէն մին էիր, սերա յարաբերութիւններ ունիս եղեր էամօն անուն լրտեսի մը հետ եւ թէ ուղղակի պատճառ ես գարձեր Պոլսոյ մէջ քանի մը յեղափոխականներու ձերբակալուելուն. եթէ ճիշդ չէ, հերքէ: » Եւ Պարթեւեան այս հարցումը կ'ուզէր այնպիսի տրամադրութեամբ մը ուր յայտնի էր թէ Արփիարեանի կողմէն հերքում մը՝ արդի պարագաներուն մէջ հաճելի պիտի ըլլար իրեն, քանի որ նոր զէնք մը պիտի գաւաճար այդ էտմօնի պատմութիւնը հազարոց « գրամաշորթ » ներուն դէմ: Արփիարեան լուս մընաց, եւ աստիկա զիս պարմացուց: Բանակախը սիրող այդ գրագէտը ի՞նչպէս կը փակցնէր այդպիսի առիթ մը: Լոնթիւնը հասկանալի է երբ Արփիարեանի պէս անձնաւորութիւն մը կ'ամբաստանուի լղրճուկ աննշան մարդակերպներէ, բայց երբ ամբաստանութիւն մը, տարիներէ ի վեր երեք յեղափոխական կուսակցութեանց օրկաններուն մէջ յեղեղուելէ յետոյ, նոր ձեռով մը վերտախի կը ներկայանար « Տամատ-Մուրադ երկգլխանի արձիւն » հովանաւորութեան տակ հրատարակուող Ազգ թերթին խմբագրապետին կողմէ, Արփիարեան պէտք էր պատասխանէր ու միանգամ ընդ միշտ քանդէր իրեն դէմ հիւսուած այդ մասնիչութեան գրոյցը: Եթէ ինքը չզլիջաւ ըսնէք՝ այդ բանն ընկելու, դէթ իր մտերիներէն մէկը այդ պարտականութիւնը կատարելու էր: Պ. Վահան Թէքէեանը օրինակի համար՝ որ հիմայ Արփիարեանի գիւղը կը շահագործէ՝ զայն իր մանր անձնաւորութեան իբր պատուանդան գործածելով եւ մինչեւ իսկ զայն իր գրական թաքուն ձգձիմ ու ցածոգի ատելութեանց արտայայտման միջոց գարձնելով, Պ. Վահան Թէքէեանը Արփիարեանի հանդէպ իրական յարգանքի եւ անձնութեան սպացոյց մը տուած պիտի ըլլար եթէ ինքն իսկ ցրցուէր Պ. Պարթեւեանին դէմ եւ հարկ եղած տեղեկութիւններն ստանելով Արփիարեանէն՝ անոր որչէ հարցումին տար որոշ ու ջախջախիչ պատասխան մը եւ այդ առթիւ ջանար հիմէն քայքայել այդ ամբաստանութիւնը, որ աւելի մահացու էր Արփիարեանին համար քան ապուշ գնդակը որ անոր մարմինը միայն չքայցուց:

Այդ մասնիչութեան գրոյցին վրայ, իմ կարծիքս որոշ եղած է միշտ, եւ կը մնայ ցարդ

նոյնը : Արփիարեան ունէր շատ մեծ թե-
րութիւններ : Իր թեթեւութիւնը ամենածանր
հարցերու մէջ՝ աղէտաւոր եւ վտանգալեր
հանգամանք մը կը ստանար մերթ : Իր անկեղ-
ծութեան , խղճամտութեան պակասը՝ քննա-
դատութեան մէջ՝ տարապայման համեմատու-
թիւններ կ'առնէր յաճախ : չէր քաշուեր իրո-
ղութիւնները շտկրտել իր ուզածին պէս եւ ժա-
մանակակից պատմութիւնը գրել իր քմայքին ու
զիտումներուն համեմատ : ու՛ միշտ անձնատուր
ըլլալով իր սկեպտիկ ու հեգնոտ ձգտումին որ
իր բնութեան չիմքը կը կազմէր՝ մերթ իրեն
թոյլ կուտար նոյն իսկ անխորհրդապահութիւն-
ներ՝ որ կրնան նկատուիլ իբր անգիտակից
մատնութիւն , — ինչպէս երբ Սուլթանին մա-
հափորձին հեղինակներ մատնանիչ կ'ընէր Լե-
մանի ափերուն վրայ , կամ երբ յականէ յան-
ուանէ կը յիշէր այն ինչ Դրօշակեան գործիչը
որ ստանուէնով մը մամնակցած էր Փարիզի ա-
զատական թուրքերու առաջին Կոնկրէին եւ որ
ցարդ ոչ մէկուն իրաւունք տուած է իր իսկա-
կան անունը երեւան հասնել : Այս բոլորը , եւ
դեռ ուրիշ շատ թերութիւններ , մեր մէջ՝ Ար-
փիարեանէն զատ ուրիշներ , իր արժանիքը չու-
նեցող բազմաթիւ մանր դրողներ , ունին՝ առա-
ւել կամ նուազ չափով , ու նմանօրինակ թերու-
թիւններ կ'արելի է գտնել նոյն իսկ Արփիարե-
անէն աւելի մեծ եւրոպացի գրողներու վրայ :
Այդ կարգի թերութիւնները արժանի են քննա-
դատուելու , անհրաժեշտ է այդպիսի թերու-
թիւններ ունեցող անձ մը յեղափոխական գոր-
ծունէութեան վարչութիւնէն հեռու պահել , բայց
այդ բոլորը երբէք իրաւունք չեն տար « մատ-
նիչ » անուանել Արփիարեանը : Մատնիչը այն
սեւհոգի արարածն է որ նրութեան շահու կամ
անձնական ցած վրէժխնդրութեան համար՝ զի-
տակցարար բանաւորին կը յանձնէ ազգային
դատին գաղտնիքները եւ կամ գործիչներ կը
մատնէ թշնամիին ճանկերուն : Ինծի համար ան-
հնար է ընդունիլ որ Արփիարեան այդ զգուելի
հոգին ունեցած ըլլայ : Արփիարեան միշտ եղած
է ազքատ , տերվիչի կեանքով մը ապրած , ան-
շահախնդիր , իրեն միակ հրայրք ունենալով
գրականութիւնը : Ու իր ընդարձակածաւալ ու
բազմատարր արտադրութեանց մէջ՝ ազգասիրու-
թիւնը ակնյայտնի կը տիրէ , ամէն կասկածէ
ու վէճէ վեր : Անընդունելի է որ Մշակի Հայ-
կակը , Մասիսի եւ Հայրենիքի խմբագրապետը ,
հայ ժողովրդի ցաւերուն նուիրուածան թիւ յօգ-
ուածներու , վէպերու հեղինակը՝ ազգային դա-
տին գիտակցորէն դաւաճանել ուզած ըլլայ : Ու
ես աւելին պիտի ըսեմ . նոյն իսկ ենթադրելով
անկարելին , ենթադրելով՝ բոլորէ մը՝ թէ տկա-
րութեան վայրկեանի մը մէջ՝ Արփիարեան իրօք
մատնիչի դեր կատարած ըլլայ , ներելի չեմ նկա-
տեր որ այդ « մատնիչ » քստմնելի ու կտրուկ
բառին մէջ սղմեցնեն ստուար , բազմաձեւ ու
ա՛յնքան համակրելի ու մեծ կողմեր ունեցող
անձնաւորութիւն մը :

Արփիարեան մեր նոր գրականութեան ամե-

նէն կարեւոր , տաղանդաւոր ու բազմարդիւն գոր-
ծիչներէն մէկն էր . իր քրոնիկները զուխ-գոր-
ծոցներ էին՝ սրամտութեամբ ու խանդաղատան-
քով լեցուն , պատմուածքի աննման հրապոյրով .
իր երգիծական գրուածքները մեր հեգնական
գրականութեան մէջ առաջնակարգ սեղ մը կը
բռնեն . իր վէպերն Կարմիր ժամուոցը ու Ռսկի
Ապրնջակը պիտի մնան՝ որքան հայերէն լեզուն
ապրի . իբր հրապարակագիր եւ իբր ազգային
գործիչ՝ իր գործունէութիւնը շատ քննադատելի
մասեր ունի , բայց նորէն՝ պատկասելի է թափ-
ուած ճիգի ընդարձակութեամբ , շահական է ,
կենդանի , եւ ունի իր բազմաթիւ գրական կող-
մերը . անկարելի է մտնալ որ առանց Արփիարե-
անի պիտի չհիմնուէր Հայրենիքը , եւ Հայրե-
նիքը թրքահայոց հանրային ու մատուր կեանքին
մէջ՝ ամենակարեւոր կրեւոյթ մըն էր : Այս բո-
լորը ներելի չէ « մատնիչ » բառին մէջ ամփո-
փել՝ նոյն իսկ եթէ բոլորէ մը իրօք այդ անխու-
մին հասած ըլլար Արփիարեան : Այն երեք թե-
րօրիսթները որ փորձեցին ջնջել այդ մարդը եւ
որոնց վերջինը զժբազգարար ի կատար հանեց
այդ սեւ որոշումը , պէտք էր խորհէին որ իրենց
գնտակը կ'երթար չքացնել ոչ թէ այսինչ վայր-
կեանի մարդը , այլ երեսուն տարուան գործունէ-
ութիւն ունեւ յած եւ իր տաղանդով հայ գրակա-
նութիւնը ճիւղացող ցած անձնաւորութիւն մը :

Փարիզ գումարուած թրքո-դաշնակցական
Քոնկրէն այնքան ցաւ պատճառեց ինծի , բսի
վերեւ՝ որքան Արփիարեանի սպանութիւնը :
Այս բազդատութիւնը ֆանթեզիսթ բան մը թող
չկարծուի : Արփիարեանի սպանութեամբ , ան-
հատ մըն է՝ մեծ նշանակութիւն ունեցող բայց
անհատ մը որ անհետացաւ : Փարիզի վերջին
Քոնկրէին մէջ սպանուեցաւ , կամ գէթ սպան-
ման ճամբուն մէջ շրուեցաւ բան մը որ գեր ի
վեր է ո եւ է Հայ անհատէ . այն է հայկական
Դատը :

« Օսմանեան պետութեան ընդդիմադիր
տարբերու Կոնկրէս »-ը ժէօն-թիւրքերու համար
ընդհանրապէս եւ Ահմէտ Ռիզային համար մաս-
նաւորապէս՝ յաղթանակ մըն է , եւ Դրօշակեան
կուսակցութեան ապազգայնական խաթարման
վերջին գրուալը : Թրքահայ հասարակութեան
քաղաքական ազատագրութիւնը ձեռք ձգելու
միակ նպատակով հիմնուած այդ կուսակցու-
թիւնը այս Կոնկրէսին մէջ ինքզինքն ի հանդէս
բերաւ իբր Օսմանեան պետութիւնը վերականգ-
նելու , թուրք ժողովուրդին հայ արիւնով ա-
զարտուած վարկը բարձրացնելու եւ բայտ ազ-
գութեանց պատմական ինքնուրունութիւննե-
րուն Օսմանեան խորհրդարանի մը բուրային
մէջ հայեցնելու նպատակով մարմին մը :

Այս անակնկալ եւ տարօրինակ եղելու-
թեան մասին շատ բան կայ ըսելու , եւ շատ
բան ըսուեցաւ ալ արդէն արտասահմանի հայ
մամուլին մէջ : Մասնաւորապէս ուշագրաւ էին
Պ. Սպահ-Գիւլեանի հոյակապ ուսումնասիրու-

Թիւնը Հնչակին մէջ, եւ Խառնակի մէջ հրատարակուած շատ ողջամիտ յօդուածներու շարքը: Ես կ'ուզեմ այստեղ ուրուագծել այն մէկ քանի էական խորհրդածութիւնները զոր ան ինծի ներշնչեց:

Երբ լուրը տարածուեցաւ թէ Դրօշակեանք նախաձեռնութիւնն ստանձնած են Օսմանեան Պետութեան բոլոր մաքառող տարրերու Համաժողով մը գումարելու, երեւակայեցի որ թուրք լուծին տակ կըքած ըայա ազգութեան մը ներկայացուցիչ այդ կուսակցութիւնը պիտի ձգտէր համախմբել արաբ, ալպանացի, մակեդոնացի տարրերու ներկայացուցիչներ՝ ինչպէս եւ ժէժօն թիւրքերը, եւ խոստանալ Թուրքիոյ վերանորոգման ու սահմանադրական ըեփիմի մը հաստատման համար ոչ-թուրք տարրերուն գործօն աջակցութիւնը՝ պայմանով որ ժէժօն-թիւրքերն ալ ընդունէին ըայա ազգութեանց վարչական ինքնավարութեան սկզբունքը: Գոնկրէն, այդ ուղղութեամբ կազմակերպուած, կրնար որոշակով նշանակութիւն եւ օգուտ ունենալ: Արդ, Համաժողովը որ տեղի ունեցաւ, հակոտնեան եղաւ երեւակայածիս: Արաբները, Ալպանացիք եւ Մակեդոնացիք մերժած են մասնակցիլ, միմիայն հայ-Դրօշակեաններն են որ խորհրդակցած են ժէժօն-թիւրքերուն հետ ու համաձայնած են Ահմէտ Րիզայի գուտ թրքական ծրագրին վրայ: Գոնկրէն եզրակացութիւններն ամփոփող պաշտօնական յայտարարութիւնը կը ներկայայնէ միմիայն հետեւեայ «պահանջները».

1. Գահրնկեցութիւն Սուլթան Համիտի: 2. Արմատական փոփոխութիւն ներկայ ըեփիմի: 3. Հաստատուած սահմանադրական ըեփիմի: Ոչ մէկ խօսք միջազգային դաշնագրերու եւ պայմանագրութեանց գործադրութեան մասին: Այս էր ինչ որ ցարդ կ'ուզէր Ահմէտ Րիզա: Եոյն բանն է որ կ'ուզէր այժմ Դրօշակեանները: Զիչդ է որ Ահմէտ Րիզա այժմ կը հաւանի՝ իր նպատակին հասնելու համար՝ յեղափոխական «միջոցներու» գործածութեանը, որմէ ցարդ կը խորչէր: Բայց այդ հասկանալի է. երբ Հայոց ամենէն զօրեղ կուսակցութիւնը իր բոլոր ուժերը ժէժօն-թիւրք ծրագրին իրականացման ի նպաստ կը դնէ, բնական է որ Րիզա, յաջողութեան հաւանականութիւնները բազմապատկուած տեսնելով, հաւանի (բայց այն ալ՝ մեծ զգուշաւորութեամբ եւ վերապահումներով, ինչպէս կը տեսնենք Մեղիեփի Գոնկրէնի ի վեր հրատարակած յօդուածներէն) բուն միջոցներու կիրարկման:

1902ի ազատական Օսմանցիներու Համաժողովին, Դրօշակեանց գլխաւոր պատգամաւորը՝ Պ. Սիսեան՝ յայտարարեց թէ « Կայ մէկը ժէժօն-թիւրքերուն մէջ որուն հետ Հայերը կրնան չպիտի համաձայնին, եւ այն Ահմէտ Րիզան է: » Ինչ պատահեցաւ անկից ի վեր, որ այսօր Դրօշակեանները կը բռնեն ընթացք մը տրամագծօրէն հակառակ Պ. Սիսեանի յայտարարութեան:

1902ի Գոնկրէնի, նկատելով Հնչակեան եւ Դրօշակեան պատգամաւորներու համերաշխօրէն ազգասիրական որոշ ու կորովի ընթացքը, Ահ-

մէտ Րիզա, զեղեցիկ անկեղծութեան աղաղակի մը մէջ, ըսաւ. « Եթէ Հայ ըլլայի, թերեւս ես ալ այս պարոններուն պէս պիտի վարուէի, բայց ես Թուրք եմ, եւն: » Ահմէտ Րիզան տրամաբանական էր, եւ է միշտ: Դրօշակեաններն են որ տրամաբանական չեն:

Եթէ կայ մէկը որ փոխուած է 1902էն ի վեր, Րիզան չէ, Դրօշակեանութիւնն է: 1902ին՝ այդ կուսակցութիւնը, հաւատարիմ այն զգացմանց եւ սկզբունքներուն որոնց վրայ հիմնուած է, ազգայնական ձգտումներով էր առջնորդուած. այժմ, ընկերվարական միջավայրին ձգտումներն են որ կը վարեն այդ կուսակցութիւնը: « Ազգ », « ազգասիրութիւն » հնոտի ըմբռնումներ են հիմայ Դրօշակեան վարչիներուն համար. ազգային ուրոյն կեանք, ինքնավարութիւն, աւելորդ բաներ. Հայ, Թուրք, Քիւրտ, բոլորն ալ « մարդ » են. պէտք է պայքարիլ ամբողջ երկրի մը համար, ոչ թէ մէկ ցեղի. ու պէտք է ներկայ ըեփիմը տապալել եւ ազատութեան պայմաններ ստեղծել, Թուրքիոյ մէջ գտնուող ամէն ցեղէ բանւոր դասակարգին, « փրոկիթարիա » ին դատը յաղթանակել տայու համար. ահա ինչ որ եղած է ձգտումը որ Դրօշակեանները ղեկավարած է ներկայ Գոնկրէնի մէջ: Եւ այդ ձգտումը այնքան յառաջ գտցած է որ շիւնաւորներն մէջ, « Ակունի » թոյլ տուած է Պ. Լոնկէին, այն « Էնթերվիւ » ին մէջ զոր այս վերջինը հրատարակած էր, զետեղել Տարօնոյ Աերոբին եւ իր զաւկներուն յուսանկարը՝ իր Թուրքիայ յեղափոխականներու խրատապատկեր մը. . . որն էր Թուրքը ատոնց մէջ, Տէ՛ր Աստուած. երեքն ալ նահատակուեցան Թուրքին դէմ կոտելով. . . այս սրբապղծութիւնը կատարուած էր « ընկերվարականութեան » խաթերը համար:

Միմիայն « ընկերվարականութեան » վիզը չփաթթենք սակայն ամբողջ մեղքը: Դրօշակեանց այս արարքը կը մեկնուի նաեւ ուրիշ սարբով մը, այն է « յուսահատութիւն » գուտ հայ ուժերով կամ եւրոպական միջամտութեամբ հայկական հարցին լուծումէն: Արդ, կրնանք այդպիսի յուսահատութիւն մը այնքան քիչ արդարանայի չէր որքան ներկայ ըուզէին կրթման յազգային քաղաքական կացութիւնը աւելի քան ո եւ է ատեն նպաստաւոր է Արեւելքի ըայա ազգութեանց դատին: Անգլիա՝ իր թրքասիրութեանէն բուժուած եւ իր հին հակառակորդին՝ Ռուսին հետ համերաշխ: Մակեդոնիոյ հարցը արդէն վերջնական լուծման ճամբուն մէջ մտած, ու անսո-թուրք պատերազմի մը հաւանականութիւնը՝ հորիզոնին վրայ:

Զիչդ է որ կացութիւնը՝ գուտ հայ ուժերու ներկայացուցած պատկերն ի նկատի ունենալով՝ իսկապէս յուսահատեցուցիչ է: Երկրին մէջ, թրքահայ ժողովուրդին ստուար մեծամասնութիւնը, տառապանքէն ապուշցած, ամէն բան զրսէն սպասող, անկարող իր իսկ նախաձեռնութեամբ իր ծոցէն ուժեղ ճիգ մը ժայթքեցնելու. արտասահմանի Հայութեան ոչ յե-

ղափոխական ստուար զանգուածը՝ անսարքեր դէպ ի ազգային դասը, բարեգործական ազգասիրութիւնէն անդին անցնել չուզող . Հնչակեանութիւնը բաժնուած երկը մասի, երեքն ալ տկար, եւ անկարող՝ միայնակ՝ այն խոշոր ճիգն ընելու որ պէտք է մեր դատին լուծման համար . կը մնար Դրօշակեան կուսակցութիւնը, միակ իսկապէս զօրեղ յեղափոխական տարրը, բայց ահա սն ալ ժէժօն-թիրքերուն հետ կը ձուլուի . . .

Այս տխուր կացութիւնը կրնար բոլորովին բարեփոխուիլ եթէ Դաշնակցութիւնը, փոխանակ ժէժօն-թիրքերուն հետ համաձայնելու, հայ յեղափոխական բոլոր տարրերուն միացման գործին աջակցած եւ ուժեղ ու անկեղծ թափով մը զայն բացարձակ յաջողման հասցնելու նպատակով ըլլար Դաշնակցութիւնը ճիշդ հակառակն ըրաւ . այն եռանդն ու խանդավառութիւնը զոր ցոյց տուաւ Թուրքերուն հետ համաձայնելու, այդ նոյն եռանդն ու խանդավառութիւնը պարզեց տարիներէ ի վեր հայ յեղափոխական կուսակցութեանց միացումի ծրագիրը վիժեցնելու . եթէ Դաշնակցութիւնը կարող ըլլար ինքնին՝ առանց հայ յեղափոխական միւս տարրերուն իմաստուն եւ կորովի թարթիքով մը՝ հայկական գաղտը հասցնել իր լուծմանը, ըսելիք պիտի չունենայի . բայց Թուրքին ու Քիւրտին դէմ տարիներէ ի վեր կարգ մը անխոհեմ անժամանակ հատուածական արշաւանքներէ ու ցոյցերէ յետոյ՝ որոնք Հայաստանի մէջ հայ տարրը տկարացնելու միակ արդիւնքը կրնային տալ, յանկարծ ելլել Թուրք պետութեան վերանորոգութեան գործին լծուիլ, աւ չէ որ « հայկական գաղտ » լուծելու պիտի նպաստէր :

Դրօշակեան թերթերը՝ Բոնկրէէն ի վեր՝ պատասխանելու համար այդ սոսթիւ Դրօշակեանց դէմ ուղղուած քննադատութեանց՝ կ'ըսեն թէ համաձայնելով հանդերձ ժէժօն-թիրքերուն հետ՝ Դաշնակցութիւնը կրէք չէ լքած իր ուրոյն ազգային ծրագիրը, ձեռք չէ քաշած ո՛չ Պերլինի գաշնագրին Յլրդ յօդուածէն ո՛չ 1895ի մեմորանդումէն, եւ թէ միմիայն Սուլթանին գահընկեցութիւնն ու սահմանադրական թեժիմի մը հաստատումն իրականացնելու համար համաձայնած է ժէժօն-թիրքերուն հետ եւ այդ արդիւնքը ստացուելէ՝ յետոյ՝ Դաշնակցութիւնը միշտ պիտի շարունակէ իր զուտ հայկական (ու սօսիալիսթական) ծրագրին իրագործման հետապնդիլ :

Այս արամաբանութիւնը խախուտ հիմերու վրայ կը հանգչի . եթէ ժէժօն-թիրքերը իրենք իսկ արդէն յեղափոխական հոյակապ գործունէութիւն մը ցոյց տուած, Տաճկաստանը արմատապէս ու իրապէս վերանորոգելու ձգտող ուժեղ շարժման մը նախաձեռնութիւնն ունեցած եւ Տաճկաստանի ոչ-Թուրք ազգութեանց ինքնուրոյն կազմակերպութեան սկզբունքը ընդունած մարմին մը ըլլային, հասկանալի պիտի ըլլար որ հայ յեղափոխական կուսակցութիւնները կրթային աջակցիլ այդ մարմինն, բայց այդպէս չէ . ժէժօն-թիրքերուն ստուար մեծա-

մասնութիւնը՝ ինքզինքը զուրկ ցոյց տուած է անձնական նախաձեռնութեան ուղիէն, ու Տաճկաստանի բոլոր այլատարր ազգութիւնները թրքացնելու միաձոյլ « օսմանեան » ազգ մը կազմելու ակնյայտնի բաղձանքն ունի . Այն օրը որ՝ Դաշնակցութեան « հայ » ուժերուն աջակցութեան շնորհիւ՝ թրքական արդի թեժիմը ստապալի եւ սահմանադրութիւն մը հաստատուի, ժէժօն-թիրքերը ոչ մէկ ազգի գոյութիւն պիտի ընդունին . Տաճկաստանի մէջ բաց ի Օսմանեան ազգէն, ու նոյն իսկ հայ արեւնով հաստատուած այդ սահմանադրութիւնը պիտի իր գէնք գործածեն « հայկական գաղտ » վերջնապէս ըսպաննելու համար . Խորհրդարանին մէջ՝ հայ պատգամաւորներու բողոքը կամ պայքարը՝ ոչ մէկ արդիւնք կրնայ տալ . Այն ստան պէտք պիտի ըլլայ հայկական պայքարը աբգէն վերըսկսիլ, եւ այս անգամ մաքառիլ՝ ոչ թէ Համիա անուն տիեզերապէս դարչանք ազդող բրնաւորի մը դէմ, այլ ազատականութեան երեւոյթ ունեցող խորհրդարանական կառավարութեան մը դէմ, — ինչ որ Եւրոպայի մէջ աջակցութիւն գտնելը տանապահիկ աւելի դժուար պիտի կացուցանէ . Ահա՛ հեռապատկերը որ կը ներկայանայ, այն պարագային որ հայ-թուրք նիզակակցութիւնը յոջողի օսմանեան սահմանադրական թեժիմ մը հաստատուի . Սպասելով ատոր, հայկական գաղտ այժմէն իսկ կարող է կորսնցնել՝ եթէ Քոնկրէին տարածել ուղած կարգ մը գաղափարները իրօք տարածուին, այն բարոյական արդիւնքը զոր նահատակներու շեղջակոյտներ կազմած էին . ցարք՝ գէթ սա սիրտինքն ունէինք թէ ամբողջ քաղաքակիրթ աշխարհը կ'ընդունէր որ « Հայ » կը նշանակէ մողովուրդ մը ազատութեան, քաղաքակիրթութեան ձգտող եւ այդ ձգտումին համար խորտակուած ու բզբտուած, ու Թուրք կը նշանակէ զինուորական ուժով իրմէ քաղաքակիրթ թապէս բարձր ժողովուրդներու տէր դարձած բիրտ տարր մը որ ջարդելէ, քանդելէ, ամալացնելէ ուրիշ բան չէ ըրած պատմութեան մէջ . ստիկա ոչ միայն սիրտինքն մըն էր, այլ առհաւաւապէս մը մեր դատին օր մը չէ որ մը դրական յաջողման . այդ հիմունքին վրայ է որ մեզ բողոքակից ուրիշ ազգութեանց գաղտ կարողացած է յանգիլ յաջողման : Արդ, այս Բոնկրէն, Հայ եւ Թուրք միահամուռ յայտարարութեամբ, կը հուշակէ թէ Թուրքն ու Հայը հուսաստրապէս կը տառապին, հաւասարապէս կը ձգտին ու կը մաքառին՝ ընդհանուր արդարութեան եւ ազատութեան թեժիմ մը հաստատելու Տաճկաստանի մէջ : Ինչ կը մնայ մեզի : Ոչինչ . Թուրքը ուրեմն քանդողը, ջարդողը չէ այլ եւս, ինչպէս ըսին մենէ առաջ՝ Յոյները, Սերպերը, Պուլկարները, Մարոնիթները, Կրետացիները (եւ այդ ըսելով՝ եւ ատոր համար պայքարելով՝ ազոտագրութեան), այլ մեզի պէս ազատախոհ ու մարտիրոս տարր մը, միակ անձի մը՝ Համիտ անուն բանաւորի մը՝ զո՛հ, եւ մեզի շարի արժանի տիեզերական համակրութեանն եթէ այդ-

պէս է իրօք՝ պիտի ըսէ քաղաքակիրթ աշխարհին կարծիքը, ալ ինչ պէտք Մակեդոնացւոց կամ Հայոց կամ Ալպանացւոց համար առանձին միջամտութիւն ընելու. օգնենք ազնիւ Թուրքերուն որ թէ՛ իրենց եւ թէ՛ իրենց դաշնակից ուրիշ հպատակ ազգութեանց երջանկութիւնը կարենան յօրինել՝ ապագայ ազատ Օսմանեան Պետութեան մէջ . . . :

Ահա ինչ որ պիտի ըլլար այս Բոնկրէին արդիւնքը, եթէ Եւրոպայի քաղաքական վարիչները բոլորն ալ Գաշնակցութեան վարիչներուն այդ սխալը կրնէին, Բայց ատիկա՝ բարերազգաբար՝ կարելի չէ: Պատմութիւնը իր վճիռը առած է, եւ շատոնց: Այդ վճիռը կը գործադրուի շատ դանդաղօրէն, բայց գործադրուած է ցարդ կուռ ու անողոր տրամաբանութեան մը հետեւելով, ու պիտի գործադրուի մինչեւ վերջը: Թուրքը եղած է մեծ աշխարհակալ ցեղ, բայց ոչ քաղաքակիրթիչ տարր, եւ պիտի չպահպանէ իր փրկագրութիւնը: Մաս մաս՝ իր բռնի ուժով գերած ազգեր ճողպրեցան իր լուծէն, եւ այսօր ազատ կ'ապրին, կամ ուրիշ Թուրքէն աւելի քաղաքակիրթ՝ ազգերու հովանոցն տակ կ'ապրին ու կը զարգանան: Այդ երեսօթը կանգ չի կրնար առնել, եւ պէտք չէ կանգ առնէ: Եւ արդէն՝ տեսէք, հակառակ Բոնկրէին բոլոր յայտարարութիւններուն ու խոստումներուն, Անգլիա եւ Ռուսիա, փոխանակ սպասելու որ վաղուան սահմանադրական Թուրքիան կարգադրէ Մակեդոնիոյ հարցը, իրենք իսկ զայն լուծելու կ'աշխատին այս րոպէին, եւ կ'աշխատին լուծել զայն՝ Թուրքին ձեռքէն այդ երկիրը կամաց կամաց հանելու ձգտող միջոցներով:

Մեզի համար, ինչ որ ձակատագիրը որոշած է, Հայաստանին օր մը չէ օր մը անցնիլն է ուսակական հովանաւորութեան տակ, կամ թրքո-ուսու պատերազմի մը հետեւանքով, եւ կամ Ռուսիոյ նախաձեռնութեամբ հաստատուած բարենորոգմանց րեժիմի մը փոխանցական շըրջանէն յետոյ. բոլոր Բոնկրէաները այդ անխուսափելի իրողութեան կատարումը պիտի չարգիւնեն: Մեր կորովը եւ զոհողութիւնները պէտք էր կեդրոնանային այնպիսի գործունէութեան մը մէջ, որ փոխանակ տկարացնելու Հայութիւնը մեր հայրենիքին այն մասերուն մէջ որոնց ապագայ բաղդը պատմութիւնը գրեթէ մաթեմատիքական ճշգրտութեամբ նախաւճռած է, տային մեզի կարելիութիւնը՝ մեծ իրարանցումի մը պարագային (օրինակ՝ ուսուց-թուրք պատերազմ մը) վերանորոգել զուտ ազգային ու խորհուրդ գործը Թուրքիին:

Այս եղած է՝ տարիներէ ի վեր՝ իմ իտէալս, եւ անոր իրագործման համար թափած եմ բոլոր ճիգերը զոր իմ ուժերս ինծի հնարաւոր կը դարձնէին: Ծիգերս, կը խոստովանիմ, չյանգեցան ուժեղ ու լիակատար արդիւնքին զոր կ'երազէի: Այդ իտէալին իրագործման համար անհրաժեշտ կը նկատէի երկու բան, նախ՝ որ մեր յեղափոխական կուսակցութիւնները միանային ու միա-

համուռ ու միաձոյլ ուժերով այդ իտէալին իրականացման նուիրէին ինքզինքնին, երկրորդ, որ մեր ժողովուրդին ունեւոր դասակարգը լրջօրէն ու սրտանց հետաքրքրուէր այդ իտէալով եւ անոր ինքնաբերաբար շնորհէր նիւթական մեծ աջակցութիւնը առանց որուն անոր իրականացումն անկարելի է: Ոչ մին եղաւ, ոչ միսը: Մեր ժողովուրդին ունեւոր դասակարգին մէջ կան մարդասէր, բարեգործ, գրասէր, առատաձեռն, ազնիւ անձնաւորութիւններ, բայց « ազգային դատ » Իսրայէլ Օրի « վաճառական »-ին պէս բմբունդներ չա՛տ քիչ յայտնուեցան ու Յոյն ազգասէր վաճառականներու նման անոր օգնել գիտցողներ՝ ընա՛ւ:

Փալով յեղափոխական կուսակցութեանց միութեան հարցին, զայն ալ եւս վիժած կարելի է նկատել, յորմէ հետէ Գաշնակցութիւնը ոչ միայն մերժեց Մուրատի առաջարկը, այլ եւ ժէժօն-Թիւրքերուն հետ համաձայնելով՝ իրամատը վերջնապէս լայնցուց, Հնչակեան կուսակցութիւնը, իրեք մասի բաժնուած, անգոր ու պառակտուած մարմին մըն է, անկարող այդ հսկայ գործը միայնակ իր ուսերուն վրայ տանելու: Հին Հնչակեաններն ու Վերակազմեալներու մէկ մասը որ համերաշխութեան դաշինք կնքեցին, հետո եւն ունենալէ այն նիւթական ուժը որ անհրաժեշտ է իրագործելու համար այդ իտէալը ու ոչինչ յուսալ կուտայ որ վաղը վայն պիտի ունենան: Իսկ Վերակազմեալ Հնչակեանց այն մասը որ այդ իտէալին իրագործման համար ամենէն աւելի եռանդով ու դիտակցութեամբ տարիներէ ի վեր աշխատած, բարոյական ու նիւթական տարրեր հաւաքած է, այս պահուս՝ քառասային կացութեան մը մատնուած կ'երեւայ ինծի, եւ՝ ամէն կողմէ՝ մասամբ ողբալի թիւրիմացութեանց ու մասամբ՝ գիտակից հակա-յեղափոխական թշնամութեան բերմամբ՝ զինքը պաշարող ատելութիւններուն բևռանը տակ ճնշուած՝ անգոր պիտի ըլլայ ի յանգ հանելու այն ծրագիրը, որուն յաջողմանը համար ոչ թէ ափ մը Հայերու, այլ ամբողջ Հայութեան միաձոյլ կորույն ու կամբք անհրաժեշտ է:

Այս պայմաններուն մէջ, ես ինձ համար այլ եւս աւելորդ կը համարիմ գրել այս հարցին վրայ: Գրելու համար գրել չեմ սիրեր: Մինչեւ հիմայ հրատարակած յօդուածներուս մէջ՝ կրնամ շատ անգամ սխալած ըլլալ. բայց չկայ տող մը, բառ մը, զոր գրած ըլլամ՝ առանց ոչ միայն յայտնած գաղափարներուս խոր համոզմունքովը տող գորուած ըլլալու այլ եւ այն համոզմունքովը թէ գաղափարներուս արտայայտումը անոնց ընդ-գրկուելուն իրապէս կարող էր նպաստել: Այս երկրորդ համազումը չունիմ այլ եւս: Ուժը տարի է որ կը պայքարիմ յեղափոխական կուսակցութեանց միութեան համար. իրականութիւնը ցոյց կուտայ որ ջուր ծեծած եմ միայն: Դեռ վեց ամիս հազիւ կայ որ Անանիսին մէջ ամենէն մոլեգին, անվերապահ ու յստակ ձեւով կը բողբէի հայասպան ոճիրներուն դէմ, անոնց բացարձակ վերջ դրուիլը կը պահանջէի. ատոր

պատասխան՝ իրականութիւնը դիմացս նետեց երկու պիակ, Վարդօինը եւ Արփիարեանինը... Այլ ինչո՞ւ գրել, որո՞ւ համար գրել... Ես ըսած եմ ամէն ինչ ու ունէի ըսելու այս մեծ հարցին վրայ: Միեւնոյն բաները ապարդիւնօրէն կրկնել, իմ խառնուածքիս պատշաճ բան չէ: Իմ պարտքս կատարած ըլլալ կը կարծեմ: Ապագան պիտի դատէ ու վճռէ:

Ինչ որ կը նախատեսեմ այժմ, այն է որ մեր դատը պիտի լուծուի՝ ոչ թէ զուտ ազգային զգացման վրայ հիմնուած հայկական կորովի եւ համազգային ճիշդ մը, այլ արտաքին ուժերու ճակատագրական շարժման բնական հետեւանքով: Եւրոպական քաղաքակրթութեան յաղթական յառաջխաղացութիւնը Արեւելքի մէջ, Արիական բարձր ոգիին տիրապետումը թուրանեան ու սեմական ուժերուն վրայ, պիտի շարունակուի եւ հասնի իր գերագոյն լրութեան: Ինչ որ իրականացաւ՝ հատուածաբար՝ Ռուսանիոյ, Պուլկարիոյ, Սերպիոյ, Յունաստանի, Կրետէի, Եգիպտոսի, Արեւելեան Հայաստանի մէջ, եւ որ այժմ կ'ուրուագծուի Մակեդոնիոյ մէջ, պիտի տարածուի՝ հեազհետէ՝ աւելի հեռուն, պիտի թափանցէ ու վերակենդանացնէ

ամբողջ Արեւելքը: Հայ արիւնի հեղեղային հոսուածք վեհանձնօրէն օգնած պիտի ըլլայ ատոր, — եւ ասիկա նորէն հպարտութեան ու սփոփանքի տարր մըն է իմ ազգասէրի սրտիս համար: Ու երբ այդ պատմական երեւոյթը իր ամբողջական պարոյթը զծած աւարտած ըլլայ, Արեւելքի փլատակներուն, մոխիրներուն, արիւններուն մէջէն՝ մուր կտոր կտոր եղած ցեղը, եթէ՛ իր իսկ յանցանքով՝ յաջողած չըլլայ որոշ կէտի մը վրայ ամուր ապանով եւ իրեն միայն պատկանող Տուն մը կառուցանել, նորէն՝ իր ցանուցիւր, բզբտուած ու արիւնքամ գոյութիւնը՝ եւրոպական սկզբունքներուն յաղթանակին բերած ազատութեան շունչովը վերանորոգուած ու կազդուրուած, պիտի յասնէ իր հոգեվարքին մէջէն, պիտի վերաբողբօջի՝ նոր Արեւելին լոյսէն ու ջերմութենէն ելեքորացած, ու պիտի վերսկսի՝ լայն ու սնկաշիւղի պայմաններու մէջ՝ իր ազնիւ ցեղի պերճ ու ճոխ զարգացումին հետ՝ կատարել իր յախտեանական դերը Արեւմուտքի քաղաքակրթութիւնն Արեւելքի մէջ տարածողի ու բեղմնաւորողի:

Ա. 209ԱՆԵԱՆ



Ի Տ Է Ա Լ Ը

Յոգնավատակ Դաստիարակիս
Հ. ՅՈՎՀ. Ե. Վ. ԹՈՐՈՍԵԱՆԵՆ

Ա.

Մոգի մը պէս ես աստուծոն հարցուցի՝
— Ի՞նչպէս, ի՞նչպէս կրեմ հասնիլ ես անոր:
Արիւնեւ վերջ հուր սիւսս իրեն պիտի սամ,
Եւ պիտ' ուզեմ որ հոգիիս իբր երկինք
Անոր բիբերը սրուիմ:
Ըսէ՛ք ինձի, ո՞վ աստուծ, ի՞նչ էր, ո՞վ էր որ Աստուծի մը աչքէն՝
Քոցեղ աչքիս մէջ կաթեց:
Ո՞ն, կայծ մը, կա՛յծ մ'ինձ բոցեցե՛ք ձեր լոյսէն
Որ խաւարները վառեմ
Անոր հետքին վազելու:
Դուք գիրեր ե՛ք անծանօթ
Գրեւե՛րեւուն վրայ գրուած,
Ձեր տառն տառ մ'ինձ սրե՛ք
Որ իր անունը կարդամ:
Աստուծն ըսին դողահար՝

« Ի՛տե՛ս . . .
Ա՛յս է անունը անոր
Երկրնից մէջ ու երկրի .
Կ'ուզե՛ս որ զայն հեզի սանձ .
Թը՛րի՛ր . . . »
Եւ մութին մէջ հեկեկացի միայնակ .
Թե՛ւե՛ր, աւա՛ղ, չունէի:
Ուրուականի մը պէս՝ յերան հարցուցի՝
— Տեսա՛ր արդեօք, ո՞վ վրիճակ,
Անցնիլն անոր եւ վերեւեղ՝ այգին հետ,
Եւ առուակէն երբ կ'ըմպէր
Տեսա՛ր իր դեմքը փայփուն
Դեպի օրբունեղ հակած:
Ըսէ՛ սարիդ արժիւթի,
Իր բոյնին ե՛ս՞վ է անոր բոյնը աստե՛:
Լեռն ինձի ա՛յսպէս ըսա՛ւ
« Արեւոյտէն ան իմ գրկիս մէջ ծընաւ,
Օրորոցն եմ ես անոր .
Կ'ուզե՛ս որ զայն հեզի սամ,
Այրած նախիս հովն եղիր: »
Եւ շունչ մ'հագիւ ունենալու՝ ես լրո՛կ
Ապառաժէն գեպ ի անդունդը իջայ:
Դիւահարի մը պէս ծովուն հարցուցի՝
— Լուր ամբուրդ վրայ երբեք տեսա՛ր զայն
Հողմավարի՛կ . մենաւա՛ր,
Որ սիրողի մը կարօտն բոցավառ՝
Մեռնող ալիբրդ սեղմեց:
Ըսէ՛, ծովակ, չուզեցի՛ր սա՛մ սի.ս մ'ըլլալ

Եւ հեւեղ համբար մը ընել :
 Մովր ուժգին մը ընկնից
 « Լրուէ՛ ,
 Ջուրես հիմա հեղի արցունք կը շինեմ ,
 Դու յաւերժուարս կ'աւրես
 Չրհնայագեղ , յուսաներ ,
 Որ Անուանի մը իսկ , գիտցի՛ր , պիտ' չը սաւ :
 Ան իմ յարեա ե մը արգիւն ,
 Կ'ուզե՛ս որ գայն հեղի սաւ ,
 Լուսինն եղիբ գոյացի՛ր : »
 Իսկ ես գիտեմ մ'ըլլալուս՝
 Ի՛րեւրին մեզ մաւեցայ . . . :

Բ.

Իրժնիկներու մտնոմ ծաշավը կը ընեմ
 Մեկիկ , մեկիկ , ա՛ն , բնցի
 Երաշխակներ կուրծիս ,
 Անոնց հրավառ արիւնով
 Հանանց մը յոյս , փերք մը ծաղիկ շինելու :
 Մեծումներու անգութ շունչին սակ յամբամ՝
 Ուզեցի սրբս երկու հարի մեզ նրբեղ .
 Եւ աւագին որ « ծարաւ եմ » կը գոչեմ ,
 Ըսի՛ մոգեղ յարեղի մը սուր գեթ ինձի ,
 Ի՛նչ անծարա լին մ'ընեմ :
 Եւ երկրնի մը տեղեկ
 Երբ շունչս հողին պիտ' յանձնե՛ի անեծեմ
 Ձեռք մը տեսայ ձրհնափայլ
 — Շուտան մ'օղին մեզ փրկողն —
 Եւս լրենումն մեզեմ փոսի՛ս երկարուող .
 Եւ ձայն մըն ալ ինձ կ'ըսե՛ր
 « Ի՛նչ , այստան շուտ մեռնի՛ր կ'ուզես , պա՛րուանի .
 Ե՛տե՛ս պատանիդ դրժխեմ .
 Վե՛ր , վե՛ր . . .
 Այդը ահա կը բացուի ,
 Իսնցիւններն ալ հեռաւոր՝
 Բոլորին սակը նրբոյ
 Հայ գրւակներ կ'օրհնեն :
 Ինչո՛ւ , ինչո՛ւ մեռնի՛ր կ'ուզես սարսում ,
 Եւսիններն իսկ յոյսերու սակ պիտ' ժրպսն
 Եւ առեմ մեկ մեռածներուն՝ այս առտու
 Զոյ եւ ծաղիկ պիտի սաւ
 Որ իսունկ Ասուած մը բուրեն :
 Վե՛ր , վե՛ր ,
 Անուան մ'ըզեղ պիտ' ընեմ :
 Հակիցի դալուկը սրբե՛ր ,
 Եւ յոնեւուց սակ գիտեւուց սեւերն ալ
 Արփիներու իբր հորիզոն յարգարե՛ր :
 Դուն այսօր իսկ՝ առիժներու գուկերեն
 Պիտի ծրծես յոյսերուց կարը գօրեղ :
 Եկո՛ւր ,
 Մենք արեւոս ճամբաներէն թե ի թե
 Երպասակին պիտ' թրոչինք :
 Եկո՛ւր ,
 Իեղազատից վրայ վրսեր
 Արուայիկի մը նրման՝
 Անապատեն անդին պիտի եղ սանիմ
 Ձով ջրերուն , շուրտուն . . . :
 Ելի՛ր դուրս՝

Դուժ ձեռներէ կանգրւած
 Հայրենական միւռնուարսը սրնակն ,
 Հո՛ն դալուց հայր մ'ա՛լ յառե՛ս պիտ' չալօթ :
 Փայսը ալ եւս հըռընդիւնեն , դի՛սկեն ,
 Եւ հառաչեղ ալ սրբաւեր
 — Ոսկորներու դաժան երգ —
 Ե՛տե՛ս սրաքեւ հովերուն :
 Ինչո՛ւն մ'ի՛նձի կոհակին մօտ կ'ըսե՛ր
 « Ոսկորուդ սակ մոխիր կ'աւ շանք պիտ' ըլլաւ . »
 Տե՛ս ,
 Շանքն ըրի եղ ակնարկիս :
 Ոսկեթրովը ճաղիդ՝
 Մօրդ պիտու՛ր տուցն որ մը պիտ' ըսիտիս .
 Եւ անոր գոս կուրծիկն վրայ
 — Պարսպ դագաղ մը նրսեմ —
 Ուրի՛ք կեանիդ ալ յարմեցի՛ր՝
 Ինչո՛ւ շուտան մը դի՛ր որ ան գոն մեռնի .
 Եկո՛ւր ,
 Արի՛ւն պիտի հագցընեմ եւ քիկունքիդ :
 Համբուրե՛ր օս հողը կուրծի՛ր պատերուդ ,
 Եւ երգեւուց շեփուրով
 Անոնց սգին արքրեցուր :
 Վե՛ժի՛ր վրայ հեռաօրէն հո՛ս ինկիր .
 Այն ասեմ ,
 Երբի՛ր մարմար պիտ' ըլլաւ պատերուդ :
 Մե՛ր գառակ , ըսե՛ր ինչո՛ւ դեղեկոս
 Մասներուս սակ կը դուրս ,
 Իմ քոյր եւսակն է վարդեղ ,
 Եւ մարմարս ալ Ապագան :
 Ձե՛ս , չե՛ս գիտե՛ր ցլուրե՛րդ
 Անուեր վե՛ր , յուսարսով .
 Իսկիտար դեմքդ վեր առ՝
 Ալի՛ք , մըմուտն , սիւ՛ր ա երգ
 Իսնակամայն գեղգեղով
 Ձիս կը կոչեն՝ Իսկա՛լ . . . :

Գ.

Բացի աչերս մը թին ,
 Իրսայ . . .
 Այս եր անուեր անոր :
 Արեւս եր ան անդունդին մեզ փրկըւած ,
 Թըրիչիս թեւն՝ սրուն համար դեգօրեն
 Ասդերը զիս հեզնեցին :
 Հիմա խիզախ , անվեհեր՝
 Պարեխներուն վրայ կեցած .
 Անհունին հե՛ս շունչ շունչի
 Պիտի ըսեմ « Մերկայի՛ր » ,
 Իսկիներուն « ճրկեցե՛ր » ,
 Եւ արծիւին « Եսնարե՛ր » :
 Երբեք պիտի չը վախեմ
 Կայծակն ինձի նե՛ս քա՛մ
 Մովը գե՛տին գա՛ւելու . . . :
 Ձի՛ սնցանքի կրակիժն երգի փոխուեցաւ ,
 Եւ արաւոս վերերս վարդ կը բուրեն .
 Պատա՛ս պատա՛ս միտերն ետերս քոյած
 Մանիւրի եմ փոխուած .
 Փաշարարս արանհե՛ները բոլոր
 Ձալացք գացող համբու մը պես կը ժրպսին :

Հիմա՛, այլ եւս ԲՈՒՐ Ի յոյզով փրփրուն՝
 Գաղափարիս բագինին
 Թերափներուն առջեւ ես
 Ձեռով սպօրփի մը նրման
 Այս բառը լոկ պիտի՛ հրնչեմ՝
 ԻՏԷԱՂ . . .

Ա. ՀԱՐՈՆ

1908 Մարտ

Աւել. Մուրաճ Ռափայէլեան Վրժ



ՓԵԹԵՐԱՊՈՒԿԻ ՀԱՅՈՑ ԱԿՈՒՄԸՆ

Փեթերապուրկէն ստացուած երկու նամակներէ կ'իմանանք թէ Հայերու խումբ մը այնտեղ հաստատեր է հայկական Ակումբ մը, որ նպատակ ունի իրարու մերձեցնել ուսումնասիրող քաղաքին Հայերը, եւ զբաղել այն ամէն բանով որ կապ ունի Հայութեան եւ ազգային դատի հետ: Երեք բանախօսութիւններ կատարուած են ցարդ Ակումբին մէջ. բժ. Աղասարեան խօսած է մէկ քանի հայ գաղութներու հայկական ժամանակակից կեանքին մէջ կատարած դերի մասին, Պ. Ն. Ատոնց՝ Խրիմեան Հայրիկի գործունէութեան մասին, եւ ծանօթ ուս հայագէտ Վեսելովսքի՝ հայ գրականութեան մասին:

Մեծ հաճոյքով կ'արձանագրենք այս նորութիւնը: Կը ցանկանք միայն որ փեթերապուրկի հայկական Ակումբը ընդարձակէր իր գործունէութեան շրջանը եւ նպատակ ունայ եւ հայ աշխարհներուն միջեւ մերձեցում յառաջ բերելու էական գործին: Մեր թղթակիցներէն մին կը գրէ թէ ուս բարձր ընկերութիւնը դեռ շատ գէշ ու հակակրական գաղափար ունի Հայոց մասին, հակակրութիւն որ արդիւնք է իր տգիտութեան: Հայոց գրականութիւնը եւ պատմութիւնը բացարձակապէս անծանօթ են Ռուսաց մեծագոյն մասին: Փեթերապուրկի հայ Ակումբը շատ բան կարող է, եւ պարտաւոր է, ընել՝ այդ տգիտութիւնը փարատելու համար: Ինչո՞ւ չհրաւիրել Պ. Վեսելովսքին որ հայ պատմութեան եւ հին ու նոր գրականութեան մասին բանախօսութեանց շարք մը ընէ, ոչ թէ Հայոց, այլ ուս հասարակութեան առջեւ: Ինչո՞ւ հայ

գրականութեան հատընտիր էջերու թարգմանութիւններ չուղարկել՝ իբր նուէր՝ ուսումնասիրական, քաղաքական, գեղարուեստական բարձր անձնաւորութեանց: Ինչո՞ւ՝ մանաւանդ՝ հրատարակութիւններ, բանախօսութիւններ ու գիմումներ չընել՝ տաճկահայ դատին վերաբերմամբ, ուս աշխարհին բացասելով անոր խկական նշանակութիւնը եւ ուսական միջամտութեան անհրաժեշտութիւնը փաստելով: Բուպէն կը պահանջէ այդ գործունէութիւնը աւելի քան երբէք: Թրքո-ուս պատերազմի մը հաւանականութիւնը օրէ օր կը շեշտուի: Երբ պատերազմը պայթի, ուս եւ հայ « ժողովրդական » խաւերը՝ ընդհարու պիտի գիտնան ընել ինչ որ պէտք է. ուս ժողովուրդը իր արիւնք վեհանձնօրէն պիտի թափէ՝ անգամ մը եւս՝ ստրուկ ազգերու փրկութեան համար. իսկ հայ ժողովուրդը պիտի թափէ իր արիւնք ի նպաստ արեւմուտքի քաղաքակրթութիւնը ներկայացնող Ռուսին՝ ընդդէմ զինքն ստրկացնող Թուրքին (արդէն իսկ՝ թէ՛ Կովկասի եւ թէ՛ Տաճկահայաստանի մէջ՝ հայ « ժողովուրդը » այժմէն որոշապէս եւ արիաքար կը յայտարարէ թէ պատերազմի պարագային Ռուսին հետ պիտի պայքարի): Թիւրիմացութիւնը՝ ուս եւ հայ « զարգացեալ զաստիարակներուն » մէջ է. այդ թիւրիմացութիւնն է որ պէտք է փարատել. Ռուս եւ Հայ իրարու փոխադարձաբար շատ մեծ ծառայութիւններ մատուցած են, իրարու շատ պարտական են, եւ դեռ կոչուած են իրարու աջակցելու: Արեւելքի վերանորոգման գործին մէջ: Փեթերապուրկի Ակումբը կարող է այդ աղետաւոր թիւրիմացութեան բարձմանը նպաստել:



Le Gérant : FRÉDÉRIC MACLER
 Imp. D. DOGHAMADJIAN
 18, Rue des Gobelins, Paris.

ՀՈՅՍ ՏԵՍՍԻ

LES TROUVÉRES ARMÉNIENS

Traduction française

AVEC UNE INTRODUCTION

par

ARCHAG TCHOBANIAN

Գինն է 3 ֆր. 50

Գինն ազգոգնեքը պէտք է զիմեն՝

Librairie du Mercure de France
26, Rue de Condé, Paris

Ա. ԶՕՊԱՆԵԱՆ

ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ

1889—1907

Արշալոյս. — Ժամերուն կարաւանը. — Անձկու-
րիւն. — Տեսիլներ. — Գիշերին մեջ. —
Բյուրին վրայ.

Ցպագր. 8. ՏՕՂՐԱՄԱՃԵԱՆ

Գին 5 ֆրանկ

Այս հատորը տպուեցաւ՝ նիւթական աջակ-
ցութեամբ Պ. Դաւիթ Աւան-Իւզբաշեանցի .

Առանձին գրքոյկի ձեւով յոյս տեսաւ

Դ. ՎԱՐՈՒԺԱՆ

Զ Ա Ր Դ Ը

(1895—1896)

Ցպագր. 8. ՏՕՂՐԱՄԱՃԵԱՆ

Գին 50 սանթիմ

Դիմել՝ Librairie Gouttemberg

TIFLIS

ՏԻԱՐ ՅԱՐՈՒԹԻԻՆ ՈՒՆՃԵԱՆԻ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔ

ԻՐԱԻԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ՄԱՍՆ Ա. Բնական Իրաւագիտութիւն. 0,90 սնք.
ՄԱՍՆ Բ. Դրական » 0,50 »
ՄԱՍՆ Գ. Միջազգային » 0,90 »

Ընդ Մանկով

ՄԱՍՆ Դ. Պատմական Իրաւագիտութիւն

Տպագրութիւն՝ Սր. Զապար, Վեներսիկ

Հասցէ՝ Artaky Oundjian

22, Rue Milton, 22

Paris (IX)

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ԱՆԱՀԻՏ

- Թիւ 1. — Անարոյ Յրանս. Նախկուրի պարսեզը, (Հատուածներ), թարգմանեց Ա. Զօպանեան, Գին 1 ֆրանք, հեղինակին կենդանագրով .
- Թիւ 2. — Այֆրես սը Վիեննիի Քերթուածները, հեղինակին կենդանագրով, թարգմանեց Ա. Զօպանեան, Գին 1 ֆրանք, պանեան .
- Թիւ 3. — Օմար Խայեալի Բառեակները, քննական ուսումնասիրութեամբ մը պարսկերէն բնագրէն թարգմանեց Գ. Փառնակ, Գին 3 ֆրանք .

ԱՆԱՀԻՏ Ի բաժանորդագրութեան պայմանները

ԱՆԱՀԻՏԸ կը հրատարակուի ամիսը անգամ մը :

Բաժանորդագիրն է տարեկան՝ 10 ֆրանք (Ֆրանսա), 12 ֆրանք (օտար երկիրներ), 2 տոլար (Ամերիկա), 2 ռուպլի (Ռուսիա) :

Վեցամսեայ՝ 5 ֆրանք (Ֆրանսա), 6 ֆրանք (օտար երկիրներ), 1 տոլար (Ամերիկա), 3 ռուպլի (Ռուսիա) :

Յօդուած եւ բաժանորդագիրն ղրկել հետեւեալ հասցէին ,

A. TCHOBANIAN

17, Rue La Bruyère

Paris

« ԱՆԱՀԻՏ » Ի ԳՈՐԾԱԿԱՆՆԵՐԸ

| Թիճիկս | Պարոն Լեւոն Մելիք-Աղամեանց Օրբելեան փողոց, Թիւ 24 |
|---------------|--|
| Բազու | » Ստեփան Ալչրճեան |
| Ռուսնուզ | » Գառնիկ Մաղմանեան |
| Գառնիկ | » Արմենակ Ատիլեան |
| Ֆիլիպէ | » Թադէոս Հինդլեան |
| Գաւրիգ | » Վ. Բժշկեան |
| Ռօֆեկըն | » Տ. Մսաճեան |
| Իսր Բեմսգրիճ | » Գարրիէլ Մուշէղեան |
| Իսր Ռօքրքաուն | » Կ. Մալխասեան |
| Սէնրըլ Ֆօլս | » Նշան Մինասեան |
| Ձիւկօ | » Ս. Մուրատեան |
| Նեոուէ | » Յ. Արողեան |
| Ռւսրըր | » Յարութիւն Տ. Ուաչոյեան |
| Ճրէզնօ | » Գ. Նալչանտեան |
| Նիւ Պրիթէյն | » Ս. Մաչաթլեան |
| Փրովիտէն | » Աւագ Կաբապետեան |
| Նիւ,Շոբ | » Նդիա Գուզուճեան |